Թեմատիկ պլանավորում (միջին մակարդակ)
«Հայոց պատմություն» /ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսք /
10 -րդ դասարան
Շաբաթական 2 ժամ
Տարեկան 68 ժամ

Ներածություն		
Նպատակ		Նպաստել հայ պատմագիտական անցած ուղու, հայկական քաղաքակրթության պատկերացման ձևավորման պատմաաշխարհագրական պայմանների, հայոց պատմության հիմնական աղբյուրների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա - Ներկայացնել հայ պատմագիտական անցած ուղին, հայոց պատմության պարբերաշրջանները, հիմնական աղբյուրները: - Բացատրել և առանձնացնել հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագ-րական պայմանները, հայկական լեռնաշխարհի վարչական բաժանումները և տարբեր դարաշրջաններում Հայաստանի քաղաքական-վաչական փոփոխություն-ները:
Ժամ	Էջ	Դաս
1/1	3-5	Ներածություն § 1.«Հայոց պատմություն»-ը ավագ դպրոցում
1/2	6-10	§ 2. Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները
Ա ՄԱՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (32 ժամ)		
ԲԱԺԻՆ 1 . ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ (3 ժամ)		
Նպատակ		Նպաստել Հայաստանի տարածքում նախնադարյան հասարակության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա՝ - ներկայացնել և բացատրել մարդու ծագումը՝ ըստ ժամանակակից պատկերացումների, - թվարկել նախնադարի փուլերը, ենթափուլերը և հնավայրերը և համադրել յուրաքանչյուր փուլի ձեռքբերումները, - բացատրել կրոնի առաջացման նախասկզբնական ձևերը, - գնահատել Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված արվեստի և գիտության նշանավոր հուշարձաններն ու գտածոները, - արժևորել նախնադարյան մշակույթի նվաճումները

		Հայաստանի տարածքում:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/3	12-15	§ 1. Հայկական Լեռնաշխարհը քարի դարից մինչև Ք.ա. IV հազարամյակը
1/4	16-19	§ 2. Պաշտամունքը: Արվեստը Գիտության տարրերը
ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԿԲՆԱՎՈՐՈՒՄԸ (4 ժամ)		
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (2 ժամ)		
Նպատակ		Նպաստել հայկական քաղաքակրթության սկզբնավորման և հայոց ծագումնաբանության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, հայերի ծագման տեղաբնիկության տեսությունը հայերի մասին ավանդազրույցները, արդի պատմագիտության մեջ հայերի ծագման հարցի վերաբերյալ, Հայաստանը տարբեր ժողովուրդների դիցաբանական պատկերացումներում, Հին Արևելքի սեպագիր սկզբնաղբյուրներում և Աստվածաշնչում Հայաստանի մասին վկայությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		***Կարողանա՝*** - Հիմնավորել հայերի ծագման տեղաբնիկության տեսության, Հին Արևելքի սեպագիր սկզբնաղբյուրների և Աստվածաշնչում Հայաստանի և հայերի մասին վկայությունների, հայկական, հնագույն միջագետքյան հունական և վրացական ավանդազրույցների վերաբերյալ տեղեկությունները: - ներկայացնել և մեկնաբանել Հայաստանի և հայերի մասին վկայությունները Հին Արևելքի սեպագիր սկզբնաղբյուրներում և Աստվածաշնչում:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/5	20-23	§ 1. Հայոց ծագումնաբանության հարցը
1/6	24-27	§ 2. Հայաստանի և հայերի մասին հնագույն գրավոր հիշատակությունները
ԳԼՈՒԽ 2. ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ (Ք.Ա. III ՀԱԶԱՐԱՄՅԱԿ - Ք.Ա. ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԿԶԲԻՆ) (2 ժամ)		
Նպատակ		Նպաստել Հայկական լեռնաշխարհում քաղաքակրթության սկզբնավորման, վաղ պետական կազմավորումների (Ք. ա. IV հազարամյակ - Ք.ա.I հազարամյակի սկիզբը)-վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա** - բացատրել և ամբողջացնել Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների ձևավորման գործընթացը, հայկական քաղաքակրթության առաջացման ակունքները, ժամանակաշրջանը վաղ պետական կազմավորումները (Ք.ա. III հազարամյակ Ք.ա. I հազարամյակի սկիզբը), - արժևորել Արատտան՝ որպես առաջին վաղ պետական կազմավորում,

		- համեմատել վաղ պետական կազմավորումները:
Ժամ	Էջ	Դաս
1/7	27-31	§ 1.Քաղաքակրթության սկզբնավորումը Հայկական լեռնաշխարհում
1/8	31-33	§ 2 Հայկական պետական կազմավորումները Ք.ա. III հազարամյակում և Ք.ա I հազարամյակի սկզբին
ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (16 ժամ)		
ԳԼՈՒԽ 1. ՎԱՆԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (3 ժամ)		
Նպատակ		Նպաստել Վանի թագավորության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, Վանի թագավորության ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա՝ - բացատրել Վանի թագավորության կազմավորման, հզորացման և անկման պատճառները, - ներկայացնել և բացատրել նշանավոր արքաների գործունեությունը, - ուրվագծել Վանի թագավորության պետական կարգի, քաղաքաշինության, բանակի կառուցվածքի, տնտեսության վերաբերյալ փաստերը, - արժևորել Վանի թագավորության դերը հայոց պատմության մեջ:
Ժամ	Էջ	Դաս
1/9	34-38	§ 1.Վանի թագավորության կազմավորումն ու հզորացումը: Արգիշտի I
1/10	39-42	§ 2.Վանի տերությունը Սարդուրի II- ի և նրա հաջորդների օրոք: Թագավորության անկումը
1/11	42-45	§ 3.Վանի թագավորության տնտեսությունը, պետական կարգը և բանակը
ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԶՈՒՆ - ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (4 ժամ)		
Նպատակ		Նպաստել Հայկազուն-Երվանդյանների թագավորության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, Հայկազուն-Երվանդյանների թագավորության կարևոր փաստերը, իրադարձությունները, նշանավոր գործիչների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա՝ - ներկայացնել և բացատրել Հայկազուն Երվանդյանների արքայատոհմի հաստատումը, թագավորության վերելքի պատճառները, արքաների գործունեությունը, տնտեսությունը, պետական կարգը, բանակի կառուցվածքը, - մեկնաբանել Ալեքսանդր Մակեդոնացու Արևելյան արշավանքի նշանակությունը Հայաստանի անկախացման գործու,մ - վերլուծել Հայկազուն Երվանդյանների թագավորության մասնատման հետևանքները, - բացահայտել Երվանդական թագավորության անկման

		պատճառները:
Ժամ	Էջ	Դաս
1/12	46-50	§ 1. Հայաստանը Ք.ա. VII դարավերջից մինչև Ք.ա. 330-ական թթ.
1/13	50-53	§ 2. Հայոց թագավորությունները Ք.ա. 331-201 թթ.
1/14	53-56	§ 3. Հայկազուն-Երվանդականների թագավորության տնտեսությունն ու պետական կարգը
1/15		Կրկնություն (1 ժամ)
ԳԼՈՒԽ 3. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (6 ժամ)		
Նպատակ		Նպաստել Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, թագավորության կարևոր փաստերը, իրադարձությունները, նշանավոր արքաների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա՝ - արժևորել արտաքին գործոնը ճկուն կերպով օգտագործելու Արտաշես ստրատեգոսի կարողությունը, - վերլուծել Արտաշես I–ի ներքին ու արտաքին քաղաքականությունը, գնահատել նրա գործունեությունը: - ներկայացնել Տիգրան Մեծի աշխարհակալ տերության աշխարհաքաղաքական բազմամշակութային, հասարակական միջավայրը, - գնահատել Տիգրան II-ի գործունեության արդյունքները և նշանակությունը: - գնահատել Արտավազդ II-ի որդեգրած արտաքին քաղաքականությունը: - քննարկել և ներկայացնել Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության օրոք հայ-պարթևական և հայ-հռոմեական քաղաքական առնչությունները և դրանց ազդեցությունը հայոց պետականության զարգացման վրա: - գնահատել Արտաշեսյան թագավորության դերը հայոց և համաշխարհային պատմության մեջ:
Ժամ	Էջ	Դաս
1/16	57-62	§ 1. Նոր հարստության հիմնումը: Արտաշես I
1/17	62-69	§ 2. Հայաստանը աշխարհակալ տերություն: Տիգրան II Մեծ
1/18	69-74	§ 3.Ռազմաքաղաքական նոր իրադրությունը Առաջավոր Ասիայում
1/19	74-78	§ 4. Հայաստանի պայքարն ընդդեմ Հռոմի ծավալապաշտական քաղաքականության: Արտավազդ II
1/20	78-80	§ 5. Արտաշեսյան թագավորության անկումը
ԳԼՈՒԽ 4. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՅԱՆՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ I-III ԴԱՐԵՐՈՒՄ (3 ժամ)		
Նպատակ		Նպաստել Մեծ Հայքի Արշակունիների թագավորության հաստատման և ամրապնդման վերաբերյալ գիտելիքների

		ձեռքբերմանը, թագավորության I - III դարերի կարևոր փաստերը, իրադարձությունները, նշանավոր արքաների գործունեությունը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - ներկայացնել և բացատրել Մեծ Հայքի թագավորությունը դրածո թագավորների օրոք հայ-պարթևական, հայ-հռոմեական քաղաքական առնչությունները և դրանց ազդեցությունը հայոց պետականության զարգացման վրա, - թվարկել հայ Արշակունի արքայատոմի արքաներին ըստ գահակալման ժամանակագրական հաջորդականության և համեմատել նշանավոր արքաների գործունեությունը, - ներկայացնել հայ Արշակունի թագավորների ժառանգական իշխանության հաստատումը, - վերլուծել և բացատրել Սասանյան հեղաշրջումից հետո հայ-պարսկական հարաբերությունների վատթարացման պատճառները, - նկարագրել Արշակունիների պետական կարգը և տնտեսությունը, քաղաքները, գյուղական բնակավայրերը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/21	81-84	§ 1. Հայաստանը և Հռոմի ու Պարթևստանի մրցակցությունը
1/22	85-88	§ 2. Մեծ Հայքի թագավորությունում Արշակունիների գահակալումը
1/23	88-91	§ 3. Մեծ Հայքը III դարում: Թագավորության հասարակական կյանքը
ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (8 ժամ)		
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ Ք.Ա. IX – Ք. Ա. III ԴԱՐԵՐՈՒՄ (3 ժամ)		
Նպատակ		Նպաստել մշակույթի զարգացման պայմանների, համահայկական թագավորությունների՝ Վանի թագավորության, Հայկազուն-Երվանդունիների ժամանակաշրջանների հոգևոր և նյութական մշակույթի նվաճումների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, վերլուծելու, մեկնաբանելու, համադրելու կարողությունների զարգացմանը
Վերջնարդյունքներ		**Կարողանա** - ներկայացնել և բացատրել մշակույթի զարգացման պայմանները, - թվարկել և ամբողջացնել Ք.ա. IX-Ք.ա. III դարերում ստեղծված մշակութային կարևոր նյութական արժեքները՝ քաղաքներ, կառույցներ, զինամթերքի տեսակներ, խեցեգործության նմուշներ և քարե գտածոներ, - ներկայացնել և գնահատել գրային համակարգերը, հայտնաբերված արձանագրությունները, ծեսերը, առասպելները, վիպերգերը, կրոնական համակարգերը և դիցարանը, հայոց հին հավատալիքները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/24	92-95	§ 1. Վանի թագավորության նյութական մշակույթը
1/25	95-97	§ 2. Համահայկական առաջին թագավորության հոգևոր մշակույթը

1/26	98-100	§ 3 . Հայկազուն-Երվանդունիների ժամանակաշրջանի հոգևոր մշակույթը
ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (5 ժամ)		
Նպատակ		Նպաստել հելլենիստական ժամանակաշրջանի մշակույթի զարգացման պայմանների, հելլենիզմին բնորոշ առանձնահատկությունների, հայկական հելլենիզմի փուլերի, հայոց դիցարանի, հայ հին դպրության, պատմագրության, գրականության, տոմարի, օրացույցի, բանահյուսության, թատրոնի, արվեստի և քաղաքակրթական նվաճումների մասին գիտելիքների ձեռքբերմանը և վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա - բացատրել հայ մշակույթին բնորոշ գծերը, - ներկայացնել հեթանոսական նոր պանթեոնը և համեմատել հունական դիցարանի հետ, - դասակարգել և արժևորել հելլենիզմի շրջանի ձեռքբերումները հայկական մշակույթի տարբեր բնագավառներում, - կարծիք հայտնել հելլենիզմի՝ հայկական մշակույթի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ, - գնահատել հայկական ազգային արժեհամակարգի առանցքը, սրբազան հայրենիքի պաշտամունք լինելը:
Ժամ	Էջ	Դաս
1/27	101-104	§1. Հայաստանը հելլենիստական դարաշրջանում
1/28	104-107	§2. Գիրը, պատմագրությունը, գրականությունը և տոմարը
1/29	108-109	§3. Ժողովրդական բանահյուսությունը և թատրոնը
1/30	110-114	§4. Արվեստը: Ազգային արժեհամակարգը և հին Հայաստանի քաղաքակրթական նվաճումները
1/31		Կրկնություն (1 ժամ)
1/32		Ամփոփում (1 ժամ)
Բ ՄԱՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ (34 ժամ)		
1/33	116	Ներածություն
ԲԱԺԻՆ 1 ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻՆ (10 ժամ)		
ԳԼՈՒԽ 1. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ: ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ (2 ժամ)		
Նպատակ		Նպաստել քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու անհրաժեշտության, հայոց եկեղեցու ստանձնած առաքելության, և ավատատիրական հասարակության դասերի, հողատիրության ձևերի, գործակալությունների, բանակի զորատեսակների, վաղ միջնադարյան Հայաստանի նշանավոր քաղաքների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա - թվարկել և մեկնաբանել միջնադարի փուլերը

		- ներկայացնել քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը կարևորելով հայոց եկեղեցու ստանձնած դերը, - հիմնավորել քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու հետևանքով ազգային և քրիստոնեական արժեքների համադրումը, արժեքային նոր համակարգի ձևավորումը, - թվարկել հողատիրության ձևերը և գործակալությունները, - բացատրել և գնահատել գործակալությունների դերը երկրի կառավարման բնագավառում, - տարբերակել ազատների և անազատների դասերը, պատկերել ավատատիրական աստիճանակարգը, - գնահատել բանակի դերը միջնադարյան հայկական պետականության կյանքում, - մեկնաբանել գյուղական համայնքների և մասնավոր տնտեսությունների դերն ու կարևորությունը հայոց պետության կյանքում, - արժևորել առևտրական կարևոր ճանապարհների դերը, - թվարկել և նկարագրել միջնադարյան Հայաստանի նշանավոր քաղաքները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/34	**117-120**	**§ 1. Քրիստոնեության հռչակումը պետական կրոն**
1/35	**121-125**	**§ 2. Ավատատիրության հաստատումը Հայաստանում**
ԳԼՈՒԽ 2. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՆՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ IV ԴԱՐՈՒՄ ԵՎ V ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ (3 ժամ)		
Նպատակ		Նպաստել IV և V դարի սկզբի Արշակունի արքաների, նրանց օրոք տեղի ունեցած ամենանշանավոր իրադարձությունների, հայ-պարսկական հարաբերությունների վատթարացման պատճառների, Հայաստանի առաջին բաժանման և Արշակունյաց թագավորության անկման պատճառների մասին գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա** - թվարկել Արշակունի թագավորներին գահակալման ժամանակաշրջանի հաջորդականությամբ և մեկնաբանել նրանց գործունեության առանցքային դրվագները, - մեկնաբանել առաջին հայ եկեղեցական ժողովը, - արտահայտել դիրքորոշում Պապ թագավորի գործունեության վերաբերյալ, - քննարկել Հայաստանի առաջին բաժանումը և հետևանքները, - արժևորել հայոց գրերի գյուտի պատմական նշանակությունը, - ներկայացնել և մեկնաբանել հայոց պետականության անկման պատճառները և հետևանքները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/36	**126-128**	**§1. Պայքար կենտրոնական իշխանության ուժեղացման համար**

1/37	129-134	§2. Արշակ II-ի և Պապ թագավորների քաղաքականությունը
1/38	135-137	§3. Հայոց Արշակունյաց թագավորության մայրամուտը
ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ (5 ժամ)		
Նպատակ		Նպաստել V դարում , Մեծ Հայքում Արշակունյաց թագավորության անկումից հետո, ստեղծված իրավիճակի՝ մարզպանական կարգավիճակի, կրոնափոխության վտանգի ու սպառնալիքների, Ավարայրի ճակատամարտի դերի ու նշանակության, արաբական արշավանքների, խալիֆայության դեմ ապստամբությունների մասին գիտելիքների ձեռքբերմանը, V-IX դարերի իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու , արժևորելու կարողությունների զարգացմանը :
Վերջնարդյունքներ		Կարողանա - բացատրել հայ նախարարական համակարգի դերը հայոց պետական կարևոր օղակների պահպանման գործում, - օգտվելով սկզբնաղբյուրներից և պատմագիտական գրականության մեջ առկա տեսակետներից վերլուծել և ներկայացնել սեփական տեսակետ V դարի ազատագրական պայքարի ղեկավարների և քաղաքական տարբեր գործիչների դիրքորոշումների վերաբերյալ, - վերլուծել և գնահատել V դարի ազատագրական պայքարի պատմական նշանակությունը, - վերլուծել VI դարում Հայաստանում Բյուզանդիայի և Պարսկաստանի վարած քաղաքականության հետևանքները, - մեկնաբանել VI դարում Հայոց եկեղեցու ինքնուրույնության պահպանմանն ուղղված քաղաքականության նշանակությունը, - գնահատել դեպի Հայաստան արաբների արշավանքների նպատակը, 652 թ. հայ–արաբական պայմանագրի պայմանները, նշանակությունը, - ներկայացնել Հայաստանում արաբների քաղաքակա-նության նպատակները և հիմնական ուղությունները, - համեմատել և հակադրել Մամիկոնյան և Բագրատունի իշխանական տոհմերի դիրքորոշումն ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ, - ներկայացնել Հայաստանի ինքնավարության վերականգնման համար հայ ժողովրդի մղած պայքարն արաբների դեմ և դրանց արդյունքները, գնահատել ազատագրական պայքարի ղեկավարների գործունեությունը. - վերլուծել արաբների դեմ VIII դարի ազատագրական պայքարի անհաջողության պատճառները. - վերլուծել և գնահատել 850-855թթ. համաժողովրդական ապստամբության պատմական նշանակությունը. - ներկայացնել Հայաստանի ինքնավարության վերականգնման ներքին ու արտաքին նախադրյալները:
Ժամ	Էջ	Դաս
1/39	138-143	§1. Արևելյան Հայաստանի մարզպանական կարգավիճակը:

		Վարդանանց պատերազմը
1/40	143-146	§ 2. Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը 481-484 թթ.
1/41	146-150	§3. Հայաստանը VI դարում
1/42	150-154	§ 4. Հայաստանը VII դարում
1/43	155-159	§5. Հայ նախարարական համակարգը արաբական խալիֆայության գերիշխանության շրջանում
1/44		Կրկնություն (1 ժամ)
ԲԱԺԻՆ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (10 ժամ)		
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՆՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (4 ժամ)		
Նպատակ		Նպաստել Բագրատունյաց թագավորության հիմնադրման, հայոց պետականության և անկախության վերականգնման մասին գիտելիքների ձեռքբերմանը, իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու , արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա - գնահատել Հայոց եկեղեցու դերը Բագրատունյաց թագավորության վերականգնման ամրապնդման գործում, - վերլուծել Անիի Բագրատունիների կենտրոնական թագավորության և տեղական թագավորությունների միջև եղած քաղաքական պայքարն ու ենթակայական հարաբերությունները, - գնահատել Բագրատունիների դարաշրջանի քաղաքական ազգային, հոգևոր կառույցների դերը, - վերլուծել և գնահատել Բագրատունյաց ժամանակաշրջանի պետական գործիչների գործունեությունը, - բնութագրել պետական կարգը, բանակի կառուցվածքը, տնտեսական կյանքի զարգացումը, նկարագրել քաղաքների զարգացումը, - մեկնաբանել և վերլուծել Բագրատունյաց թագավորության հզորացման և անկման ներքին ու արտաքին պատճառները:
Ժամ	Էջ	Դաս
1/45	160-164	§ 1. Հայաստանի անկախության վերականգնումը և ամրապնդումը
1/46	164-167	§ 2. Բագրատունյաց Հայաստանի վերելքը
1/47	168-172	§3. Պետական կառավարման համակարգը: Տնտեսության վերելքը
1/48	172-176	§4. Բագրատունյաց թագավորության մասնատումն ու անկումը
ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XI-XIV ԴԱՐԵՐՈՒՄ (2 ժամ)		
Նպատակ		Նպաստել Հայաստանում կենտրոնական թագավորության անկման հետևանքների, օտար նվաճողների դեմ պայքարի արդյունքների, Զաքարյան իշխանական տոհմի դերը Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների ազատագրման գործի մասին գիտելիքների ձեռքբերմանը, XI-XIV դարերի իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու , արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		Կարողանա ` - մեկնաբանել և վերլուծել Բագրատունյաց թագավորության

		անկման հետևանքները, - թվարկել XI-XIV դարերի կեսի հայկական թագավորությունները և իշխանությունները, - գնահատել Զաքարյան իշխանական տոհմի դերը և հայ-վրացական զինակցության նշանակությունը Հայաստանի հյուսիս - արևելյան շրջանների ազատագրման գործում, - ներկայացնել հայ ժողովրդի XI-XIV դարերի օտար նվաճողների արշավանքների և նրանց դեմ մղած պայքարի մի քանի կարևոր փաստեր, - Մեկնաբանել թյուրք-սելջուկների և մոնղոլների դեմ հայերի մղած պայքարի հետևանքները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/49	**176-179**	**§ 1. Հայաստանը XI դարի երկրորդ կեսին**
1/50	**179-182**	**§ 2. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ (XII- XIVդարեր)**
ԳԼՈՒԽ 3. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (4 ժամ)		
Նպատակ		Նպաստել Ռուբինյանների անկախ իշխանության առաջացման, Կիլիկյան թագավորության ստեղծման ներքին և արտաքին նախադրյալների, Հեթումյան և Լուսինյան արքայատոհմերի թագավորների գործունեության մասին գիտելիքների ձեռքբերմանը, Կիլիկիայի հայոց թագավորության ժամանակաշրջանի իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - գնահատել հայրենիքի՝ բնիկ տարածքներից դուրս պետականություն կերտելու հայ ժողովրդի ձգտումը - ներկայացնել և բացատրել Ռուբինյանների անկախ իշխանության առաջացման, Կիլիկյան թագավորության ստեղծման ներքին և արտաքին նախադրյալները, - թվարկել Կիլիկյան Հայաստանի իշխանությունները և նրանց կենտրոնները - ներկայացնել և գնահատել Կիլիկիայում հայկական թագավորության ստեղծման պատմական պայմանները և նշանակությունը - ներկայացնել և մեկնաբանել Կիլիկյան Հայաստանի պետական և հոգևոր նշանավոր գործիչների գործունեությունը, - ներկայացնել Ռուբինկյան, Հեթումյան և Լուսինյան արքայատոհմերի թագավորների գործունեության առանցքային դրվագները - Բացատրել մոնղոլների հետ դաշնակցելու՝ Հեթում I-ի քաղաքականության պատճառները - բացատրել դեպի Արևմուտք քաղաքական - շրջադարձի պատճառները, - մեկնաբանել Կիլիկիայում կրոնական-քաղաքական խմբավորումների դիրքորոշումները և փորձել գնահատել դրանց ազդեցությունը պետության հետագա ճակատագրի վրա - Բացատրել Կիլիկիայի հայկական թագավորության

		թուլացման ու անկման պատճառները և հետևանքները - համեմատել Բագրատունյաց թագավորության և Կիլիկիայի թագավորության տնտեսական և պետական կարգը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/51	183-185 186-189	§ 1. Հայկական պետականության ստեղծումը Կիլիկիայում § 2. Կիլիկյան Հայաստանի ամրապնդումը: Հայոց թագավորության վերականգնումը
1/52	190-193	§ 3. Կիլիկիայի հայկական թագավորությունը XIII- XIVդդ.
1/53	194-197	§ 4. Կիլիկյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները և պետական կարգը
1/54		Կրկնություն(1 ժամ)
ԲԱԺԻՆ 3. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (4 ժամ)		
ԳԼՈՒԽ 1. ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (XV դ. XVII դարի առաջին կես) (3 ժամ)		
Նպատակ		Նպաստել հայկական անկախության անկման, ազատագրական լեգենդների, Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռի վերականգնման, Հայաստանի ազատագրության պայքարի և հայկական իշխանությունների (Արցախի, Սյունիքի մելիքությունների, Զեյթունի իշխանության) մասին գիտելիքների ձեռքբերմանը, XV – XVII դարերի իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու , արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - նկարագրել օտար տիրապետության հետևանքները - գնահատել հայոց եկեղեցու գործունեությունը, բացատրել աղանդավորության ներկայավրած վտանգը, - բացատրել Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռն Էջմիածնում վերահաստատելու անհրաժեշտությունն ու նախադրյալները, և գնահատել Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի Էջմիածնում վերահաստատելու փաստը, - ներկայացնել քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XVI դարի սկզբին և Հայաստանը թուրք-պարսկական պատերազմների թատերաբեմում, - բացատրել XVI-XVII դարերի թուրք-պարսկական պատերազմների հետևանքները Հայաստանի համար և պայմանագրերի արդյունքները, - վերլուծել XVI-XVII դարերի թուրք-պարսկական տիրապետության տակ ապրող հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, ազգային, կրոնական և քաղաքական իրավիճակը, - վերլուծել 1604 թվականի հայերի բռնագաղթի պատճառները և հետևանքները, - բացատրել XV- XVI դարերում Հայաստանի ազատագրության համար պայքարի աշխուժացման պատճառները, ներկայացնել կարևոր դրվագները /Հայոց թագավորության վերականգնման

		փորձը Աղթամարում, - թվարկել Հայաստանում պահպանված կիսանկախ իշխանությունները և մելիքությունները և գնահատել նրանց դերը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/55	198-200	§1. Հայաստանը XV դարում
1/56	200-202	§2. Հայաստանը XV դարում և XVII դարի առաջին կեսին
1/57	204-206	§3. Հայաստանի ազատագրության համար պայքարի աշխուժացումը
ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ XV-XVII ԴԱՐԵՐՈՒՄ (1 ժամ)		
Նպատակ		Նպաստել գաղութ հասկացության բնութագրի, գաղթավայրի առաջացման պատճառների, ընդհանուր զարգացման փուլերի, հայկական գաղթոջախների գործունեության և տարբեր երկրներում նրաց դերի մասին գիտելիքների ձեռքբերմանը հայկական գաղթավայրերի XV-XVII դդ իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու , արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - ներկայացնել և բացահայտել գաղթօջախների առաջացման պատճառները, - թվարկել և ամբողջացնել հայկական գաղթավայրերի ընդհանուր պատմության փուլերը, - նշել այն երկրներ որտեղ կային հայկական գաղթօջախներ և արժևորել այդ գաղթօջախների դերը - նկարագրել գաղթավայրերում հայերի հիմնական զբաղվածությունը, - համեմատել կոնկրետ գաղթավայրերը և վեր հանել տնտեսության մեջ, կենցաղում, ընդունող պետության հետ հարաբերություններում և այլ ասպարեզներում եղած տարբերությունները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/58	206-209	§ 1. Հայկական գաղթավայրերի առաջացումը: Եվրոպայի և Ասիայի համայնքները
ԲԱԺԻՆ 4. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (8 ժամ)		
ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ-ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (3 ժամ)		
Նպատակ		Նպաստել Մեսրոպ Մաշտոցի , նախամաշտոցյան գրերի, գրերի դերի, դպրոցների, թարգմանչական գրականության, V դարի պատմիչների, փիլիսոփայության և այլ գիտությունն-ների, բնափիլիսոփայության, տիեզերագիտության, աշխարհագրության, իրավունքի, արվեստի և եկեղեցու կանոնական գրականության մասին գիտելիքների ձեռքբերմանը, ազգային քրիստոնեական մշակույթի ձեռքբերումները, մշակութային գործիչների գործունեությունը, մշակութային կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու , արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝**

		- ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի գործնեությունը և գնահատել գրերի գյուտի պատմական նշանակությունը, - արժևորել Վաղարշապատում, Արցախում, Սյունիքում և Արևմտյան Հայաստանում բացված դպրոցների խաղացած դերը ազգային արժեհամակարգի պահպանման գործում, - գնահատել հայ մշակույթի Ոսկեդարը, - ամբողջացնել և տարբերակել V – VIII դարերի հայ մշակույթի գործիչների աշխատությունները պատմագրության, փիլիսոփայության, աշխարհագրության, իրավունքի և եկեղեցական կանոնական գրականության բնագավառներում, - արժևորել վաղ միջնադարյան ժամանակաշրջանի ճարտարապետությունը, մանրանկարչությունը և արվեստի մյուս ճյուղերը:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/59	210-212	§1. Հայ գրերի գյուտը
1/60	213-215	§2. Հայ մշակույթի ոսկեդարը
1/61	215-218	§3. Մշակութային ձեռքբերումները VI – VIII դարերում
ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X-XIV ԴԱՐԵՐՈՒՄ (3 ժամ)		
Նպատակ		Նպաստել X-XIV դարերում դպրոցների, համալսարանի , պատմագիրների, իրավունքի և բնափիլիսոփաների, գրականության և արվեստի՝ ճարտարապետության, քանդակագործության , նկարչության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, X-XIV դարերում մշակույթի ձեռքբերումները, մշակությանի գործիչների գործունեությունը, մշակութային կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու , արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - պարզաբանել և գնահատել հայ մշակույթի վերելքի պատմական պայմանները, - ներկայացնել դպրոցների տեսակները և համալսարանների կառուցվածքը, կրթական գործի նշանավոր կազմակերպիչներին, - ամբողջացնել և տարբերակել X-XIV դարերի հայ մշակույթի գործիչների աշխատությունները՝ պատմագրության, բնափիլիսոփայության, իրավունքի և գրականության բնագավառներում, - արժևորել X-XIV դարերի հայ մշակույթի ճարտարապետությունը, քանդակագործությունը նկարչությունը և արվեստի մյուս ճյուղերը և կարևորել ձեռքբերումները հայկական մշակույթի զարգացման գործում:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/62	219-222	§1. Մշակույթի վերելքը: Կրթությունը
1/63	224-226 222-224	§2. Պատմագրությունը §3. Իրավունքը և բնափիլիսոփայությունը
1/64	226-229	§4. Գրականությունը և արվեստը
ԳԼՈՒԽ 3. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԴԺՎԱՐԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (XV-XVII դ. առաջին կես) (2 ժամ)		

Նպատակ		Նպաստել XV-XVII դ. առաջին կեսին հայ տպագրության ձևավորման, կրթության զարգացման, դպրոցների տեսակների, նշանավոր գործիչների, պատմագիրների, բնագետների, բժշկության, արվեստի կարևոր ճյուղերի մասին գիտելիքների ձեռբերմանը, XV-XVII դ. դարերում մշակույթի ձեռքբերումները, մշակութային գործիչների գործունեությունը, մշակութային կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու, արժևորելու կարողությունների զարգացմանը:
Վերջնարդյունքներ		**Կարողանա՝** - ներկայացնել հայկական մշակույթի պահպանման ու զարգացման հիմնական պայմանները, - արժևորել տպագրության սկզբանավորումը և զարգացումը հայկական գաղթօջախներում, - ներկայացնել և գնահատել XV-XVII դ. առաջին կեսին Հայաստանում և հայկական գաղթավայրերում գործող ուսումնական կենտրոնները և այնտեղ գործունեություն ծավալած գործիչներին, - ներկայացնել XV-XVII դարերի գիտության և արվեստի ճյուղերը, դրանց ակնառու ներկայացուցիչներին ու նրանց ստեղծագործությունները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
1/65	230-232	§1. Հայկական տպագրությունը: Կրթությունը
1/66	232-234	§2. Գիտությունը և արվեստը
1/67		Կրկնություն
1/68		Ամփոփում

Ներածություն

§ 1.«Հայոց պատմություն»-ը ավագ դպրոցում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ խնդիրներով է ներկայացված հայոց պատմություն առարկան ավագ դպրոցում։
2. Ի՞նչ պարբերաշրջանների է բաժանվում հայոց պատմությունը։
3. Ավագ դպրոցի դասագրքերից յուրաքանչյուրը Ի՞նչ պարբերաշրջան է ընդգրկում
4. Որո՞նք են հայոց պատմության հիմնական աղբյուրները։
5. Ըստ պատմական զարգացման դարաշրջանների աղբյուրների ի՞նչ տեսակներ կան։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայոց պատմության ծրագիրը ընդգրկում է հայկական քաղաքակրթության ամբողջական պատմությունը, դրա ակունքներից մինչև արդի ժամանակաշրջանը։ Այն հիմնականում ներկայացվում է պատմական կրթության շարունակականության և հաջարդականության ապահովման, հայրենի պատմության իմացության խորացման և ամրապնդման խնդիրներով։
2. Հայոց պատմությունը ընդգրկում է հետևյալ պարբերաշրջանները՝ հին շրջան՝ վաղնջական ժամանակներից մինչև ավատատիրական կարգերի հաստատման և պետականորեն քրիստոնեության ընդունման ժամանակաշրջանը՝ III դարի վերջը, միջնադար՝ IV դարից մինչև XVII դարի կեսերը, նոր պատմություն՝ XVII դարի կեսերից մինչև 1918թ. և նորագույն շրջան՝ 1918թ. մինչև մեր օրերը։
3. Ավագ դպրոցի 10-րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրքը ընդգրկում է հին շրջանը և միջնադարը, 11-րդ դասարանի դասագիրքը ընդգրկում է նոր շրջանը և նորագույն շրջանի մի մասը՝ մինչև 1920-1922 թթ, իսկ 12-րդ դասարանի դասագիրքը՝ նորագույն պատմության ընթացքը՝ 1922 թ. մինչև արդի ժամանակաշրջանը։
4. Հայոց պատմության հիմնական աղբյուրներ են հանդիսանում հնագիտական պեղումները, սեպագրերը, ասորական, վրացական, արաբական, բյուզանդական գրավոր աղբյուրները, հայալեզու հոգևոր-եկեղեցական, բանասիրական, պատմագիտական, բնագիտական և այլ բնույթի ձեռագիր մատյանները, մամուլը, ինչպես նաև տարբեր երկրների արխիվներից քաղած վավերագրերը։
5. Վաղնջական շրջանի մասին տեղեկություններ են տալիս հնագիտական պեղումները, բանահյուսական նյութերը, սեպագիր գրավոր աղբյուրները, հնագույն քարտեզները, Աստվածաշունչը, միջնադարի պատմության համար կարևոր աղբյուրներ են օտար աղբյուրները, մայրենի լեզվով գրված գրականությունը, ձեռագիր մատյանները, նոր և նորագույն շրջանի համար՝ տպագիր և հայալեզու մամուլը, գրականությունը և տարբեր երկրների արխիվներից քաղված աղբյուրները։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Առանձնացնել հայոց պատմության պարբերաշրջանները, պատմագիտության անցած ուղին։
2. Կարևորել օտարալեզու և հայերեն բազմազան պատմական աղբյուրները հայոց պատմության ուսումնասիրության գործում։
3. Տարբերակել աղբյուրների տեսակները՝ ըստ պատմական զարգացման դարաշրջանների։

§ 2. Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի բնական սահմանները:
2. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի և ՀՀ-ի ամենաբարձր լեռնագագաթները:
3. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերն ու գետերը, ինչ տեղեկություններ գիտեք դրանց մասին: :
4. Ի՞նչ վարչաքաղաքական մասերի է բաժանվել Հայաստանը պատմական տարբեր դարաշրջաններում:
5. Ըստ «Աշխարհացույցի» Մեծ Հայքը ի՞նչ վարչական բաժանման է ենթարկվել:
6. Ներկայիս Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը Մեծ Հայքի նահանգներից ի՞նչ տարածքներ է ընդգրկում:

9. Ինչպիսի՞ն են հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական լեռնաշխարհը հյուսիսից եզերվում է Կուր գետով, հարավից՝ Հայկական Տավրոսի լեռնաշղթայով և Հյուսիսային Միջագետքի հարթավայրով, հյուսիս-արևմուտքից՝ Պոնտոսի լեռներով, արևելքից սահմանակից է Կասպից ծովին, Իրանական բարձրավանդակին և Ուրմիա լճին, արևմուտքից՝ Փոքրասիական սարահարթին:
2. Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռը Արարատն է՝ 51615մ, Սիփանը 4434 մ, Սիսը՝ 3925 մ, ՀՀ-ում Արագած՝ 4096 մ , բարձրությամբ երկրորդ գագաթը՝ Կապուտջուղն է՝ 3906մ
3. Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերից է Սևանա լիճը՝ Գեղամա ծովը, որը հայտնի է քաղցրահամ ջրով, ծովի մակարդակից բարձր է 1916 մետր, Վանա լիճը՝ Բզնունյաց ծով, որն ունի 4 կողի՝ Աղթամար, Լիմ, Կտուց, Արտեր, ջուրը աղի և բազմանում է միայն տառեխ ձուկը, Ուրմիա լիճը՝ Կապուտան ծով, աղի ջրի պատճառով չունի ոչ մի տեսակի բուսական և կենդանական աշխարհ: Հայտնի գետերից են Եփրատը, Հայաստանի մասում ունի 500 կմ երկարություն, ունի երկու ճյուղ՝ Արևելյան Եփրատ՝ Արածանի, Արևմտյան Եփրատ, Ակն քաղաքի մոտ միախառնվում են: Հարավում միանում է Տիգրիսին թափվում Պարսից ծոց: Տիգրսը, որը Հայաստանով անցնում է 400 կմ ունի երկու ճյուղ՝ Արևմտյան և Արևելյան: Ճորոխը ունի 345 կմ երկարություն, թափվում է Սև ծով, իսկ Կուրը, որի երկարությունը 1113 կմ է Արաքսի հետ թափվում է Կասպից ծով: Արաքսը՝ Երասխ, հայոց մայր գետը, որը ունի 1000 կմ երկարություն, ամբողջապես հոսում է Հայաստանի տարածքով:
4. Ք.ա IV դարում հայտնի են դառնում Մեծ և Փոքր Հայքերը, ավելի ուշ Ծոփքը և Կոմագենեն դարձել են առանձին թագավորություններ, միջնադարում հայերը ստեղծել են պետություն նաև Կիլիկիայում 50000 քառ կմ տարածք:

5. Ներկայիս Հայաստանի Հանրապետությունը Մեծ Հայքի նահանգներից տարածքներ է ընդգրկում Սյունիք, Այրարատ, Գուգարք, Ուտիք աշխարհներից, իսկ Արցախի Հանրապետությունից Արցախ և Սյունիք աշխարհներից։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի սահմանները, բարձր լեռնագագաթները, խոշոր լճերը, գետերը, Հայաստանի պատմավարչական բաժանումները։
2. Թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Մեծ Հայքի 15 նահանգները։ Մեծ Հայքը ըստ «Աշխարհացույցի», բաժանվել է 15 նահանգների՝ աշխարհների, որոնք միասին ունեին 191 գավառ, ունեցել է 311 հազ. քառ, կմ։ Այդ աշխարհներն են՝ Գուգարքը, Տայքը, Բարձր Հայքը, Ծոփքը, Աղձնիքը, Տուրուբերանը, Կորդուքը, Մոկքը, Վասպուրականը, Պարսկահայքը, Փայտակարանը, Ուտիքը,Արցախը, Սյունիքը և Այրարատը։ Փոքր Հայքը ունեցել է 80 հազ. քառ. կմ տարածք։
3. Բացատրել, որ Հայկական լեռնաշխարհի իշխող բարձրադիր դիրքը ռազմավարական առավելություն է ապահովել շրջակա տարածքների նկատմամբ, արտաքին թշնամիներից պաշտպանվելու անհամեմատ առվելություններ է տվել լեռնաշղթաներով ու բարձրաբերձ սարերով կտրտված տեղանքը, նաև շեշտադրել, որ Հայաստանը միջազգային առևտրի և ինքնատիպ քաղաքակրթությունների հաղորդակցման խաչմերուկ էր։
4. Բացատրել և առանձնացնել տարբեր դարաշրջաններում Հայաստանի քաղաքական-վարչական փոփոխությունները։ Ք.ա IV դարում հայտնի են դառնում Մեծ և Փոքր Հայքերը, ավելի ուշ Ծոփքը և Կոմագենեն դարձել են առանձին թագավորություններ, միջնադարում հայերը ստեղծել են պետություն նաև Կիլիկիայում 50000 քառ կմ տարածք։

ՄԱՍ Ա ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (32 ժամ)

ԲԱԺԻՆ 1. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ (3 ժամ)

ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ (2 ժամ)

§ 1. Հայկական լեռնաշխարհը քարի դարից մինչև Ք.ա. IV հազարամյակը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որո՞նք են քարի դարի փուլերը, որքա՞ն է տևել այն Հայկական լեռնաշխարհում, և քարի դարի մարդկանց ի՞նչ բնակատեղիներ և ձեռքբերումներ գիտեք:
2. Ո՞րն է « Նեոլիթյան հեղափոխության նշանակությունը մարդկության պատմության մեջ:
3. Ո՞րտեղ է գտնվում Հայաստանի տարածքում հայտնաբերված պալեոլիթյան հնագույն կայանը, մարդկության վաղ երկրագործական և անասնապահական հնավայրը, Երկիր մոլորակի վրա մինչ օրս հայտնի հնագույն տաճարական համալիրը, և ինչո՞վ է հայտնի մարդկության վաղագույն քաղաքակրթության բնօրրանը :
4. Ի՞նչ էական փոփոխություններ կատարվեցին մարդկանց կյանքում նեոլիթի և էնեոլիթի դարաշրջաններում:
5. Ինչո՞ւ է բրոնզի դարից սկսվում մարդկության պատմության քաղաքակրթության ժամանակաշրջանը :
6. Որո՞նք են նախնադարի փուլերը, ենթափուլերը և որո՞նք են դրանց ձեռքբերումները
7. Հայկական լեռնաշխարհում ի՞նչ հայտնի հնավայրեր /բնակատեղիներ/ գիտեք:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Քարի դարի փուլերն են հին քարի դար, միջին քարի դար և նոր քարի դար: Քարի դարը Հայկական լեռնաշխարհում սկսվել է մոտ 3 միլիոն տարի առաջ և ավարտվել Ք.ա. VI հազարամյակի կեսերին: Հին քարի դարում բնակատեղիներ կային՝ Արտին լեռան վրա, Արզնիում, Երևանում, Ազոխում, Հատիս լեռան լանջերին, միջին քարի դարում հայտնաբերվել են հուշարձաններ Ապարանի գոգավորությունում, Ճորոխ, Եփրատ, Տիգրիս գետերի ավազաններում: Հատկապես նշանավոր է Շանիդարը / Կորդվաց աշխարհ/, որպես երկրագնդի վաղ հողագործական և անասնապահական առաջին հնավայրերից: Նոր քարի դարի ճարտարապետության հետքեր են հայտնաբերվել Աղձնյաց աշխարհում և Պորտաբլուրում, որտեղ բացվեց Երկիր մոլորակի մինչ օրս հայտնի հնագույն տաճարական համալիրը: Պղնձի-քարի դարյան բնակատեղիներ հայտնաբերվել են Առատաշենում, Ադաբլուրում և Ակնաշենում:
2. Հայաստանի տարածքում հայտնաբերված պալեոլիթյան հնագույն կայանը գտնվում է Գուգարքում (1,8 մլն տարվա հնություն), մարդկության վաղ երկրագործական և անասնապահական հնավայրը Շանիդարն է (Ք.ա IX հազարամյակ), Երկիր մոլորակի վրա մինչ օրս հայտնի հնագույն տաճարական համալիրը Պորտաբլուր հնավայրում է

հայտնաբերվել (Ք.ա X հազարամյակի կեսեր)։ Մարդկության վ աղագույն քաղաքակրթության բնօրրանը գտնվել է Հայկական լեռնաշխարհի և նրան հարավից հարող մերձակա տարածքներում, որը հնագիտական գրականության մեջ պայմանականորեն կոչվում է հայտնի է «Ոսկյա եռանկյունի»։ Պարզվել է, որ ցորենի, հաճարի, ոլոռի, սիսեռի և ոսպի մշակման սկզբնավայրը «Ոսկյա եռանկյունին» է։

3. Նախնադարի փուլերն են քարի դարը, որը իր հերթին բաժանվում է՝ հին քարի դար՝ պալեոլիթ, միջին քարի դար՝ մեզոլիթ, նոր քարի դար՝ նեոլիթ, պղնձի-քարի դարը, բրոնզի դարը։ Հին քարի դարի կարևոր ձեռքբերումներից էին բանական մարդու հանդես գալը, տոհմական համայնքի ձևավորումը, արվեստի ձևավորումը, միջին քարի դարի ձեռքբերումներից են ընտանիքի դերի մեծացումը, ցեղերի կազմավորումը, նետ ու աղեղի կիրառումը, վայրի կենդանիների ընտելացումը և բույսերի մշակումը, նոր քարի դարի կարևոր ձեռքբերումներից էին նստակեցությունը և արտադրող տնտեսության ձևավորումը, պղնձի-քարի դարինը՝ մետաղի արդյունահանումը և ձուլումը, բրոնզի դարից մադկության պատմության մեջ սկսվում է քաղաքակրթության ժամանակաշրջանը։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Պարզաբանել, որ մարդկության պատմության քաղաքակրթության ժամանակաշրջանը սկսվում է բրոնզի դարից, քանի որ այդ շրջանում սկսեցին առաջանալ վաղ պետական կազմավորումները և ձևավորվեց գրային համակարգը։
2. Համեմատել նեոլիթյան և էնեոլիթյան ժամանակաշրջանները։ Նեոլիթյան հեղափոխությունը մարդկության անցումն է վայրի քոչվորությունից նստակեցության, սպառող կենսաձևից արտադրող տնտեսության։ Նեոլիթյան հեղափոխության ձեռքբերումներից էր հողագործության, անասնապահության, արհեստագործության և պարզ փոխանակային առևտրի ձևավորումը։ Իսկ էնեոլիթյան ժամանակաշրջանում մարդիկ սովորեցին արդյունահանել և ձուլել մետաղը։ Մարդկությունը մուտք գործեց մետաղի դարաշրջան։
3. Համապատասխանեցնել նախնադարի փուլերն ու ենթափուլերը, ժամանակաշրջանը, կարևոր ձեռքբերումներն ու հնավավայրերը։

Նախնադարի փուլ	ժամանակաշրջան	Կարևոր ձեռքբերումներ	Հնավայրեր / բնակատեղիներ
Հին քարի դար /պալեոլիթ/	մոտ 2 միլիոն տարի առաջ և ավարտվել մոտ 100 հազար տարի առաջ	բանական մարդու հանդես գալը, տոհմական համայնքի ձևավորումը, արվեստի ձևավորումը	Արտին լեռան վրա, Արզնի, Երևան, Ազոխ, Հատիս լեռան լանջերին
Միջին քարի դար /մեզոլիթ/	Ք.ա. XII-X հազարամյակներ	ընտանիքի դերի մեծացումը, ցեղերի կազմավորումը, նետ ու աղեղի կիրառումը, վայրի կենդանիների	Ապարանի գոգավորությունում, Ճորոխ, Եփրատ, Տիգրիս գետերի ավազաններում։

		ընտելացումը և բույսերի մշակումը	Հատկապես նշանավոր է Շանիդարը / Կորդվաց աշխարհ/
Նոր քարի դար /նեոլիթ/	Ք.ա. X-VI հազարամյակներ	նստակեցությունը և արտադրող տնտեսության ձևավորումը	Աղձնյաց աշխարհ և Պորտաբլուր
Պղնձի-քարի դար	Ք.ա VI-IV հազարամյակներ	մետաղի արդյունահանումը և ձուլումը	Առատաշեն, Ադաբլուր և Ակնաշեն
բրոնզի դար		մարդկության պատմության մեջ սկսվում է քաղաքակրթության ժամանակաշրջանը	

2. Քարտեզի վրա ցույց տալ քարեդարյան հնավայրերը։

§ 2. Պաշտամունքը: Արվեստը : Գիտության տարրերը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչպե՞ս է առաջացել կրոնը և որո՞նք են կրոնի նախասկզբնական ձևերը:
2. Արվեստի և գիտության ի՞նչ նշանավոր հուշարձաններ ու գտածոներ են հայտնաբերվել Հայաստանի տարածքում:
3. Որո՞նք էին նախնադարյան մշակույթի նվաճումները Հայաստանի տարածքում:
4. Ի՞նչ դրսևորումներ ունեցավ գիտությունը Հայաստանի տարածքում:
5. Ինչպիսի՞ նվաճումներ ձեռք բերվեցին բնական գիտությունների զարգացման արդյունքում :
6. 7. Ովքե՞ր էին զբաղվում գիտելիքների ստեղծման, զարգացման և պահպանման գործով:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Կրոնը առաջացել է, քանի որ մարդիկ փորձելով հասկանալ բնության մեջ տեղի ունեցող երևույթները՝ այն վերագրում էին անտեսանելի գերբնական ուժերին և կատարում էին նրանց նվիրված ծեսեր, որպեսզի իրենց աստվածները բարեհաճ լինեն իրենց նկատմամբ: Կրոնի նախասկզբնական ձևերն են՝ տոտեմապաշտություն (տոտեմիզմ), ոգեպաշտություն (անիմիզմ), առարկայապաշտություն (ֆետիշիզմ) և հմայապաշտություն (մոգություն):
2. Հայաստանի տարածքում արվեստի և գիտության նշանավոր հուշարձաններ են՝ ժայռապատկերները, արևի և ջրի պաշտամունքը խորհրդանշող իրեր (արձանիկներ…): Հայաստանի տարածքում քարակոթողներ և ժայռապատկներ հանդիպում են Գեղամա, Վարդենիսի, Վասպուրականի, Կորդվաց, Հայկական Տավրոսի լեռնաշղթաներում, Սյունիքում, Արագածի փեշերին և այլուր:
3. Նախնադարյան մշակույթի կարևոր նվաճումներից էր գաղափարագրերի առաջացումը, տոմարի սկզբնավորումը, գիտության տարբեր բնագավառների ձևավորումը:
4. Ժայռապատկերման զարգացումով ծնունդ առան առաջին գրանշանները՝ գաղափարագրերը, զարգացան բնական գիտությունները:
5. Բնական գիտությունների զարգացման արդյունքում ծագեց լուսնային ամսվա գաղափարը, որի արդյունքում հնարավոր եղավ ժամանակը չափել ոչ միայն օրերով, այլև լուսնային ամիսներով, սկիզբ առավ նաև տոմարը: Աստիճանաբար ձևավորվեցին գիտության տարբեր բնագավառներին (մաթեմատիկա, աստղագիտություն, ֆիզիկա) վերաբերող նախնական գիտելիքներ:
6. Գիտելիքների ստեղծման, զարգացման և պահպանման գործով զբաղվում էին գլխավորապես քրմերը, ինչպես նաև տոհմացեղային վերնախավի ներկայացուցիչները:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Համեմատել կրոնի նախասկզբնական ձևերը:

2. Քարտեզի վրա ցույց տալ նախնադարյան մշակույթի նշանավոր հուշարձանների գտնվելու վայրերը Հայաստանի տարածքում։
3. Արժևորել նախնադարյան մշակույթի նվաճումները Հայաստանի տարածքում։

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԿԲՆԱՎՈՐՈՒՄԸ (4 ժամ)

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (2 ժամ)

§ 1. Հայոց ծագումնաբանության հարցը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որտե՞ղ է գտնվում հնդեվրոպական նախահայրենիքը։
2. Ինչո՞վ են առանձնանում հայերը հնդեվրոպական մյուս ժողովուրդներից։
3. Ի՞նչ ավանդազրույցներ գիտեք հայերի ծագման վերաբերյալ։
4. Ո՞ր իրադարձությամբ է հաշվվում Բուն Հայոց տոմարը։
5. Ի՞նչ տեղանուններ են առաջացել Հայկի և նրա ժառանգների անուններից։
6. Ե՞րբ է հայերենը անջատվել հնդեվրոպական ընդհանրությունից ։
7. Համեմատել հայոց նախաքրիստոնեական և քրիստոնեացված ավանդազրույցնեդրը։
8. Ինչպե՞ս է ներկայացվում հայերի ծագման հարցը արդի պատմագիտության մեջ։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հնդեվրոպական նախահայրենիքը գտնվում է Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջաններում։
2. Հայերը հնդեվրոպական ժողովուրդներից միակն են, որի ծագումն ու կազմավորումը տեղի է ունեցել հնդեվրոպական նախահայրենիքի տարածքում, հետևաբար հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկ տերերն ու ժառանգորդներն են։
3. Հայերի ծագման մասին ավանդազրույցներ են պահպանվել ոչ միայն հայ մատենագրության էջերում, այլև հունական, եբրայական, վրացական, արաբական , պարսկական, շումերա-աքքադական գրավոր հուշարձաններում և Աստվածաշնչում։
4. Բուն Հայոց տոմարը հաշվվում է Ք.ա. 2492թ օգոստոսի 11-ից, երբ Հայկը հաղթեց Բելին։
5. Հայերենը հնդեվրոպական ընդհանրությունից անջատվել է մոտ Ք.ա IV հազարամյակի վերջին։
6. Հայոց նախաքրիստոնեական ավանդազրույցի համաձայն հայ ժողովուրդը համարվել է Հայա աստծո և նրա որդի Հայկ դյուցազնի ժառանգը։ Ծագումնաբանության նոր տեսության համաձայն քրիստոնեացված ավանդազրույցում հայերը ներկայանում են որպես բնիկ ժողովուրդ Հայկական լեռնաշխարհում, որն իրենց հայրենիքն է, իսկ մնացած մարդկության՝ նախահայրենիքը։ Հայկ դյուցազնից ծագելու նախաքրիստոնեական ավանդազրույցը պահպանվեց և համապատասխանեցվեց Աստվածաշնչի պատկերացումներին, ըստ որի Հայկը Նոյի Հաբեթ որդու ժառանգներից Թորգոմի որդին է։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ներկայացնել հայերի մասին հայկական, հունական և վրացական ավանդազրույցները:

2. Համապատասխանեցնել անունը տեղանվան հետ:

Անուն	Տեղանուն
Հայկ	Հայաստան, Հայկաշեն
Արամայիս	Արմավիր
Արամանյակ	Արագածոտն
Արամ	Արմենիա
Արա Գեղեցիկ	Այրարատ
Երաստ	Երասխ
Ամասյա	Մասիս Մասյացոտն

3. Բացատրել, որ արդի պատմագիտության մեջ վերացավ հայերի եկվորության հարցը, քանի որ հաստատվեց, որ հնդեվրոպական նախահայրենիքը եղել է հենց այն տարածքում, որտեղ կազմավորվել և իր պատմությունն է կերտել ու կերտում հայ ժողովուրդը:
4. Արժևորել հայերի տեղաբնիկության փաստը:
5. Քարտեզի վրա ցույց տալ հնդեվրոպական նախհայրենիքը:

§ 2. Հայաստանի և հայերի մասին հնագույն գրավոր հիշատակությունները

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որտե՞ղ են պահպանվել առաջին պատմական վկայությունները Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների մասին։
2. Ի՞նչ անուններով են հիշատակվում Հայաստանն ու հայերը Միջագետքյան արձանագրություններում։
3. Ի՞նչ վկայություններ կան Աստվածաշնչում Հայաստանի մասին ։
4. Ինչպե՞ս է ներկայացվում Հայաստանը՝ տարբեր ժողովուդների դիցաբանական պատկերացումներում։շ
5. Ինչպե՞ս է մեծարվում Արատտա երկիրը տարբեր սկզբնաղբյուրներում։
6. Ի՞նչ պատկերացումներ են պահպանվել խեթական սկզբնաղբյուրներում Հայկական լեռնաշխարհի մասին։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Շումերական սեպագիր արձանագրություններում են պահպանվել առաջին պատմական վկայությունները Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների մասին, որոնք վերաբերում են Ք.ա. XXVIII-XXVII դարերին՝ հիշատակելով Արատտա երկիրը։
2. Հայաստանն ու հայերը Միջագետքյան արձանագրություններում հայտնի են Արատտա, Հայա, Սուբուր (Սուբարի, Սուբարտու) և Արման(ի) անուններով։
3. Աստվածաշնչում վկայություններ կան, որ Հայաստանն է եղել Եդեմ-դրախտաշխարհը։
4. Հայաստանը ներկայացվում է տարբեր ժողովուրդների կողմից որպես անմահների երկիր, աստվածների բնակատեղի, սրբազնագույն տարածք, արևի հանգրվան, ջրհեղեղից հետո մարդկության վերածննդի երկիր։
5. Շումերական դյուցազնավեպում Արատտա երկիրը մեծարվում է «աստվածային սուրբ օրենքների երկիր» և «անմահների երկիր» պատվանուններով, որում անմահություն փնտրող հերոս Գիլգամեշը բռնում է «Ճանապարհը դեպի Արատտա»։ Նույն պատկերացումը գտնում ենք Ալեքսանդր Մակեդոնացուն նվիրված վիպասքում, ով կրկնում էր Գիլգամեշի ճանապարհը։ Շումերական մեկ այլ բնագրի համաձայն «Իմաստությունն ու արվեստը ցած են բերվել Արատտա երկրից»։
6. Խեթական սկզբնաղբյուրներում պահպանվել է Հայկական լեռնաշխարհի՝ արևի հանգրվանը լինելու մասին պատկերացումը, որի համաձայն արեգակը ծագում էր «Արևելյան ծովից»՝ Վանա լճից։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Վերաբերմունք արտահայտել Հայաստանի և հայերի մասին հնագույն հիշատակությունների վերաբերյալ;
2. Մեկնաբանել և արժևորել Հայաստանի և հայերի մասին վկայությունները Հին Արևելքի սեպագիր սկզբնաղբյուրներում և Աստվածաշնչում։

ԳԼՈՒԽ 2. ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ (Ք.Ա. III ՀԱԶԱՐԱՄՅԱԿ - Ք.Ա. I ՀԱԶՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲԻՆ) (2 ժամ)

§ 1.Քաղաքակրթության սկզբնավորումը Հայկական լեռնաշխարհում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ե՞րբ է տեղի ունեցել նախնադարից անցումը վաղ քաղաքակրթության Հայկական լեռնաշխարհում:
2. Ի՞նչ հատկանիշներ է ունեցել վաղ բրոնզիդարյան ժամանակաշրջանը Հայկական լեռնաշխարհում:
3. Ինչո՞վ է նշանավորվում գիտությունը Ք.ա.XXVIII-XXVI դարերում:
4. Ի՞նչ ժամանակաշրջանում է հայկական մշակույթը աննախադեպ տարածում ունեցել և որքա՞ն տարածք է ընդգրկել:
5. Ո՞րն է Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումը, ե՞րբ է գոյություն ունեցել, ի՞նչ պետական կառավարման ձև է ունեցել:
6. Արատտայում սանձված ձիերի մասին հիշատակումը ինչի՞ մասին է վկայում:
7. Շումերական բնագրերում ի՞նչ տեղեկություններ են պահպանվել Արատտայի մասին:
8. «Արմենիա» անվան ի՞նչ հնագույն տարբերակներ գիտեք:
9. Մեծ Հայքի ո՞ր աշխարհին է համապատասխանում Կուտիական երկիրը, ի՞նչ տարածք է ընդգրկել Կուտիական աշխարհակալությունը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական լեռնաշխարհում նախնադարից անցումը վաղ քաղաքակրթության տեղի է ունեցել վաղ բրոնզի դարում, որը սկսվում է Ք.ա IV հազարամյակի կեսերից և տևել շուրջ մեկ հազարամյակ:
2. Ժամանակի գիտության բացառիկ նվաճում է Մեծամորի աստղադիտարանը, որտեղից աստղային երկինքը դիտարկել են Ք.ա. 2800-2600 թթ. ընթացքում:
3. Ք.ա մոտ XXVIII դարում Հայկական լեռնաշխարհից տեղի է ունենում վաղ բրոնզիդարյան մշակույթի աննախադեպ մեծ տարածում, որը ընդգրկում էր շուրջ մեկ միլիոն քառակուսի կմ տարածք՝ Շենգավիթի մշակութային համալիր կենտրոնով (Երևանյան լճի ափին)
4. Առաջին անգամ գրավոր աղբյուրներում հիշատակվում են սանձված ձիեր Արատտայում (Ք.ա XXVIII-XXVII դարեր), որպես փոխադրամիջոց, ի դեպ՝ ձիավոր հեծյալ ռազմիկների առկայությունը բնորոշ է հնդեվրոպական աշխարհին:
5. Հայկական լեռնաշխարհի՝ մինչև օրս հայտնի առաջին վաղ պետական կազմավորումը Արատտան է, որի մասին տեղեկությունները վերաբերում են Ք.ա. XXVIII-XXVII դարերին և եղել է աստվածապետական (կրոնապետական) կարգերով երկիր:

6. Ըստ Շումերական բնագրերի Արատտայի մասին կարևոր տեղեկություն է պահպանվել բանակի և պարսպապատ մայրաքաղաքի մասին, ինչպես նաև սեփական գրի գործածության մասին (մեհենագիր հուշարձաններ)
7. Կուտիական երկիրը համապատասխանում է Մեծ Հայքի Կորդվաց աշխարհին (Կորճայք), հետագայում ստեղծվել է Կուտիական աշխարհակալությունը՝ ընդգրկելով Ամանոսի լեռներից, ձգվելով մինչև Էլամ, Հայկական լեռնաշխարհի հյուսիսից՝ մինչև Պարսից ծոց:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումները:
2. Թվարկել «Արմենիա» անվան հնագույն տարբերակները. Արման , Արմին, Արմանի, Արամ, Արամալի և այլն:
3. Բացատրել Արմենիա անվան մեկնաբանությունը:
4. Բացատրել բրոնզեդարյան ժամանակաշջանի հայկական մշակույթի առանձնահատկությունները, նշելով, որ Հայկական լեռնաշխարհը միավորվում է մեկ մշակութային գոտու մեջ, առկա էր զարգացած քաղաքաշինությունը, անցում կատարվեց նախնադարյան հասարակությունից դասային շերտավորում ունեցող հասարակության:
5. Արժևորել Արատտայի դերը՝ որպես առաջին պետական կազմավորում:

§ 2. Հայկական պետական կազմավորումները Ք.ա. III հազարամյակում և Ք.ա I հազարամյակի սկզբին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ տեղեկություններ կան պահպանված Ք.ա. XX-XVIII դդ. մետաղի առևտրի մայրուղու մասին:
2. Ի՞նչ կարևոր նշանակություն ունեցավ մետաղի լայն կիրառությունը:
3. Ի՞նչ գիտեք Միտաննի թագավորության մասին և ինչպե՞ս են հիշատակվում Միտաննիի թագավորները Մովսես Խորենացու մոտ:
4. Ի՞նչ գիտեք Հայասայի մասին և ի՞նչ է նշանակում Հայասա խեթերենում:
5. Ի՞նչ գիտեք Նաիրյան երկրների մասին և ինչպե՞ս է հիշատակվում Նաիրի երկիրը ասորեստանյան արձանագրություններում:
6. Ի՞նչ խոշոր պետական կազմավորումներ են հիշատակվում Ք.ա. IX դ. 80-70-ական թթ. Հայկական լեռնաշխարհում:
7. Ի՞նչ տեղեկություններ կան Արամ թագավորի մասին:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ք.ա. XX-XVIII դարերում Առաջավոր Ասիայի հյուսիսում գործում էր մետաղի առևտրի մայրուղին, որի հետ կապի մեջ են եղել Հայկական լեռնաշխարհի ավելի քան երեք տասնյակ բնակավայրեր և շուրջ մեկ տասնյակ իշխանություններ՝ Խախում, Ծուփանա (Ծոփք), Թեգարամա (Թորգոմա տուն) և այլն(նշել առնվազն երկուսը): /Թվարկել բոլորը/:
2. Ք.ա XVI դարում Հայաստանի հարավում և Միջագետքի հյուսիսում ստեղծվեց հնդեվրոպական Միտաննի թագավորությունը, որի արքաները կրում էին «Մեծ թագավոր» տիտղոսը: Միտաննին անկում է ապրում Ք.ա XIII դարում, Ասորեստանի հարվածներից: Մովսես Խորենացու մոտ Միտաննի թագավորները հիշատակվում են Հայկազուն նահապետների ու արքաների ցանկում:
3. Խեթական սեպագիր արձանագրություններում հիշատակվում է Հայասա երկիրը: Այն գտնվում էր Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում, որի կարևոր կենտրոններից էր Կումախան: Առաջին անգամ հիշատակվում է Ք.ա XIV դարում խեթական մի արքայի արշավանքների կապակցությամբ: Վերջին անգամ հիշատակվում է Ք.ա XIII դարի վերջին: Թագավորությունն ուներ իր արքունիքը, բանակը, քաղաքային կենտրոնները, դիցարանը:
4. Նաիրի երկրանունն առաջին անգամ հիշատակված է Ք.ա XIII դարի առաջին կեսին Ասորեստանի Սալմանասար I թագավորի կողմից: Այն ընդգրկում էր Վանա լճի շրջանը և նրանից դեպի հարավ ու արևմուտք ընկած տարածքների դաշնային հիմունքներով միավորված իշխանություններ: Ք.ա IX դարի, Ասորեստանի արձանագրություններում Նաիրին ներկայանում է որպես մեկ միասնական երկիր-պետություն: Հիշատակվում է «Նաիրի երկրում 250 քաղաք, իրենց զորավոր պարիսպներով»…

5. Նաիրի երկիրը ասորեստանյան արձանագրություններում անվանվում է «ընդարձակ, հպատակություն չճանաչող և անծանոթ երկիր»։
6. Ք.ա. IX դ. 80-70-ական թթ. Հայկական լեռնաշխարհում հիշատակվող խոշոր պետական կազմավորումներից են հարավում՝ Նաիրին, հյուսիսում՝ Ուրարտուն (Հայկազունների Արարատյան թագավորություն)։ «Ուրարտու»-ն «Արարատ» անվան ասորեստանյան տարբերակն է։
7. Ասորեստանյան աղբյուրներում Ք.ա 859-843 թթ. ընթացքում հիշատակվում է Արամ (Արամու, Արամե) արքան, որը դիմակայել է ասորեստանյան արշավանքներին և կատարել արշավանքներ դեպի Իրանի հյուսիսային շրջաններ և Փոքր Ասիա։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել մետաղի լայն կիրառման կարևորությունը տնտեսության և ռազմական գործի մեջ։ Կարևոր նշանակություն ունեցավ հատկապես մարտակառքերի կիրառումը։
2. Բացատրել Ուրարտու անվանումը։
3. Բացատրել, որ Հայասա երկրի անվան հիմքում հայ ժողովրդի ինքնանվանումն է։ Խեթերենում – (ա)սա մասնիկով կազմվում էին տեղանունները, այսինքն՝ Հայասա նշանակում է Հայք, Հայաստան։
4. Քարտեզի վրա ցույց տալ Ք.ա. II հազարամյակում և Ք.ա I հազարամյակի սկզբի հայկական պետական կազմավորումները։
5. Համեմատել վաղ պետական կազմավորումները։

ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (16 ժամ)

ԳԼՈՒԽ 1. ՎԱՆԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (3 ժամ)

§ 1.Վանի թագավորության կազմավորումն ու հզորացումը; Արգիշտի I

Թեմատիկ պլան

1. Ի՞նչ խոշոր համադաշնություններ կային Հայկական լեռնաշխարհի տարածքում Ք.ա IX դարի 30-ական թթ.
2. Ո՞վ է հիմնադրել Վանի թագավորությունը: Ո՞րն է նրա մայրաքաղաքը, ի՞նչ արձանագրություն է պահպանվել հիմնադրման մասին:
3. Ի՞նչ անուններով է հայտնի Վանի թագավորությունը տեղական, ասորեստանյան աղբյուրներում և Աստվածաշնչում:
4. Ի՞նչ բարեփոխումներ է իրականացրել Իշպուինի արքան և ռազմական ի՞նչ հաջողություններ է ունեցել:
5. Ի՞նչ հաջողություններ գրանցվեցին Մենուայի կառավարման տարիներին:
6. Ո՞ր արքայի օրոք է Վանի թագավորությունը հասել հզորության գագաթնակետին, և ի՞նչ շինարարական ու ռազմական գործունեություն է նա ծավալել:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Վանի թագավորությունը հիմնադրել է Սարդուրի Առաջինը (մոտ Ք.ա. 835-825 թթ), ով հիմնել է Տուշպա (Տոսպ, Վան) մայրաքաղաքը և դրա մասին թողել ասուրերեն արձանագրություն՝ իրեն ներկայացնելով որպես Նաիրի երկրի արքա, տիեզերքի արքա , արքաների արքա:
2. Ասորեստանյան աղբյուրներում Վանի թագավորությունը կոչվում է Ուրարտու, տեղական արձանագրություններում՝ Նաիրի և Բիայնիլի, իսկ Աստվածաշնչում՝ Արարատյան թագավորություն:
3. Սարդուրի Առաջինի որդի Իշպուինի արքան (Ք.ա 825-810 թթ) իրականացրեց գրային բարեփոխում՝ տեղական սեպագրի ստեղծումը, կրոնական բարեփոխում՝ միասնական դիցարանի ստեղծումը և արձանագրումը «Խալդյան դարպասի» վրա, ռազմական բարեփոխում՝ նախկին դաշնային աշխարհազորը փոխարինեց արհեստավարժ կանոնավոր բանակով: Ք.ա 820-ական թթ վերջին Ուրմիա լճի ավազանի հարավում նա ընդլայնեց թագավորությունը ներառելով Արդինի-Մուսասիր երկիրը, թագավորության հյուսիսային սահման դարձրեց Հայկական Պար լեռնաշղթան
4. Մենուայի օրոք (Ք.ա 810-786 թթ) Վանի թագավորությունը աննախադեպ վերելք է ապրում, հատկապես նշանավոր է 72 կմ երկարությամբ «Մենուայի ջրանցքի», կառուցումը, որը օգտագործվում է մինչ օրս: Հայկական Պարի արևելյան հատվածում ամրապնդվելուց հետո Արարատյան դաշտում, Արաքսի աջ ափին հիմնվում է ռազմավարական խոշոր հենակետ Մենուախինիլին: Մենուան արշավանքներ է կատարում դեպի հյուսիս-արևմուտք՝ Դիաուխի (Տայք), որը դարձնում է հարկատու: Հարավ-արևմտյան ուղղությամբ նա հաղթարշավով հասնում է մինչև Ասորեստան: Արևմուտքում հարկատու է դարձնում Մելիտեան (Մելիդ), իսկ Ուրմիա լճի հարավում

Մանայի թագավորությունը ընդունում է Մենուայի գերիշխանությունը: Մենուան Վանի թագավորությունը վերածում է գերտերության:

5. Արգիշտի I-ի օրոք (Ք.ա 786-764 թթ) Վանի թագավորությունը հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի: Նա արշավանքներ է կատարում դեպի Դիաուխի, իր տերությանն է միացնում Սևանա լճի ավազանի իշխանությունները, ամրապնդում դիրքերը Ուրմիա լճից հարավ-արևմուտք, արշավում դեպի Փոքր Ասիայի տարածք, կրկին գրավում Մելիտեան, արշավում դեպի Ալիշտու, հարավում հասնում է մինչև Պարսուա և Բաբելոնի երկիր՝ շրջափակման մեջ վերցնելով Ասորեստանը երեք կողմից՝ հյուսիսից, հարավից, արևելքից: Ք.ա 782թ Արարատյան դաշտում հիմնադրում է Էրեբունի ամրոցը: Արգիշտի I-ը առաջնորդությամբ ստեղծվում է Վանի աշխարհակալությունը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել Ք.ա IX դարի 30-ական թթ Հայկական լեռնաշխարհի տարածքում գոյություն ունեցած խոշոր համադաշնությունները՝ նշելով գտնվելու վայրերը: Ք.ա IX դարի 30-ական թթ. Հայկական լեռնաշխարհի տարածքում կային երեք համադաշնություններ՝ Արարատյան դաշտում, Սևանա լճի ավազանում, Սյունիքում և հարակից շրջաններում Էթիունի համադաշնությունն էր, որն ամենամեծն էր, լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում Դիաուխին (Տայք) և Վանա լճի ավազանում Նաիրին, որի հիմքի վրա ձևավորվեց Վանի համահայկական թագավորությունը:
2. Համապատասխանեցնել Վանի թագավորության արքաներին գահակալման տարեթվերի հետ:

Վանի թագավորության արքաներ	Գահակալման տարեթվեր
Սարդուրի	Ք.ա 835-825 թթ
Իշպուինի	Ք.ա 825-810 թթ
Մենուա	Ք.ա 810-786 թթ
Արգիշտի Առաջին	Ք.ա 786-764 թթ

3. Մեկնաբանել Իշպուինիի ռազմական բարեփոխումների նշանակությունը:
4. Համեմատել Մենուա և Արգիշտի I արքաների բարեփոխումները:
5. Գնահատել Մենուա և Արգիշտի I արքաների գործունեությունը:

§ 2.Վանի տերությունը Սարդուրի II- ի և նրա հաջորդների օրոք: Թագավորության անկումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ ռազմական հաջողություններ ունեցավ Սարդուրի II-ը
2. Սարդուրի II-ի օրոք մինչև ու՞ր էին ձգվում Վանի թագավորության սահմանները:
3. Ի՞նչ փոփոխություն կատարեց Սարդուրի II-ը կառավարման համակարգում :
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ ասուրա-ուրարտական բախումը Սարդուրի II-ի և Ռուսա I-ի օրոք:
5. Ինչո՞վ է հատկանշական Ուրարտուի վերջին ականավոր տիրակալ Ռուսա II-ի կառավարման ժամանակաշրջանը:
6. Ի՞նչ հիշատակություններ են պահպանվել Վանի վերջին թագավորների մասին:
7. Որո՞նք էին Վանի թագավորության անկման պատճառները:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Սարդուրի II-ը վերահաստատեց իր գերիշխանությունը Մելիտեայում, Սևանա լճի ավազանում, Արմե, Ուրմե երկրներում, Մանա երկրի վրայով արշավեց Բաբելոն, վերանվաճեց այն և հայոց աշխարհակալության սահմանը կրկին հասցրեց Պարսից ծոց: Առաջինն էր Վանի թագավորներից, որ դուրս եկավ Միջերկրական ծովի արևելյան ավազան, որը իրական է դարձնում Ասորեստանի լիակատար ոչնչացումը:
2. Վանի տերությունը ունեցել է տարածքային ամենամեծ աճը Սարդուրի II-ի օրոք (Ք.ա 764-735 թթ): Վանի տերությունը հյուսիսում հասնում էր Սև ծով, հյուսիս-արևելքում Կուր գետ, արևելքում Կասպից ծով, արևմուտքում Փոքր Ասիայի կենտրոնական շրջան, հարավում՝ Պարսից ծոց, հարավ-արևմուտքում՝ Միջերկրական ծով;
3. Սարդուրի II-ի և Ռուսա I-ի օրոք ասորեստանյան արքաներ Թիգլաթպալասար III-ի և Սարգոն II-ի ձեռնարկումներով Ք.ա 743-713 թթ մղած 30-ամյա պայքարի արդյունքում Ասորեստանին հաջողվեց վերականգնել իր դիրքերը, կրկին դառնալով Առաջավոր Ասիայի գերտերություններից մեկը
4. Ռուսա II-ը շարունակեց կառավարման համակարգի բարեփոխումը՝ համադաշնությունների համակարգից անցում կատարելով գերկենտրոնացված պետական կառավարման տարաձևին: Զարկ տրվեց քաղաքաշինությանը, հիմնվեցին կամ վերակառուցվեցին բազմաթիվ ամրոցներ, անցկացվեցին նոր ջրանցքներ, զարգացան արհեստներն ու առևտուրը:
5. Վանի մեզ հայտնի վերջին թագավորներն են՝ վերջին հստակ թվագրվող ուրարտական արքա Սարդուրի III-ը, ով ասորեստանյան արձանագրություններում հիշատակվում է Ք.ա. 643թ-ին, և Էրիմենայի որդի Ռուսա III-ը , որից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Վանա լճի արևելյան շրջանների և Արարատյան դաշտի հնավայրերից:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Սարդուրի II-ը վերացրեց կախյալ թագավորությունները՝ վերածելով պետության վարչական միավորների, դրանով համադաշնային կառավարման համակարգից անցում կատարեց կենտրոնացված պետության։
2. Վերհանել Վանի թագավորության անկման պատճառները (Վանի թագավորության անկման պատճառներ են հյուսիսից ասպատակող սկյութական ցեղերի հաճախակի հարձակումները և արքայատոհմի իշխանության թուլացումը, հիմքեր կան ենթադրելու, որ տեղի է ունեցել Վանի արքայատոհմից իշխանության անցումը հաջորդ արքայատոհմին Ք.ա 7-րդ դարի վերջին պալատական հեղաշրջման ճանապարհով)։
3. Արժևորել Վանի թագավորության դերը հայոց պատմության մեջ՝ որպես համահայկական առաջին թագավորություն։
4. Համապատասխանեցնել Վանի թագավորության արքաներին գահակալման տարեթվերի հետ։

Արքաներ	Գահակալման տարեթվեր
Սարդուրի II	Ք.ա 764-735 թթ
Ռուսա I	Ք.ա 735-մոտ 710 թթ
Ռուսա II	Ք.ա մոտ 685-645 թթ
Սարդուրի III	Ք.ա 643 թթ

§ 3.Վանի թագավորության տնտեսությունը, պետական կարգը և բանակը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Տնտեսության ո՞ր ճյուղերն էին զարգացած Ուրարտուում, ի՞նչն էր նպաստում դրանց վերելքին:
2. Պաշտպանական նպատակով ինչե՞ր են կառուցվել Վանի թագավորությունում:
3. Վանի թագավորությունում ի՞նչ հայտնի քաղաքներ կային և ինչպիսի կառուցվածք ունեին:
4. Ի՞նչ ոճով էին կառուցված Վանի թագավորության տաճարները:
5. Ե՞րբ է տեղի ունեցել անցումը համադաշնությունից կենտրոնացված պետության և ինչպիսի՞ պետական կառավարման համակարգ էր գործում Վանի թագավորությունում:
6. Վարչական ի՞նչ բաժանման էր ենթարկված Վանի թագավորությունը, և ի՞նչ գործակալությունների անվանումներ են հիշատակվում:
7. Ի՞նչ գիտեք ուրարտական բանակի կազմի մասին:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Մեծ թվով բերդ-քաղաքներ (Տուշպա, Մենուախինիլի), պաշտպանական ամրություններ, տասնյակ ամրոցներ են կառուցվել ողջ տերության տարածքում պաշտպանական նպատակով:
2. Վանի թագավորության խոշոր վարչատնտեսական կենտրոններ էին Էրեբունին, Արգիշտիխինիլին, Սարդուրիխինիլին, Թեյշեբաինին: Քաղաքի բարձրադիր մասերում միջնաբերդն էր, նրա շուրջը տարածվում էր բուն քաղաքը, որը սովորաբար պարսպապատվում էր:
3. Վարչական առումով պետությունը բաժանվում էր մարզերի, որոնք կառավարվում էին արքունի կառավարիչների կողմից: Հիշատակվում են մի շարք գործակալությունների անվանումներ՝ «աշխարհակալ», «գավառակալ», «սահմանապահ կուսակալ»:
4. Զորքի գերագույն հրամանատարը արքան էր, որին պատերազմի ժամանակ օգնում էին առաջին և երկրորդ սպարապետները: Ուրարտական բանակը կազմված էր հետևակից, հեծելազորից, մարտակառքից: Այն բաժանված էր երեք հազարանոց գնդերի, որոնք իրենց հերթին կազմված էին 50-ական զինվորից բաղկացած վաշտից:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Թվարկել գյուղատնտեսության ճյուղերը. Ուրարտուում զարգացած էին գյուղատնտեսությունը՝ երկրագործություն, անասնապահություն, արհեստները և առևտուրը:
2. Բացատրել, որ գյուղատնտեսության վերելքի համար կարևոր նվաճում է ոռոգման ջրանցքաշինական ցանցի ստեղծումը (Մենուայի ջրանցքը 72 կմ, Ռուսայի ջրանցքը 25

կմ, Թեյշեբաինի (Կարմիր բլուր)ամրոցի մոտ մինչ օրս պահպանված ջրանցքը), տնտեսության վերելքին նպաստեցին երկրի մետաղահանքերի շահագործումը և մետաղյա գործիքների օգտագործումը։

3. Բացատրել, որ Վանի թագավորության կառավարման համակարգում Ք.ա VIII-VII դարերում համադաշնությունից անցում կատարվեց կենտրոնացված պետության, որը վերածվեց միապետության և տևեց մեկ հազարամյակ։Վանի թագավորությունը հինարևելյան տիպի բացարձակ միապետություն էր։ Պետության գլուխ կանգնած էր թագավորը, որի իշխանությունը անսահմանափակ էր և ժառանգական։ Թագավորի ձեռքում էր կենտրոնացված գերագույն իշխանությունը, դատավարությունը, զինված ուժերի հրամանատարությունը։ Թագավորը համարվում էր Խալդիի ներկայացուցիչը երկրի վրա։ Թագավորին կից գործում էր ավագների խորհուրդը, որի անդամները արքայի «խորհրդականներն» էին։
4. Թվարկել և նկարագրել տաճարների տեսակները. Վանի թագավորության տաճարները մի քանի տեսակ էին, որոնցից մեկը Արդինի-Մուսասիրի հայտնի տաճարն էր, որի ոճը տարածվեց հետագայում ամբողջ աշխարհում։ Այդ ոճի նմուշներից է Գառնիի հեթանոսական տաճարը Հայաստանում։ Տաճարի մյուս տեսակը կոչվում է «Աստծո դարպաս» , այդպիսին էր «Միհերի դուռը»։
5. Համապատասխանեցնել Վանի թագավորության արքաներին և իրենց հիմնադրած քաղաքները։

Արքա	Հիմնադրած քաղաք
Սարդուրի I	Տուշպա- Վան
Մենուա	Մենուախինիլի
Արգիշտի I	Էրեբունի,Արգիշտիխինիլի
Սարդուրի II	Սարդուրիխինիլի
Ռուսա I	Ռուսախինիլի
Ռուսա II	Թեյշեբաինի

.

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԶՈՒՆ - ԵՐՎԱՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (4 ժամ)

§ 1. Հայաստանը Ք.ա. VII դարավերջից մինչև Ք.ա. 330-ական թթ.

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ե՞րբ, ո՞ւմ գլխավորությամբ է վերականգնվել Հայկազունիների տոհմի իշխանությունը և ի՞նչ տարածք է այն զբաղեցրել:
2. Ի՞նչ է հաղորդում Մովսես Խորենացին Պարույր Սկայորդու մասին:
3. Ու՞մ անունով է կոչվել Երվանդական արքայատոհմը և ինչ տեղեկություններ կան նրա մասին:
4. Ի՞նչ տարածք էր զբաղեցնում հայոց թագավորությունը Երվանդ Սակավակյացի օրոք:
5. Ո՞վ է Տիգրան I Երվանդյանը, ի՞նչ կարևոր գործունեությամբ է հայտնի:
6. Ի՞նչ տեղեկություններ է պարունակում Բեհիսթունյան արձանագրությունը և ի՞նչ անուններով է հիշատակվում Հայաստանն այդ արձանագրության մեջ:
7. Ե՞րբ է Հայաստանը ճանաչել Աքեմենյանների գերիշխանությունը և ի՞նչ կարգավիճակ ունեին Երվանդականները նրանց տիրապետության տակ:
8. Ո՞վ է Քսենեփոնը և Ի՞նչ տեղեկություններ է հաղորդել Հայաստանի մասին իր աշխատությունում:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ք. ա VII դարում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնվեց Հայկազունների ավագ ճյուղի իշխանությունը՝ Սկայորդու գլխավորությամբ, իսկ նրա որդի Պարույրը միավորեց Վանա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը:
2. Մովսես Խորենացին Պարույր Սկայորդու մասին հաղորդում է, որ Ք.ա. 612 թ. Պարույրը դաշնակցելով Մարաստանի ու Բաբելոնի հետ՝ ընդդեմ Ասորեստանի, ստացավ թագ Մարաստանի արքայի կողմից և դարձավ Հայաստանի թագավոր:
3. Երվանդ I Սակավակյացի (Ք.ա 580-570-ական թթ.) անունով կոչվեց Երվանդական արքայատոհմը, նրա օրոք հայոց թագավորությունն ուներ 40-հազարանոց հետևակ և 8 հազար հեծյալ զորք:
4. Երվանդ Սակավակյացի օրոք թագավորության սահմանները հյուսիս-արևելքում հասնում էին Կուր գետ, հյուսիս-արևմուտքում՝ Սև ծով, արևելքում՝ Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք:
5. Տիգրան I Երվանդյանը Երվանդ I-ի որդին էր, ով համագործակցելով պարսից արքա Կյուրոսի II Մեծի հետ, Ք.ա 553 թ սպանելով Աժդահակին՝ տապալեց Մարաստանը, այնուհետև Ք.ա 539 թ- դաշնակից զորքերի գլուխ անցած գրավեց Բաբելոնը և հայոց արքա լինելուց բացի դարձավ Կյուրոսի տերության արևմտյան կեսի փոխարքան:
6. Պարսից նոր արքա Դարեհ I –ի (Ք.ա 522-486) թթ գահ բարձրանալուց հետո տերության ժողովուրդներն ապստամբում են պարսիկների տիրապետության դեմ, այդ թվում նաև հայերը: Դարեհը ճնշում է այդ ապստամբությունները, որի մասին պատմում է նրա թողած Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունը:

7. Դարեհ I-ը Հայաստանի դեմ ձեռնարկում է 5 արշավանք, որի արդյունքում Ք.ա 521 թ-ին Հայաստանը ճանաչում է Աքեմենյանների գերիշխանությունը, դառնալով Աքեմենյան տերության 13-րդ սատրապություն: Որպես սատրապներ շարունակել են իշխել Երվանդականները, ովքեր հատել են սեփական դրամ և ունեցել են ներքին ինքնավարություն
8. Հույն զորավար և պատմիչ Քսենոփոնը, ով Ք.ա 401 թ. անցել է Հայաստանի տարածքով և նկարագրել է Հայաստանը իր «Անաբասիս» (հունարեն «Տասը հազարի նահանջը») աշխատության մեջ: Քսենոփոնը տեղեկացնում է, որ Հայաստանի սատրապը Օրոնտես Երվանդ II- ն էր, ով տերության մեջ ուներ բարձր դիրք և հատել էր սեփական պատկերով ոսկե դրամ, որն հասել է մեզ: Հայաստանի արևմտյան մասը ուներ իր կառավարիչը՝ հյուպարքոսը, ով ենթարկվում էր Երվանդ II-ին: Հայաստանը ներկայացնում է որպես հարուստ, հյուրընկալ ժողովուրդ ունեցող երկիր, տեղեկություններ է հաղորդում նաև գարեջրի մասին:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պոտք է կարողանա՝

1. Գնահատել Հայկազուն-Երվանդականների գլխավորությամբ համահայկական թագավորության ստեղծման պատմական նշանակությունը:
2. Համապատասխանեցնել Հայաստանի անվանումը Բեհիսթունյան եռալեզու արձանագրության տարբերակի հետ:

Լեզու	Տարբերակ
պարսկերեն	Հարմինույա
էլամերեն	Ուրարտու
բաբելերեն	Արմենիա

3. Արժևորել Երվանդականների դերը, որպես սատրապներ Աքեմենյան տերության կազմում:

§ 2 . Հայոց թագավորությունները Ք.ա. 331-201 թթ.

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ո՞վ էր Ալեքսանդր Մակեդոնացին, ի՞նչ տեղեկություններ են պահպանվել նրա Արևելյան արշավանքի մասին և ի՞նչ նշանակություն ունեցավ այն Հայաստանի համար։
2. Ի՞նչ դարաշրջան թևակոխեց Առաջավոր Ասիան Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո։
3. Ե՞րբ առաջացավ Սելևկյան տերությունը և ինչպիսի քաղաքական իրավիճակ ստեղծվեց Հայաստանի համար։
4. Ի՞նչ փաստեր կան Շամ արքայի կառավարման շրջանից։
5. Ի՞նչ հիմքեր կան ենթադրելու՝ Արշամի հզոր արքա լինելու մասին։
6. Ե՞րբ և ինչո՞ւ անկում ապրեց Երվանդական թագավորությունը, ո՞վ էր վերջին արքան։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Նշանավոր աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացին Մակեդոնիայի արքա Փիլիպոս II-ի որդին էր, ով Ք.ա 334 թ-ին անցնում է Հելլեսպոնտոսը և պարտության մատնում աքեմենյան վերջին տիրակալ Դարեհ III-ին։ Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ք.ա 331 թ-ին հոկտեմբերի 1-ին Գավգամելայի մոտ, որտեղ պարսկական բանակի աջ թևը առաջնորդում էին Երվանդ III-ը և Միթրաուստեսը։ Ճակատամարտը ավարտվեց Աքեմենյան տերության պարտությամբ, որից հետո վերականգնվում են Հայաստանի անկախությունը՝ Երվանդ III-ը՝ Մեծ Հայքում, իսկ Միթրաուստեսը Փոքր Հայքում։
2. Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո (Ք.ա 323 թ) Ք.ա 301թ նրա տերությունը բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակից Սելևկյան տերությունն էր, Հայաստանը մինչև Քա III դարի վերջը կարողացավ պահպանել իր անկախությունը, հակադրվելով Սելևկյաններին, որովհետև Մեծ և Փոքր Հայքերը գործում էին միասնաբար։
3. Ք.ա մոտ 260-240թթ իշխած Շամ (Սամոս) Երվանդականը Կոմագենեում կառուցում է Սամոսատ (Շամշատ) մայրաքաղաքը և հատեց դրամներ, որոնք մեզ հասած առաջին հայկական արքայական դրամներն են։
4. Ք.ա 240-220 թթ ին կառավարել է Շամի որդի Արշամը, ով Ծոփքում կառուցել է Արշամաշատ քաղաքը։Արշամի մասին կան տեղեկություններ, որ նա այնքան հզոր էր,որ կարողացել է ապաստան տալ սելևկյան տիրակալի դեմ ապստամբած նրա եղբորը։
5. Սելևկյան արքա Անտիոքոս III-ի զորքերը հայազգի զորավարներ Արտաշեսի և Զարեհի գլխավորությամբ Ք.ա 201թ արշավեցին Հայաստանի դեմ և նվաճելով Հայաստանը, վերջ դրեցին Հայկազունիների Երվանդական ճյուղի իշխանությանը Մեծ Հայքում։ Երվանդական վերջին արքա Երվանդ IV Վերջինը (Ք.ա 220-201) զոհվեց մայրաքաղաք Երվանդաշատի պաշտպանության ժամանակ։

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պոտք է կարողանա՝

1. Բնութագրել Ալեքսանդր Մակեդոնացու պատմական կերպարը և քարտեզի վրա ցույց տալ նրա տերության տարածքը։
2. Բացատրել, որ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով Առաջավոր Ասիան թևակոխեց հելլենիզմի՝ հունականության, դարաշրջանը։
3. Մեկնաբանել Ալեքսանդր Մակեդոնացու Արևելյան արշավանքի նշանակությունը Հայաստանի անկախության վերականգնման գործում։
4. Բացահայտել Երվանդական թագավորության անկման պատճառները։

§ 3. Հայկազուն - Երվանդականներիի թագավորության տնտեսությունն ու պետական կարգը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Տնտեսության ո՞ր ճյուղերն էին զարգացած Հայկազուն-Երվանդականների օրոք:
1. Ի՞նչ փաստեր են վկայում Հայաստանում գյուղատնտեսության և առևտրի զարգացման մասին:
2. Ի՞նչ միջազգային նշանակություն ունեցող առևտրական ճանապարհ էր անցնում Հայաստանով:
3. Որո՞նք էին Երվանդական Հայաստանի նշանավոր քաղաքները, ի՞նչ կառուցվածք և նշանակություն ունեին դրանք:
4. Հայկազուն-Երվանդականների պետությունը կառավարման ի՞նչ համակարգ ուներ:
5. Ի՞նչ տարածք էր ընդգրկում Հայկազուն-Երվանդականների թագավորությունը, վարչական ի՞նչ միավորներ են հիշատակվում Ք.ա IV դարում Հայաստանի տարածքում:
6. Ինչպիսի՞ կառուցվածք ուներ հայկական բանակը Հայկազուն-Երվանդականների օրոք:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկազուն-Երվանդականների օրոք զարգացել էին գյուղատնտեսությունը՝ անասնապահությունը, երկրագործությունը. հացահատիկային բույսերի մշակություն, այգեգործություն, խաղողագործություն, արհեստները. մետաղաձուլություն, կաշեգործություն, ներկերի արտադրություն, ներքին և արտաքին առևտուրը, դրամաշրջանառությունը:
2. Հույն պատմիչ Քսենոփոնը տեղեկություններ է հաղորդում Հայաստանի որպես գյուղատնտեսական ապրանքներով հարուստ երկիր և հայերի հյուրասիրության մասին: Միջազգային առևտրին Հայաստանի մանակցությամբ ջրային ճանապարհի մասին է վկայում Ք.ա V դարի հույն պատմիչ Հերոդոտոսը, ով հաղորդում է, որ առևտուրը Հայաստանի և Միջագետքի միջև կատարվում էր Եփրատ գետով:
3. Հայաստանով անցնում էր Հին աշխարհի մեծագույն մայրուղիներից մեկը՝ Արքայական ճանապարհը՝ 2400 կմ երկարությամբ, որը միջազգային նշանակություն ունեցող առևտրական ճանապարհ էր, և նրա 330 կմ անցնում էր Հայաստանի հարավ-արևմուտքով (15 կայան):
4. Հայկազուն-Երվանդականների թագավորության սահմանները հյուսիս-արևելքում հասնում էին Կուր գետ, հյուսիս-արևմուտքում՝ Սև ծով, արևելքում՝ Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք: Ք.ա IV դարում Հայաստանի տարածքում հիշատակվում են Մեծ և Փոքր Հայքերը՝ որպես առանձին վարչական միավորներ:
5. Հայկազուն-Երվանդականների օրոք ռազմադաշտ դուրս բերվող հայոց բանակի թիվը 48 000 էր՝ 8000 հեծելազոր, 40 000 հետևակ: Պատերազմի ժամանակ բանակը համալրվում էր աշխարհազորային զորամասերով, որոնք հավաքագրվում էին ազատ համայնական գյուղացիներից՝ գավառակալ իշխանների առաջնորդությամբ:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ թագավորության սահմանները:
2. Թվարկել քաղաքները՝ նկարագրելով դրանց կառուցվածքը: Երվանդական Հայաստանում նշանավոր քաղաքներ էին Երվանդականների մայրաքաղաքներ Արմավիրը, Վանը, Երվանդաշատը, սրբավայր-քաղաք Բագարանը: Քաղաքների գլխավոր հատվածը միջնաբերդն էր, որի շուրջը տարածվում էր պարսպապատ բուն քաղաքը: Քաղաքները դրամաշրջանառության կենտրոններ էին և առանցքային նշանակություն ունեին արքունի տնտեսության համար: Քաղաքային համայնքները պետությունից լայն ինքնավարություն էին ստանում որոշ հարկերից:
3. Բացատրել Հայկազուն-Երվանդականների պետության կառավարման համակարգը: Հայկազուն-Երվանդականների թագավորությունը բացարձակ միապետություն էր, արքան երկրի գերագույն տերն էր, զորքի գերագույն հրամանատարը, նրա իրավասություններն էին՝ պատերազմ հայտարարելը, պայմանագրեր կնքելը, քաղաքներ հիմնելը և անվանակոչելը: Ք.ա VII-VI երկրի արքան կրում էր «Հայոց թագավոր» տիտղոսը: Արքայից հետո երկրի կարևոր դեմքը քրմապետն էր, ով հոգևոր առաջնորդն էր, երկրի Մեծ դատավորը և արքայի գլխավոր խորհրդականը: Արքան երկիրը ղեկավարում էր արքունիքի և արքունի գործակալների միջոցով, հիշատակվում են զորավար-սպարապետներ, արքունի հացարարներ, մատռվակներ, դպիրներ և այլն: Ք.ա 521-331 թթ Հայաստանում շարունակում էին իշխել Հայկազուն-Երվանդականները սատրապի կարգավիճակով:
4. Համեմատել Վանի թագավորության և Հայկազուն-Երվանդականների սահմանները և պետական կարգը:

ԳԼՈՒԽ 3. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (6 ժամ)

§ 1. Նոր հարստության հիմնումը: Արտաշես I

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ հետևանքներ ունեցան Մագնեսիայի ճակատամարտը և Ապամեայի հաշտության պայմանագիրը Հայաստանի համար:
2. Ի՞նչ միավորիչ գործունեություն իրականացրեց Արտաշես 1-ինը, ո՞րն էր դրա նշանակությունը:
3. Ի՞նչ դիրքորոշում ուներ Արտաշես I-ը և ի՞նչ քաղաքականություն էր վարում տարածաշրջանում իր կառավարման ընթացքում:
4. Ի՞նչ գիտեք Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման մասին:
5. Ի՞նչ բարեփոխումներ կատարեց Արտաշես I արքան:
6. Արտաշեսը ի՞նչ պատվատիտղոսներով է հայտնի և ինչպե՞ս է պահպանվել ժողովրդի հիշողության մեջ:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հույն աշխարհագետ Ստրաբոնը տեղեկություններ է հաղորդում Արտաշեսի միավորիչ գործունեության մասին: Նա իր թագավորությանը միացրեց արևելքում՝ Փայտակարանը և Կասպեից երկիրը հյուսիսում՝ Գուգարքը, Արևմուտքում՝ Կարնո երկիրը, Եկեղիք և Դերջան գավառները, հարավում՝ Տմորիք երկրամասը, իսկ Ծոփքը և Կոմմագենեն միավորելու նրա ջանքերը հաջողություն չունեցան: Հայկական երկրամասերի վերամիավորումը ունեցավ ազգային-քաղաքական կարևոր նշանակություն:
2. Արտաշեսի օրոք Մեծ Հայքը Առաջավոր Ասիայի ազդեցիկ պետություններից մեկն էր: Երբ Ք.ա 183-179 թթ. պատերազմ բռնկվեց Փոքր Ասիայում մի կողմից՝ Պոնտոսի ու Փոքր Հայքի, իսկ մյուս կողմից՝ Կապադովկիայի, Բութանիայի ու նրանց դաշնակիցների միջև, Արտաշես I-ը պահպանելով չեզոքություն, ներազդեց կողմերի վրա և կնքվեց հաշտություն: Դիվանագիտական նուրբ ու ճշգրիտ քայլերով Արտաշեսը կարողացավ պայմանագրում հատուկ կետ մտցնել, որով Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը: Ք.ա 165 թ-ին նա հակահարված տվեց Սելեվկյան Անտիոքոս IV-ին, որը փորձում էր Հայաստանը ենթարկել Սելևկյաններին: Նա շարունակեց քայլերը Մերձավոր Արևելքում, այդ պետության դիրքերը թուլացնելու ուղղությամբ, այդ նպատակով նա օժանդակեց Մարաստանի հակասելևկյան ապստամբությանը(Ք.ա 162-160 թթ.), որը թուլացրեց Սելևկյան տերության հիմքերը:
3. Մայրաքաղաքի հիմնադրման մասին հիմնականում տեղեկություններ են հաղորդել Մովսես Խորենացին և Պլուտարքոսը: Արտաշատ մայրաքաղաքը հիմնադրվել է մոտ Ք.ա. 185 թ-ին Արարատյան դաշտում՝ Երասխ և Մեծամոր գետերի ջրկիցում: Արտաշատի տեղանքը ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը, որը ապաստան էր ստացել Հայաստանում: Արտաշատը մեծ, գեղեցիկ քաղաք էր, ուներ հզոր

պարիսպներ, անառիկ դիրք և գտնվել է ներկայիս Խոր Վիրապի շրջակայքում։ Հունահռոմեական պատմիչները այն անվանել են «Հայկական Կարթագեն»։

4. Արտաշես I-ը աստվածացվել է դեռևս իր կենդանության օրոք , մեծարվել է «Բարի», «Բարեպաշտ», «Աշխարհակալ» տիտղոսներով։ Նրա մասին ժողովուրդը ստեղծել է երգեր, վեպեր, որոնց մի մասը Խորենացին գրի է առել և հասցրել մեզ՝ «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ»։

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Վերլուծել Մագնեսիայի ճակատամարտի և Ապամեայի հաշտության պայմանագրի Հայաստանի համար ունեցած հետևանքները։ Հռոմի և Սելևկյան պետության միջև տեղի ունեցած Մագնեսիայի Ք.ա 190 թ. ճակատամարտի արդյունքում Սելևկյան Անտիոքոս III-կրեց պարտություն։ Ք.ա 189 թ. անկախ հռչակվեցին Մեծ Հայքը, Փոքր Հայքը և Ծոփքը ավելի ուշ՝ Կոմմագենեն։ Ք.ա 188թ . Հռոմի և Սելևկյանների միջև կնքվեց Ապամեայի հաշտության պայմանագիրը, որով փոխվեց ուժերի հարաբերակցությունը Արևելքում։ Ք.ա 189 թ. Մեծ Հայքում իրեն անկախ հռչակած Արտաշեսը հիմք դրեց նոր՝ Արտաշեսյան արքայատոհմին։ Նա հին աշխարհի ռազմական, քաղաքական նշանավոր գործիչ էր։
2. Թվարկել և նկարագրել Արտաշես I արքայի բարեփոխումները։ Ք.ա 180թ. Արտաշեսը հրապարակեց հրամանագիր հողային բարեփոխման վերաբերյալ, ըստ որի երկրի բոլոր հողերը բաժանվում էին համայնական և մասնավոր հողային տնտեսությունների միջև, որպեսզի կանխվեին ագարակատերերի կողմից համայնական հողերի յուրացումը։ Այդ նպատակով տեղադրվեցին հողաբաժան սահմանաքարեր, որոնց վրա արամեերեն արձանագրություններ են պահպանվել։ Կարևոր էր ռազմական բարեփոխումը, ըստ որի հայրենիքի սահմանները պաշտպանելու նպատակով ստեղծվեց 4 զորավարություն։ Երկրի կառավարումը իրականացնելու նպատակով ստեղծեց 120 գավառ, որոնց հունահռոմեական հեղինակներն անվանում են ստրատեգիա։ Կարգավորեց նաև արքունի գործակալությունները։ Հարևան հելլենիստական պետությունների օրինակով Արտաշեսը սահմանեց թագավորի և իր նախնիների պաշտամունքը, ճշգրտեց հայկական օրացույցը, հստակեցրեց հայկական տոմարը, գետերը դարձրեց նավարկելի։
3. Քարտեզի վրա ցույց տալ Արտաշատ մայրաքաղաքի տեղը։
4. Արժևորել Արտաշես I-ի կատարած բարեփոխումները։

§ 2. Հայաստանը աշխարհակալ տերություն: Տիգրան II Մեծ

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Արտաշես I-ի հաջորդները ինչպիսի՞ երկիր էին ժառանգել, և ո՞վ շարունակեց նրա միավորիչ գործունեությունը:
2. Քաղաքական ի՞նչ նպատակներ էին հետապնդում հայ-պոնտական մերձեցումը:
3. Ի՞նչ բովանդակություն ուներ հայ-պոնտական դաշինքը:
1. Ինչպիսի՞ ավարտ ունեցավ Պարթևստանի դեմ Տիգրան II-ի պատերազմը:
2. Ինչպե՞ս Տիգրան Մեծը բազմեց Սելևկյան գահին:
3. Ի՞նչ տարածք էր ընդգրկում Տիգրան Մեծի տերությունը, ինչպիսի՞ բնույթ ու կառուցվածք ուներ:
4. Ի՞նչ կազմ ուներ Տիգրան Մեծի տերության բանակը:
5. Ինչո՞ւ Տիգրանը ձեռնամուխ եղավ նոր մայրաքաղաքի կառուցմանը, և ի՞նչ գիտենք Տիգրանակերտի մասին:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Արտաշես I- ը իր հաջորդներին՝ Արտավազդ I- ին (Ք.ա.160-115 թթ.) , Տիգրան I-ին (Ք.ա. 115-95 թթ.), Տիգրան II-ին (Ք.ա.95-55 թթ..) թողել էր տնտեսապես և ռազմապես հզոր երկիր: Տիգրան II-ին հաջողվեց շարունակել իր պապի՝ Արտաշես I-ի միավորիչ գործունեությունը՝ Ք.ա 94թ-ին Մեծ Հայքին միավորելով Ծոփքը, այնուհետև՝ Կորդուքը:
2. Հայ-պոնտական դաշինքը , որը կնքվել էր Ք.ա 94 թ. Արտաշատում, նախատեսում էր.
   1. Հայաստանը գործողությունների ազատություն էր ստանում հյուսիսում, հարավում, արևելքում, իսկ Պոնտոսը՝ արևմուտքում:
   2. Կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Կապադովկիայի վրա, որի տարածքը պետք է ստանար Պոնտոսը, իսկ շարժական գույքը և բնակչությունը՝ Հայաստանը:
   3. Դաշինքն ամրապնդվում էր Տիգրան II-ի և Միհրդատի դուստր Կլեոպատրայի ամուսնությամբ:
3. Երբեմնի հզոր Սելևկյան թագավորությունը ապրում էր խոր ճգնաժամ, որի հաղթահարման ելքը երկրի ավագանին տեսնում էր արտաքին որևէ հզոր տիրակալի իշխանությունն ընդունելու մեջ: Առաջնությունը տրվեց Տիգրան Մեծին, ում առավելությունն այլ թեկնածուներից ռազմական հզոր ուժ ունենալու մեջ էր: Ք.ա 84 թ-ին հակական բանակը առանց լուրջ դիմադրության մտավ Ասորիք և այստեղ խաղաղությամբ իշխեց 17 տարի:
4. Հայկական տերությունը բազմազգ երկիր էր, ուր խոսում էին 15-ից ավելի լեզուներով: Երկիրը կազմված էր 3 կարգի հատվածներից: Առաջինը բուն հայկական հողերն են՝ (Մեծ Հայք, Կոմմագենե)՝ 360.000 քառ. կմ տարածք: Երկրորդը հպատակ թագավորություններն էին՝ Վիրք, Աղվանք, Մարաստան, Ադիաբենե, Օսրոյենե, Պալմիրենե, Փյունիկիա, Ասորիք, Կիլիկիա՝ շուրջ 400 հազ քառ. կմ տարածք: Երրորդը Հայաստանի քաղաքական

ազդեցության ոլորտում գտնվող երկրներն էին՝ Պարթևստան, Նաբաթեա, Հրեաստան, Ամուդարյայի ստորին ավազանի սկյութական ցեղերը, Պարսից Ծոցի և Կարմիր ծովի ափերին բնակվող արաբները՝ ավելի քան 2 մլն քառ. կմ տարածքով: Հայոց տերության տարածքը ենթակա երկրներով հանդերձ կազմում էր շուրջ 3 մլն քառ. կմ տարածք, որը տարածվում էր Եգիպտոսից և Կարմիր ծովի ափերից մինչև Կովկասյան Մեծ լեռները, Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով: Հայկական տերությունը հելլենիստական տիպի տերություն էր: Տնտեսապես ամենազարգացած շրջանը Ասորիքն էր՝ Անտիոք մայրաքաղաքով, որտեղ փոխարքա-կառավարիչ էր Տիգրանի զինակից Բագարատը: Հյուսիսային Միջագետքում փոխարքա էր Տիգրանի եղբայր Գուրասը, որի նստավայրը Մծբինն էր:

5. Արքայից արքա Տիգրան Մեծին հպատակ կամ նրա գերիշխանության տակ գտնվող երկրները պարտավոր էին հարկ վճարել և զորք տրամադրել: Տիգրան Մեծի տերության բանակն ուներ 300,000 զինվոր, որից 120.000-ը կազմում էր բուն հայկական զորքը:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Մեկնաբանել հայ-պոնտական մերձեցման քաղաքական նպատակները: Պոնտոսի արքա Միհրդատ VI Եվպատորը ուներ Փոքր Ասիայի երկրները գրավելու և մեծ հելլենիստական երկիր ստեղծելու ծրագիր, որի իրականացման գլխավոր խոչընդոտը Հռոմն էր: Ուստի Միհրդատ Եվպատորը որոշեց դաշնակցել Տիգրան II-ի հետ, ով Հռոմի հետ որևէ վիճելի խնդիր չուներ, սակայն հայ-պոնտական դաշինքը կնպաստեր Մեծ Հայքի աշխարհակալական ծրագրի իրագործմանը: Միհրդատն ու Տիգրան II-ը համաձայնության եկան, և Տիգրան II-ը Փոքր Հայքի հարցը (որը Ք.ա 112 թ ռազմակալվել էր Պոնտոսի կողմից) հետին պլան մղեց:
2. Բացատրել, որ հայ-պարթևական պատերազմը ավարտվեց Ք.ա 87 թ-ին, հայկական զորքերի կողմից աթոռանիստ Էկբատանի գրավումով, որը վճռեց պատերազմի ելքը: Արդյունքում կնքվում է հայ-պարթևական պայմանագիրը, ըստ որի պարթևները ճանաչում են Հայաստանի գերիշխանությունը, վերադարձնում են Հայաստանից խլված 70 հովիտները, հօգուտ Հայաստանի հրաժարվում են Մարաստանից և Հյուսիսային Միջագետքից: Պարթևական թագավոր Գոդերձ II-ը հրաժարվեց «արքայից արքա» տիտղոսից, որը կրելու էին Տիգրան Մեծը և նրա հաջորդները:
3. Բացատրել, որ Տիգրանը ձեռնամուխ եղավ նոր մայրաքաղաքի կառուցմանը, քանի որ հայկական տերության կազմավորումից հետո Արտաշատը մնացել էր տերության հյուսիսում, իսկ Անտիոքը բուն հայկական տարածքներից դուրս էր, անհրաժեշտություն առաջացավ նոր մայրաքաղաք հիմնելու: Տիգրանակերտը կառուցվել է Ք.ա 80-70-ական թթ Աղձնիք նահանգում: Մայրաքաղաք Տիգրանակերտը մեծ ու շքեղ քաղաք էր, ուներ արքունի պալատ, դիվանատուն, թատրոն և 120000 բնակչություն: Քաղաքի մասին վկայություններ են պահպանվել Ապպիանոսի և Պլուտարքոսի աշխատություններում: Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը իրար կապելու համար կառուցվեց «Արքունի պողոտան»
4. Համապատասխանեցնել արքան ու կառավարման տարեթվերը

Արքա	Գահակալման տարեթվեր
Արտաշես 1-ին	Ք.ա.189-160 թթ.
Արտավազդ 1-ին	Ք.ա.160-115 թթ.
Տիգրան 1-ին	Ք.ա. 115-95 թթ.
Տիգրան 2-րդ	Ք.ա. 95-55 թթ.

2.Քարտեզի վրա ցույց տալ Տիգրան II-ի նվաճած տարածքները և տերության սահմանները։

3. Արժևորել Տիգրան Մեծի ստեղծած տերության դերը հայոց պատմության մեջ։

§ 3. Ռազմաքաղաքական նոր իրադրությունը Առաջավոր Ասիայում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որո՞նք էին հայ-հռոմեական պատերազմի պատճառները և առիթը:
1. Ի՞նչ կարևոր ճակատամարտեր տեղի ունեցան հայ-հռոմեական պատերազմի առաջին փուլի ընթացքում, և ինչպիսի՞ արդյունք ունեցավ:
2. Ի՞նչ կարևոր իրադարձություններ տեղի ունեցան հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլի ընթացքում:
3. Ի՞նչ որոշում կայացրեց Տիգրան II-ը ստեղծված բարդ ռազմաքաղաքակն իրավիճակում:
4. Ե՞րբ, ու՞մ միջև և ի՞նչ պայմաններով է կնքվել Արտաշատի պայմանագիրը:
5. Ի՞նչ հիշատակություններ կան պահպանված Տիգրան Մեծի մասին, և ինչպե՞ս է արտացոլվել նրա կերպարը համաշխարհային արվեստում:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայ-հռոմեական պատերազմն ընթացել է երկու փուլով՝
   1) Ք.ա. 69-67 թթ.
   2)Ք.ա. 66թ.:
2. Հայ-հռոմեական պատերազմի առաջին փուլի սկզբնական շրջանում հռոմեացիները հաջողություններ ունեցան, ռազմակալեցին Ծոփքը, Ք.ա 69 թ հոկտեմբերի 6-ին հաղթանակ տարան Տիգրանակերտի ճակատամարտում: Իրավիճակը փոխվեց հաջորդ տարի՝ Ք.ա 68թ-ի սեպտեմբերի 22-ին Արածանիի ճակատամարտում հռոմեական զորքը կրեց պարտություն և ստիպված թողեց Հայաստանի սահմանները, Կորդուքը և Հյուսիսային Միջագետքը: Ք.ա 67 թ-ին հայկական զորքերը ազատագրեցին Ծոփքը, ներխուժեցին Կապադովկիա, Պոնտոսի Զելա քաղաքի մոտ հայ-պոնտական ուժերը պարտության մատնեցին հռոմեացիներին: Լուկուլլոսի պարտությունից հետո վերականգնվեց Հայկական տերության ռազմական հեղինակությունը, գերիշխանությունը վերականգնվեց Ասորիքում և Միջերկրական ծովի ափերին: Հռոմի առաջին գրոհը դեպի Հայաստան ձախողվեց, Լուկուլլոսը պաշտոնանկ արվեց, Արևելքում հռոմեական զորքերի հրամանատար նշանակվեց Գնեոս Պոմպեոսը:
3. Հայ-հռոմեական պատերազմի երկրորդ փուլը սկսվեց Պոմպեոսի դեպի Արևելք արշավանքով Ք.ա 66 թ-ի գարնանը: Հռոմի և պարթևների միջև կնքվեց Հայաստանի դեմ համագործակցության պայմանագիր, որի համաձայն պարթև արքա Հրահատ III-ը մտավ Հայաստան և պաշարեց Արտաշատը: Հայաստանի դաշնակից Միհրդատ Պոնտացին Հռոմից կրել էր պարտություն և Տիգրանը զրկվել էր իր գլխավոր դաշնակցից, և ստիպված էր հակահարված տալ և պարթևներին, և Հայաստան ներխուժած հռոմեական բանակին: Վտանգված էր պետականության գոյությունը, այս ծանր իրավիճակը ավելի է բարդացնում Տիգրան Կրտսերի կազմակերպած խռովությունը:
4. Տիգրան II-ը Պոմպեոսի կողմից արժանացավ հարգալից ընդունելության: Ըստ Արտաշատի պայմանագրի.

1) Հոգուտ Հռոմի՝ Մեծ Հայքը հրաժարվում է Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից, Կիլիկիայից։
2) Հայկական պետությունը պահպանում էր իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում։
3) Հայաստանից անջատվում էին Ծոփքն ու Կորդուքը , որտեղ թագավոր էր հաստատվելու Տիգրան Կրտսերը։
4) Մեծ Հայքը Հռոմին պետք է վճարեր մեծ ռազմատուգանք։
5) Հայաստանը հայտարարվում էր «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»։

5. Տիգրան Մեծի մասին կան հիշատակումներ Խորենացու, հռոմեացի պատմիչների, Ն. Ադոնցի և այլոց աշխատություններում։ Եվրոպական օպերային երաժշտության պատմությունից հայտնի են Տիգրան Մեծին նվիրված բազմաթիվ օպերաներ՝ իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, ռուսերեն։

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել հայ-հռոմեական պատերազմի պատճառները և առիթը։ Ք.ա I դարի սկզբին Հռոմեական հանրապետությունը ձգտում էր համաշխարհային տիրապետության և առաջին հերթին Փոքր Ասիայի նվաճմանը, որին ձգտում էր նաև Միհրդատ VI Եվպատորը։ Դա հանգեցրեց հռոմեա-պոնտական պատերազմի (Ք.ա 89-71թթ), որը ավարտվեց Պոնտոսի պարտությամբ։ Հայկական տերությունը Հռոմի առջևբ փակում էր դեպի Արևելք տանող ճանապարհները, որը անհանգստացնում էր Հռոմին, ուստի անխուսափելի էր բախումը։ Պարտված Միհրդատ Պոնտացին փախավ Հայաստան և Տիգրանը ապաստան տվեց նրան։ Հռոմեական զորավար Լուկոլոսի՝ Միհրդատին իրեն հանձնելու պահանջը մերժվեց Տիգրանի կողմից, որն էլ առիթ հանդիսացավ հայ-հռոմեական պատերազմի։
2. Բացահայտել Արտաշատի պայմանագրի կնքման պայմանները։ Տիգրան II-ը Հայկական պետությունը և անկախությունը պահպանելու համար գնաց զիջումների։ Ք.ա 66 թ. սեպտեմբերին Պոմպեոսի զորքը մոտեցավ Արտաշատին, սկսվեցին հայ-հռոմեական բանակցությունները, որի արդյունքում Արտաշատում կնքվեց հաշտության պայմանագիր։
3. Քարտեզի վրա ցույց տալ ճակատամարտերի վայրերը։
4. Գնահատել Արտաշատի հայ-հռոմեական պայմանագիրը, որ այն դիվանագիտական հաջողություն էր Հայաստանի համար, Հայաստանը պահպանում էր իր տարածքային ամբողջականությունը և պետական անկախությունը, Պոմպեոսը ճանաչեց Տիգրան Մեծի «Արքայից արքա» տիտղոսը և Հայաստանը դարձավ «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»։
5. Արժևորել Տիգրան Մեծի կերպարը հայոց պատմութփյան մեջ ։

§ 4. Հայաստանի պայքարն ընդդեմ Հռոմի ծավալապաշտ քաղաքականության: Արտավազդ II

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ե՞րբ և ի՞նչ միջազգային պայմաններում գահ բարձրացավ Արտավազդ II-ը:
2. Ի՞նչ դիրքորոշում ուներ Արտավազդ II –ը Կրասոսի պարթևական արշավանքի ընթացքում և ինչպե՞ս ավարտվեց արշավանքը:
3. Ինչպիսի՞ն էր Անտոնիոսի պարթևական և հայկական արշավանքի ընթացքը և արդյունքը:
4. Ինչպիսի՞ ճակատագրի արժանացավ Արտավազդ II –ը և իր ընտանիքը գերեվարությունից հետո:
5. Ի՞նչ իրադարձություններ հաջորդեցին Ակցիումի ճակատամարտին:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Արտավազդ II-ը (Ք.ա. 55-34 թթ.) գահ բարձրացավ միջազգային բարդ իրադրության պայմաններում՝ հռոմեա-պարթևական մրցակցության ժամանակաշրջանում: Մեծ Հայքի դիրքորոշումից էր կախված, թե որ տերությունը տիրապետող դիրք կստանա տարածաշրջանում, Արտավազդ II –ը հաճախ հակվում էր դեպի Պարթևստանը:
2. Հռոմում ձևավորված առաջին եռապետության անդամ Մարկոս Կրասոսը ստացավ Արևելքը, և Պարթևստանի դեմ արշավելու հրամանատարությունը: Նա ծրագրել էր ջախջախել պարթևներին և հասնել Հնդկաստան: Այդ պատերազմում Կրասոսը հույսեր էր կապում Հայաստանի հետ: Ք.ա 54 թ-ի գարնանը Ասորիքում տեղի ունեցած Արտավազդի և Կրասոսի հանդիպումը ամրապնդեց նրանց ռազմական ուժերի միավորումը: Սակայն պարթև արքա Օրոդես II–ի Հայաստան արշավելուց հետո Ք.ա 54թ-ի վերջին Արտավազդ II –ը փոխեց իր քաղաքական ուղղվածությունը և դաշինք կնքեց Օրոդես II –ի հետ: Կրասոսի պարթևական արշավանքը ավարտվեց Ք.ա 53 թ-ի մայիսի 6-ին Խառան քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտությամբ՝ Կրասոսի և իր որդու սպանությամբ:
3. Կրասոսի պարտության հետևանքով Հռոմի դիրքերը Արևելքում սասանվեցին, իսկ պարթևների հաջողությունները ստիպեցին Հռոմին հարթել ներքին ճգնաժամը: Ք.ա 43 թ Հռոմում կազմավորված երկրորդ եռապետության անդամ Անտոնիոսը ստացավ Արևելքը: Այդ ընթացքում խզվեց հայ-պարթևական դաշինքը և սպասվող հռոմեա-պարթևական ռազմական բախման ժամանակ Հայաստանը այլևս չէր կարող չեզոքություն պահպանել: Ք.ա 36 թ. Անտոնիոսը 100 հազարանոց զորքով արշավեց Արևելք, որը ավարտվեց անհաջողությամբ, Փրասպայի մոտ պարտություն կրելուց հետո իր բոլոր դժբախտությունների պատճառը բարդեց Արտավազդ II-ի վրա: Ք.ա 36 թ. աշնանը հռոմեական պարտված բանակը նահանջեց Հայաստան: Իր վարկաբեկված հեղինակությունը վերականգնելու նպատակով նա ծրագրում է գրավել և կողոպտել Հայաստանը, մի քանի անհաջող քայլեր ձեռնարկելուց հետո Անտոնիոսը Ք.ա. 34 թ.

արշավում է Հայաստան։ Արտավազդ II –ը ցանկանալով երկիրը զերծ պահել ավերածություններից, բանակցելու գնաց Անտոնիոսի հետ, բայց ընտանիքով գերեվարվեց։

4. Արտավազդ II –ի գերեվարությունից հետո Ալեքսանդրիայում Անտոնիոսը կազմակերպում է հաղթահանդես, որի ժամանակ պահանջում է հրապարակային ներում հայցել և խոնարհվել Կլեոպատրային։ Ըստ հույն պատմիչի հայոց արքան և իր ընտանիքը արժանապատիվ կեցվածք են դրսևորում և չներվելով Կլեոպատրայի կողմից նետվում զնդանը։
5. Հռոմում իշխանության համար պայքարող եռապետներ Անտոնիոսի և Օգտավիանոսի միջև Ք.ա 31 թ-ի սեպտեմբերի 2-ին Ակցիումի տեղի ունեցած ճակատամարտում Անտոնիոսը պարտվեց և փախավ Ալեքսանդրիա։ Հոկտեմբերին Կլեոպատրայի կարգադրությամբ Արտավազդ II –ը մահապատժի ենթարկվեց, որից հետո Անտոնիոսն ու Կլեոպատրան ինքնասպան եղան։

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ հռոմեական զորավարներ՝ Կրասոսի և Անտոնիոսի արևելյան արշավանքների ուղղությունները։
2. Բացահայտել Արտավազդ II-ի վարած արտաքին քաղաքականությունը հռոմեա-պարթևական հակամարտության ոլորտում։
3. Գնահատել Արտավազդ II-ի դերը հայոց պատմության մեջ։

§ 5. Արտաշեսյան թագավորության անկումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Հռոմի ծավալվելը դեպի Արևելք ի՞նչ նոր իրավիճակ ստեղծեց հայ-պարթևական հարաբերություններում:
2. Ի՞նչ արտաքին քաղաքականություն էր վարում Արտաշես II արքան:
3. Ի՞նչ իրադարձություններ հաջորդեցին Հայաստանում Արտաշես II արքայի գահակալությունից հետո:
4. Ինչպիսի՞ն էր Հայաստանի ներքաղաքական և արտաքին քաղաքական դրությունը վերջին Արտաշեսյանների օրոք:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Արտաշես II –ը Հայոց թագավորությանը միացրեց Ատրպատականի թագավորությունը, ուստի Արտաշես II –ի դրամների վրա կար «Արքայից արքա» մակագրությունը: Նա վարում էր շեշտված հակահռոմեական քաղաքականություն, և Հռոմը չէր կարող հանդուրժել ինքնուրույն և անցանկալի հայոց թագավորին: Ք.ա 27 թ-ին Հռոմում կայսր հռչակված Օկտավիանոսը փորձում էր հռոմեական գերիշխանությունը տարածել Առաջավոր Ասիայում, դա հնարավոր էր անել Արտաշես II –ին ասպարեզից հեռացնելու ճանապարհով: Ք.ա. 20թ.-ին Արտաշատում Արտաշես II –ը դավադրաբար սպանվեց, որից հետո հռոմեական զորքը մտավ Հայաստան իր հետ բերելով նոր թագավորին Արտաշեսի եղբորը՝ Տիգրանին:
2. Տիգրան III-ի (Ք.ա. 20-8 թթ.) օրոք Ատրպատականը անջատվեց Հայաստանից: Տիգրան III –ը ձերբազատվելով Հռոմի միջամտություններից՝ մերձեցավ Պարթևստանի հետ և սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն: Մեծ Հայքում Ք.ա 8-5 թթ. թագավորել է Տիգրան IV՝ որպես անկախ և ինքնիշխան միապետ:
3. Հռոմը շարունակում էր իր միջամտությունը Հայաստանի ներքաղաքական կյանքին: Ք.ա 5 թ-ին Օգոստոսը Հայաստանում գահընկեց է անում Տիգրան IV –ին թագավոր նշանակելով Արտավազդ III –ին (Ք.ա. 5-2 թթ.), ով երկիրը կառավարում էր հռոմեական օրենքներով և զբաղվում անզուսպ թալանով: Ք.ա 2թ-ին հայերը Տիգրան IV –ի գլխավորությամբ ապստամբում են և դուրս վտարում երկրից: Գահ է բարձրանում Տիգրան IV-ը իր քույր Էրատոյի հետ միասին (Ք.ա. 2-Ք.հ.1թթ): Շուտով Ք.հ 1թ-ին Մեծ Հայք ներխուժեցին սարմատական քոչվոր ցեղերը, որոնց դեմ պայքարում զոհվեց Տիգրան IV-ը, որի մահով անկում ապրեց Արտաշեսյան արքայատոհմը: Հայաստանում նոր արքայատոհմ հաստատելու հարցը և՛ ներքին խնդիր էր, և՛ Հռոմի ու Պարթևստանի մրցակցության առարկա:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Հռոմի ծավալվելը դեպի Արևելք և Հայաստանի ռազմակալումը փոխեցին քաղաքական իրադրությունը Առաջավոր Ասիայում, ինչն էլ ստիպեց Հրահատ IV- ին փոխել իր վերաբերմունքը Հայաստանի հանդեպ, քանի որ նա գիտակցում էր, որ Հայաստանից հետո իրենք են լինելու Հռոմի հաջորդ թիրախը: Այս հանգամանքը ստիպեց նրան քաղաքական ապաստան շնորհել թագաժառանգին և իր դստերը կնության տվեց նրան, ինչպես նաև ռազմական զգալի օգնություն տրամադրեց: Հայ-պարթևական բանակը Արտաշեսի գլխավորությամբ մտավ Հայաստան և դուրս շպրտեց հռոմեական լեգեոններին:
2. Համապատասխանեցնել Արտաշեսյան գահակալներին իրենց գահակալման տարեթվերի հետ:

Արքա	Գահակալման տարեթվեր
Արտավազդ II	Ք.ա. 55-34թթ
Արտաշես II	Ք.ա. 30-20թթ
Տիգրան III	Ք.ա.20-8թթ
Տիգրան IV	Ք.ա.8-5թթ
Արտավազդ III	Ք.ա.5-2թթ
Տիգրան IV և Էրատո	Ք.ա. 2- Ք.հ.1թթ

3. Վերհանել Արտաշեսյան արքայատոհմի անկման պատճառները:
4. Մեկնաբանել դեպքերի ժամանակակից հռոմեական պատմիչի խոսքերը. «Արևելքում ամենից շատ իրենց հոգսեր պատճառել են հայերը»:
5. Գնահատել Արտաշեսյան արքայատոհմի ունեցած դերը հայոց պատմության մեջ:

ԳԼՈՒԽ 4. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՅԱՆՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ I-III ԴԱՐԵՐՈՒՄ (3 ժամ)

§ 1. Հայաստանը և Հռոմի ու Պարթևստանի մրցակցությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Հռոմը Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո:
2. Ինչպե՞ս էին վերաբերվում դրածո թագավորներին Հայաստանում:
3. Ինչո՞ւ Հայոց ավագանին ընտրեց պարթևամետ քաղաքականություն:
4. Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները ինչպե՞ս անդրադարձան հռոմեա-պարթևական հարաբերությունների վրա:
5. Ի՞նչ ընթացք ունեցավ տասնամյա պատերազմը, և ինչպիսի՞ն էին դրա հետևանքները Հայաստանի համար:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո Հռոմը գահ էր բարձրացնում Արտաշեսյան արքայատոհմի հետ հեռավոր արյունակցական կապ ունեցող անձանց: Հռոմը Հայաստանի թագավոր է նշանակում Ատրպատականի արքա Արիոբարզանեսին, որով նա ընդդեմ իր ախոյան Պարթևստանի, Արևելքում ձեռք էր բերում Հայաստան-Ատրպատական միացյալ և ուժեղ թագավորություն:
2. Վաղարշ I Արշակունին Պարթևստանում գահ բարձրացավ (51-80թթ) այն ժամանակ, երբ Հայաստանը փնտրում էր դաշնակից: Նրա՝ Հայաստանում եղբորը՝ Տրդատին, գահ բարձրացնելու նկրտումները համընկան հայերի քաղաքական շահերի հետ: Հայոց ավագանին ընտրեց պարթևների առաջարկը, քանի որ նրանք միասին կարող էին հակահարված տալ Հռոմի ծավալապաշտական քաղաքականությանը Արևելքում, բացի այդ պարթևները չէին սպառնում հայկական պետականության գոյությանը:
3. 52 թ. հայ-պարթևական միացյալ ուժերի գլուխն անցած՝ Տրդատը գալիս է Արտաշատ և նստում հայոց գահին: Հայաստանում տեղի ունեցող դեպքերը Հռոմում դիտվեցին որպես կայսրության՝ Արևելքում վարած քաղաքականության անհաջողություն: Հռոմի Ներոն կայսեր(54-68թթ) հրամանով Արևելք է գալիս հռոմեական զորավար Կորբուլոնը որով էլ սկսվում հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմը(54-64 թթ):
4. Հռոմին հաջողվել էր Պարթևստանում ներքին խռովություններ հրահրել, ինչը ստիպում է Վաղարշին իր հիմնական ուժերը հեռացնել Հայաստանից: Այդ իրավիճակում Տրդատը խուսափում էր Կորբուլոնի հետ ուղղակի բախումից, մինչ Վաղարշը օգնության կգար: 58 թ. Կորբուլոնին հաջողվում է մտնել Արտաշատ և քանդել քաղաքը: 59 թ. Տիգրանակերտ շարժվող Կորբուլոնի զորքիը հանդիպեց հայերի դիմադրությանը: Հռոմեացիներին դիմադրում են նաև Լեգարդա ամրոցի մոտ, սակայն նրանց հաջողվում է գրավել ամրոցը: 61 թ. Կորբուլոնին փոխարինած Պետոս զորավարը շարժվում է Արևելք, իսկ հաջորդ տարի մտնում է Հայաստան ու շարժվում Տիգրանակերտ: Գլխավոր բախումը տեղի է

ունենում Հռանդեա (Եռանդ) կոչվող վայրում, որտեղ Պետոսը ընկնելով շրջապատման մեջ, կրեց խայտառակ պարտություն ու հաշտություն խնդրեց։

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ հայերը ոչ միայն չէին ընդունում դրածո թագավորներին, այլև օգտվում էին առիթից և գահ էին բարձրացնում հայազգի թեկնածուների։ Դրածոներից միակը Զենոն-Արտաշեսն էր(18-34 թթ), որը սիրվեց հայերի կողմից (Դրա համար նրան Արտաշես անունն էին տվել), գահընկեց չեղավ և մահացավ իր բնական մահով։
2. Պարզաբանել հայերի բացասական վերաբերմունքի պատճառները դրածո թագավորների նկատմամբ։ Դրածո թագավորները ոչինչ չէին անում երկրի բարօրության համար։
3. Վերլուծել հռոմեական բանաստեղծ Վերգիլիոսի հետևյալ խոսքերը՝ «Կամուրջներ չհանդուրժող Արաքս»։
4. Հիմնավորել Հայաստանի պարթևամետ դիրքորոշումը I դարի կեսերին։

§ 2. Մեծ Հայքի թագավորությունում Արշակունիների գահակալումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշիչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ներոն կայսրը ինչու՞ և ի՞նչ պայմանով համաձայնեց Տրդատին ճանաչել հայոց թագավոր:
2. Ինչպե՞ս է թագադրվել Տրդատը:
3. Ո՞ր քաղաքը Սանատրուկը դարձրեց գահանիստ և ինչո՞ւ:
4. Ինչո՞վ է նշանավորվել Վաղարշ I-ի գործունեությունը:
5 Ո՞ր թագավորից է սկսվել հայ Արշակունիների ժառանգական իշխանությունը: Ինչո՞վ է նշանավորվել Վաղարշ II-ի գործունեությունը:
6. Ի՞նչ իրադարձություններ տեղի ունեցան Խոսրով I-ի և Տրդատ II-ի գահակալման ընթացքում

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 65 թ. Տրդատը ուղևորվեց Հռոմ և մեծ հանդիսավորությամբ Ներոնի կողմից թագադրվեց հայոց թագավոր (66-88 թթ.) :
2. Սանատրուկը (88-110 թթ.) հիմնադրել է Մծուրք քաղաքը Արածանիի ափին, որը դարձրեց աթոռանիստ: Այստեղով անցնում էր Տիգրանակերտից Արտաշատ գնացող առևտրական և ռազմական կարևոր նշանակության ճանապարհը:
3. Հայոց թագավոր Վաղարշ I-ի օրոք, ով թագավորել է 117-140 թթ., Արարատյան դաշտում Շրեշ բլրի վրա տարածվող նախկին Վարդգեսավան գյուղաքաղաքը զարգանում և վերածվում է մեծ քաղաքի, որը ստանում է Վաղարշապատ անունը («Նոր քաղաք»), ի պատիվ Վաղարշ թագավորի: Այն դառնում է Արշակունյաց թագավորության երկրորդ մայրաքաղաքը:
4. Վաղարշ II-ին հաջորդում իր որդի Խոսրով I-ը, ում 215 թ. խաբեությամբ իր մոտ է կանչում Կարակալլա կայսրը և ձերբակալում: 216 թ. գահ է բարձրանում Տրդատ II-ը, որի գլխավորությամբ հայերը ջախջախում և Հայաստանից դուրս են վտարում Կարակալլայի զորքը: Հռոմեական կայսր Մակրինոսը թագ է ուղարկում Տրդատ II-ին և ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման Տրդատին է վերադարձնում նրա մորը՝ թագուհուն, ավարը և այն կալվածքները Կապադովկիայում, որոնք ստացել էր դեռևս Խոսրով I-ը:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Ներոն կայսրը, ձգտելով փրկել Հռոմի հեղինակությունը, 63 թ-ին Վաղարշ I-ին հայտնում է, որ եթե Տրդատն անձամբ մեկնի Հռոմ և թագը ստանա իրենից, ապա ինքը կճանաչի նրան Հայաստանի թագավոր:արևորել Հռանդեայի պայմանագրի դերը Հայստանում Արշակունյաց թագավորության հաստատման գործում:

2. Բացատրել, որ Վաղարշ II-ի (185-198 թթ.) օրոք Հայաստանը անկախացել էր և չեզոքություն էր պահպանում Հռոմում տեղի ունեցող գահակալական կռիվների նկատմամբ, որի շնորհիվ հայոց թագավորը հետագայում կարողանում է հաշտություն կնքել հռոմեական նոր կայսր Սեպտիմիոս Սևերոսի հետ: Վաղարշ II-ի օրոք Հայաստանն այնքան է հզորանում, որ հայ Արշակունիների թագավորական իշխանությունը դառնում է ժառանգական:
3. Մեկնաբանել հույն պատմիչ Արիանոսի խոսքերը Սանատրուկի մասին:
4. Ցույց տալ Վաղարշապատ և Մծուրք քաղաքների տեղը քարտեզի վրա:
5. Լրացնել աղյուսակը.

Արքա	Կառավարման տարիները	Շինարարական գործունեություն
Տրդատ I	66-88թթ	Գառնու ամրոցի վերակառուցում, Գառնիի Արեգ- Միհրի տաճարի կառուցում
Սանատրուկ	88-110թթ	Մծուրք քաղաքի կառուցում
Վաղարշ I	117-140թթ	Վաղարշապատ մայրաքաղաքի կառուցում
Վաղարշ II	185-198թթ	Վաղարշապատի կառուցապատում
Խոսրով I	198-215 թթ	
Տրդատ II	216-252 թթ	

§ 3. Մեծ Հայքը III դարում : Թագավորության հասարակական կյանքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. III դարի I կեսին Պարսկաստանում տեղի ունեցած փոփոխությունը ինչպիսի՞ անդրադարձ ունեցավ Հայաստանի վրա:
2. Ինչպե՞ս Մեծ Հայքը վերականգնեց իր անկախությունը:
4. Ինչպիսի՞ն էր պետական կարգը Արշակունիների օրոք:
3. Ի՞նչ նշանակությամբ քաղաքներ կային Արշակունյաց Հայաստանում:
4. Ինչ գիտեք Հայաստանի տնտեսական կյանքի վերաբերյալ:
5. Ի՞նչ կազմ ուներ բնակչությունը Մեծ Հայքում III դարում:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հռոմում ապաստանած Խոսրով II-ի որդի Տրդատը 287 թ. հռոմեական զորքի օգնությամբ եկավ Հայաստան և հաստատվեց հայոց գահին: Այդ ժամանակ սրվել էին պարսկա-հռոմեական հարաբերությունները Սասանյանները չէին ճանաչում Տրդատի գահակալությունը և 296 թ-ին պարսից Ներսեհ արքան պատերազմ սկսեց Հռոմի դեմ: Հայ-հռոմեական միացյալ ուժերը պարտության մատնեցին պարսից զորքին, որից հետո 298թ-ին Մծբինում կնքվեց հռոմեա-պարսկական 40-ամյա պայմանագիրը: Ըստ պայմանագրի Ներսեհը ճանաչում էր Մեծ Հայքի թագավորության անկախությունը և Տրդատը վերջնականապես հաստատվեց Մեծ Հայքի թագավորության գահին՝ պահպանելով Հայոց աշխարհի ամբողջականությունը:
2. Արշակունիների թագավորությունը միապետություն էր: Երկիրը ղեկավարում էր թագավորը՝ անսահմանափակ իշխանությամբ: Հայաստանում պարթև Արշակունիների մի ճյուղի հաստատումով ժամանակի ընթացքում այն դարձավ ժառանգական հայկական արքայատոհմ: Հայոց արքային էին ենթարկվում արքունի գործակալությունները:
3. Սանատրուկը Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող մայրուղու վրա կառուցեց Մծուրքը: Վաղարշ I-ը հիմնեց նոր մայրաքաղաք Վաղարշապատը: Տրդատ I-ի օրոք վերականգնված Արտաշատը շարունակում էր մնալ որպես մայրաքաղաք: Կային տնտեսական, մշակութային և արհեստների կենտրոններ հանդիսացող քաղաքներ՝ Վան, Երվանդաշատ, Արճեշ, Նախիջևան, Զարիշատ և այլն:
4. Տնտեսական կյանքը զարգացած էր ի հաշիվ գյուղատնտեսության, արհեստագործության, ներքին և արտաքին առևտրի վերելքի: Հայաստանի ազգաբնակչությունը ուներ միատարր ժողովրդագրական կազմ: Քաղաքներում կային առևտրով զբաղվող օտարների առանձին խմբեր (հույներ, ասորիներ, իրանցիներ և այլն):

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել III դարի I կեսին Պարսկաստանում տեղի ունեցած փոփոխությունների անդրադարձը Հայաստանի վրա: 226 թ. Պարսկաստանում գահ են բարձրանում Սասանյանները՝ տապալելով պարթև Արշակունիներին: Մեծ Հայքի հայ Արշակունիները հավատարիմ էին մնացել իրենց դաշնակից պարթև Արշակունիներին, ուստի Սասանյանները թշնամական դիրք էին բռնել հայերի նկատմամբ: Տրդատ II-ի գլխավորած պայքարը Սասանյանների դեմ չփրկեց պարթև Արշակունիներին: III դարի կեսերին Հռոմը ներքին խռովությունների հետևանքով չէր կարող զբաղվել արևելյան գործերով և Շապուհ I-ը գրոհում է Հայաստանի վրա: Տրդատ II-ը չկարողացավ դիմակայել Պարսկաստանին, ուստի 252թ-ին հեռացավ Հռոմեական կայսրության սահմանները: 260-ական թթ կեսերից Սասանյանները հայոց գահին էին բազմեցնում իրենց թագաժառանգներին և բռնի ուժով փորձում էին պարտադրել պարսից կրոնը՝ զրադաշտականությունը, հայերին:
2. Մեկնաբանել Հայաստանում ստեղծված իրավիճակը Խորենացու բնութագրմամբ («Ժամանակ անիշխանության»)
3. Գնահատել Մծբինի պայմանագրը՝ որով Սասանյանները ճանաչում էին Մեծ Հայքի անկախությունը:
4. Քարտեզի վրա ցույց տալ նշանավոր քաղաքները:

ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (8 ժամ)
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ Ք.Ա. IX – Ք. Ա. III ԴԱՐԵՐՈՒՄ (3 ժամ)

§ 1.Վանի թագավորության նյութական մշակույթը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Մշակույթի զարգացման ի՞նչ պայմաններ կային Վանի թագավորության շրջանում:
2. Ի՞նչ քաղաքներ են կառուցվել Վանի թագավորությունում և քանի՞ խմբի էին բաժանվում: Ի՞նչ կառուցվածք ունեին դրանք:
3. Ի՞նչ դրսևորումներ են ունեցել շինարարության զարգացումը Վանի թագավորությունում:
4. Մետաղամշակման ո՞ր ճյուղն էր զարգացած և ինչպե՞ս է այն արտահայտվել բանակի զինվորների սպառազինության մեջ:
5. Խեցեգործության ի՞նչ նմուշներ են պահպանվել Վանի թագավորությունում: Ի՞նչ դեր է ունեցել քարի մշակումը այդ շրջանում:
6. Որտե՞ղ են գտնվել որմնանկարների նմուշներ և ինչ բնույթ են դրանք կրել:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Վանի թագավորության քաղաքները բաժանվել են մի քանի խմբի՝ թագավորանիստ, վարչատնտեսական, պաշտամունքային և ռազմական նշանակություն ունեցող: Թագավորանիստ Տուշպա մայրաքաղաքին զուգահեռ զարգանում էին վարչատնտեսական կենտրոններ Արգիշտիխինիլին, Սարդուրիխինիլին (Հայկաբերդ), Թեյշեբաինի: Հայտնի պաշտամունքային քաղաքներից էին Արդինին, Կումենուն և Տուշպան: Կարևոր նշանակություն ունեին ռազմական հենակետային քաղաքները, ինչպես նաև զորանոցները, ախոռները, բերդերը, ռազմական ճամբարները: Վանի թագավորության քաղաքները կառուցում էին բարձր բլուրների շուրջ, որոնց գագաթներին բարձրանում էին պարսպապատ աշտարակներով միջնաբերդերը: Այստեղ կառուցվել են պալատներ և տաճարներ, կամուրջներ, այգիներ և բաղնիքներ:
2. Վանի թագավորության շինարվեստի դրսևորումներ են վիմափոր կառույցները, որոնց թվին են պատկանում ժայռափոր սանդուղքները, խորշերը, պաշտամունքային և դամբարանային քարայրները, թունելները: Տեղեկություններ են պահպանվել Վանի թագավորության բնակարանային ճարտարապետության և ջրանցքաշինության մասին ևս:
3. Մետաղամշակման զարգացման համար Հայկական լեռնաշխարհն ուներ հումքի մեծ պաշարներ, ինչի մասին վկայում են հնագիտական պեղումները և սեպագիր արձանագրությունները: Վանի թագավորությունում զարգացած էր զինագործությունը, որի մասին վկայում են պեղումների արդյունքում գտնված զինատեսակների օրինակները Մետաղագործ վարպետները պատրաստում էին նիզակներ, սաղավարտներ, զրահաշապիկներ, վահաններ, թրեր, գուրզեր, կացիններ և այլն:

4. Իրենց հմտությամբ և որակով մեծ արժեք են ունեցել խեցեգործ վարպետների աշխատանքները, նրանք պատրաստել են խեցանոթներ, որոնք ունեցել են բազմաբնույթ կիրառական նշանակություն: Վանի թագավորությունում կենցաղում լայնորեն օգտագործվում էր քարը, գետաքարերից և տուֆից պատրաստվում էին ծակիչներ, քերիչներ, իսկ «փափուկ» տեսակից՝ տաշտեր, խողովակներ, պանիր քամելու ձագարներ:Առավել հետաքրքիր են կնիքները, ինչպես նաև տարբեր ձևերի և չափերի քարե ուլունքները:
5. Այս շրջանի որմնանկարչությանը բնորոշ են կրոնական և աշխարհիկ բնույթի պատկերները, որոնք զարդարել են տաճարների, պալատների և այլ շինությունների պատերը: Որմնանկարչությունը հիմնականում ներկայացված է Կարմիր բլուրի, Ոսկեբլուրի և Էրեբունու նյութերով:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Մեկնաբանել մշակույթի զարգացման պայմանները: Համահայկական առաջին թագավորության ստեղծումով Հայաստանը թևակոխեց զարգացման նոր շրջան: Պետական կազմավորումների միավորումը մեկ միասնական պետության մեջ հանգեցնում է կենտրոնացված պետության, ինչն էլ նպաստում է մշակույթի զարգացմանը: Ձեռք են բերվում նվաճումներ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Դրանց թվում առավել կարևորվում են զարգացած պետական կառուցվածքը, կրոնական համակարգը, տնտեսական կյանքի բարձր մակարդակը:
2. Քարտեզի վրա ցույց տալ Վանի թագավորության հայտնի քաղաքներ՝ Տուշպա-Վանը, Արգիշտիխինիլին, Մենուախինիլին, Արդինին, Թեյշեբաինին, Սարդուրիխինիլին և այլ քաղաքներ :
3. Գնահատել Վանի թագավորության մշակույթի դերը հայոց պատմության մեջ:

§ 2. Համահայկական առաջին թագավորության հոգևոր մշակույթը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար

1. Ի՞նչ աղբյուրներից են ձևավորվել Վանի թագավորության կրոնի մասին պատկերացումները: Ի՞նչ տեղեկություններ են հայտնի:
2. Ի՞նչ գիտենք Վանի թագավորության դիցարանի մասին:
3. Որտե՞ղ են արձանագրվել և և ի՞նչ տեղեկություններ են պահպանվել ծեսերի մասին:
4. Ինչպիսի՞ գրային համակարգեր են կիրառվել Վանի թագավորության դարաշրջանում:
5. Ո՞ր գիտություններն են զարգացած Վանի թագավորությունում:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Վանի թագավոնության կրոնի ուսումնասիրման հիմնական աղբյուրներն են սեպագիր արձանագրությունները և պեղումներից հայտնաբերված պատկերազարդ հուշարձանները: Սեպագիր արձանագրությունների հաղորդած տեղեկություններում նշվում են աստվածների անունները, նրանց համար սահմանված զոհաբերությունները, պատմվում է տաճարների կառուցման մասին: Գրավոր տեղեկությունները լրացնում են պաշտամունքային առարկանարեն ու պատկերները:
2. Վանի թագավորության կրոնը բազմաստվածային էր: Վանի թագավորության դիցարանի մասին տեղեկություններ կան Միհերի դռան արձանագրությունում: Դիցարանի գլխավոր աստվածը Խալդին է, ով համարվում է Երկրի ու թագավորի հովանավոր աստվածը, իսկ Թեյշեբա և Շիվինի աստվածները Խալդիի հետ միասին կազմում են դիցարանի գերագույն եռյակը:
3. Վանի թագավորության ծեսերի մասին տեղեկություններ կան Միհերի դռան արձանագրությունում, որտեղ հիշատակված են տարվա ընթացքում կատարվող երեք տոնակատարություններ կապված այգեգործական աշխատանքների փուլերի հետ: Միհերի դռան արձանագրությունում թվարկված են Վանի թագավորության աստվածների անունները, նրանց մատուցվող զոհաբերությունների մասին և այլն: Վանի թագավորությունում կար նաև «Հոգիներ տեղափոխող աստծո» պաշտամունքը, ժայռափոր դամբարաններում մահացածին թաղելու սովորույթը, կատարվում էին կենաց ծառի պաշտամունքի հետ կապված արարողություններ:
4. Վանի թագավորության շրջանում օգտագործված գրային համակարգից հայտնի են սեպագիրը (ուրարտական, ասորեստանյան) և մեհենագիրը (տեղական ծագման): Այդ շրջանից պահպանվել են 1000 սեպագիր արձանագրություններ: Գրում էին ձախից աջ առանց տարանջատման: Մեհենագրային համակարգն ունի բնիկ տեղական ծագում և սերում է Հայաստանի նախնադարյան ժայռապատկերներից, կազմված էր 300 նշաններից: Պահպանվել է 1500 մեհենագրային արձանագրություն:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել բազմաստվածային կրոն, դիցարան, ասվածային գերագույն եռյակ, մեհենագիր հասկացությունները։
2. Արժևորել գրի դերը գիտության զարգացման գործում։ Գիրը նպաստեց գիտելիքների զարգացմանը, հատկապես լայն տարածում ունեցան երկրաչափական, աստղագիտական և վիճակագրական հաշվարկները Վանի թագավորության շինարարության և տնտեսության մեջ։
3. Բացատրել համահայկական առաջին թագավորության մշակույթի ազդեցությունը Հայաստանից դուրս։

§ 3.Հայկազուն-Երվանդունիների ժամանակաշրջանի մշակույթը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որտե՞ղ են հայտնաբերվել Երվանդունիների կառավարման շրջանի բնակավայրեր: Ի՞նչ նշանակություն ուներ Արմավիրը քաղաքը:
2. Ի՞նչպես է Քսենոփոնի նկարագրում հայկական գյուղերն ու բնակարանները:
3. Ինչի՞ մասին են վկայում արհեստագործական արտադրանքի նյութական նմուշների հայտնաբերումը երկրի տարբեր մասերում Հայկազուն-Երվանդունիների ժամանակաշրջանում:
4. Ի՞նչ վկայություններ կան Հերոդոտոսի աշխատության մեջ առևտրական կապերի մասին:
5. Ըստ հայոց հին հավատալիքների՝ ի՞նչ պաշտամունք են ունեցել հայերը:
6. Ի՞նչն է արտացոլված մեզ հասած առասպելների ու վիպերգերի մեջ:
7. Հայոց հնագույն աստվածները ի՞նչ համարժեքներ ունեին այլ երկրների դիցարաններում :

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Երվանդունիների ժամանակաշրջանի բնակավայրերի ճարտարապետության մասին տեղեկություններ ենք ստանում Արմավիրի, Վանի, Էրեբունի-Երևանի, Սամոսատի, Արշամաշատի, Երվանդաշատի, Բագարանի և այլ հնավայրերի ուսումնասիրության շնորհիվ: Արմավիրը վարչական, տնտեսական և պաշտամունքային կենտրոն էր:
2. Ք.ա. IV դարի վերջից Արմավիրը դարձել է համահայկական երկրորդ թագավորության մայրաքաղաք:
3. Հույն պատմիչ Քսենոփոնը նկարագրել է գյուղական բնակավայրերը: Բնակավայրերը կիսագետնափոր էին և ունեին երկու մուտք: Մեկը նախատեսված էր մարդկանց համար, մյուսը՝ անասունների: Այդ տիպի տները հայկական ժողովրդական բնակարանի՝ գլխատան նախատիպն են ներկայացնում:
4. Պեղումներից հայտնաբերվել են խեցեգործության, զինագործության նմուշների և հասարակական զարդերի գտածոներ: Արհեստագործական արտադրանքի նյութական նմուշների հայտնաբերումը երկրի տարբեր մասերում վկայում են առևտրական կապերի մասին, որի վերելքի պայմաններում զարգացել է դրամաշրջանառությունը:
5. Հերոդոտոսը հաղորդում է առևտրական կապերի, դրամաշրջանառության, Հայաստանից գինի արտահանելու մասին:
6. Հայոց հին հավատալիքների համաձայն հին հայերը պաշտել են ընտանիքի սրբավայր թոնիրը (կրակարան), ջուրը, որի մասին վկայում են ձկնակերպ «Վիշապ» քարակոթողները, սրբազան ծառ՝ սոսին, որի սաղարթների սոսափյունից Արմավիրի քրմերը գուշակություններ էին կատարում:

7. Հին հայկական առասպելներում ու վիպերգերում արտացոլվում են ժողովրդի աշխարհայացքը, պատկերացումները բնության և հասարակության մասին: Դրանք հնագույն գրականության ուշագրավ տեսակներից են: Հայտնի և սիրված են «Հայկ և Բել» և «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելները, «Տիգրան և Աժդահակ» վիպերգը;

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Արմավիր և Երվանդաշատ քաղաքները:
2. Գնահատել արտաքին առևտրի դերը Հայաստանի համար(կապ ստեղծել Հայկազուն Երվանդականների թագավորության տնտեսությունն ու պետական կարգը դասի հետ:
3. Արժևորել հայոց հին հավատալիքները, ընտանիքի սրբավայր թոնրին, ծառերին, ջրերին, ծաղիկներին նվիրված տոները և դրանց քրիստոնեական տոների հետ հարմարեցումը:
4. Վերլուծել հայկական առասպելներում և վիպերգերում ներկայացվող արժեքները հայկական իրականության մեջ:
5. Թվարկել հնագույն դիցարան աստվածներին: Հայոց հին դիցարանը ներկայացրել են Հայկը (գերագույն աստված) որի անունով կոչվել է Օրիոնի համաստեղությունը, Տորքը, որը խեթական թագավորությունում հայտնի է Տարքու անունով, Արան (երկրագործության, մեռնող և հարություն առնող բնության աստված), որի պաշտամունքը տարածված էր Հին Արևելքում և մի շարք այլ աստվածներ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ (5 ժամ)

§ 1.Հելլենիստական դարաշրջանը և Հայաստանը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար

1. Որո՞նք էին հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները, և ինչո՞վ էր դա պայմանավորված:
2. Հելլենիզմը ե՞րբ է սկզբնավորվել, որքա՞ն է տևել Հայաստանում:
3. Ո՞ր աստվածներն են կազմում հայկական դիցարանի գերագույն եռյակը: Հայոց դիցարանի ի՞նչ աստվածներ են հայտնի:
4. Հելլենիստական շրջանում կրոնական ի՞նչ ըմբռնումներ էին պահպանվել:
5. Որո՞նք են հայոց հին հավատքի բնորոշ գծերը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Բացատրել հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները: Պայմանավորված իր աշխարհագրական դիրքով Հայաստանը, կապող օղակ է եղել Արևելքի և Արևմուտքի միջև: Արդյունքում հայ մշակույթը փոխազդել է այլոց մշակույթների հետ՝ պահպանելով իր եզակիությունն ու ինքնատիպությունը: Հելլենիստական ժամանակաշրջանում (Քա III դարում) և դրանից հետո պատմության մեջ տեղի ունեցավ շրջադարձ դեպի արևմուտք, ի տարբերություն նախորդ դարաշրջանների, երբ հայկական մշակույթը կապված էր արևելյան միջավայրի հետ: IV-V դարերից սկսած հայկական քրիստոնեական մշակույթն ավելի հաղորդակից դարձավ միջերկրածովյան քրիստոնեական աշխարհի մշակույթին: Հետագայում արևմտյան քաղաքակրթության հետ շփումներն ավելի խորացան, և պատահական չէ, որ հայերին երբեմն կոչում էին «Ասիայի եվրոպացիներ»:
2. Հելլենիզմի դարաշրջանը Հայաստանում սկսվում է Ք.ա IIIդ.-ից. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո և տևել է 6 դար՝ մինչև Ք.հ. III դ: Տեղական մշակույթները միաձուլվեցին հունական դասական մշակույթի հետ: Հայկական հելլենիզմի պատմությունը բաժանվում է երկու փուլի, առաջինը՝ «բուն հելլենիստական», երկրորդը՝ «ուշ հելլենիզմի» ժամանակաշրջանների: Հելլենիստական դարաշրջանում հարստացավ մեր ազգային մշակույթը:
3. Դեռևս վաղնջական ժամանակներում ձևավորված կրոնական վաղագույն ըմբռնումները՝ բնապաշտությունը, ոգեպաշտությունը, հմայական մոգությունը, շարունակում էին գոյատևել նաև այս դարաշրջանում: Հայոց նախաքրիստոնեական կրոնի ուսումնասիրության առումով մեծ արժեք ունի հայկական տոմարը:
4. Հին հայկական դիցարանում չեն եղել չար աստվածներ, մեծարվել են լույսը, ընտանիքը, բարին, գիտությունը և արվեստները: Հայոց հին դիցարաններին բնորոշ է եղել միակենտրոնությունը՝ Արարիչ գերագույն աստծո գլխավորությամբ: Հայոց դիցարանը բաղկացած էր ազգակից աստվածներից, այսինքն՝ դիցարանը ներկայանում էր իբրև աստվածային ընտանիք, ինչով ընդգծվում էր ընտանիքի դերը ժողովրդի կյանքում: Հայոց

դիցարանները ղեկավարվում էին գերագույն եռյակի կողմից, որը քրիստոնեության մեջ փոխարինվեց Սուրբ Երրորդությամբ։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. 1. Արժևորել հայկական մշակույթի դերը՝ որպես ազգապահպան գործոն ու շրջակա աշխարհի հետ հաղորդակցության միջոց։
2. Թվարկել հայկական նոր դիցարանի աստվածներին։ Հայկական դիցարանի գերագույն եռյակը ներկայացնում են Արամազդ, Անահիտ և Վահագն աստվածները։ Հայոց դիցարանի աստվածներ են եղել Աստղիկը, Նանեն, Արեգ-Միհրը, Տիրը, Վանատուրը։
3. Լրացնել աղյուսակը

Հայկական աստված	Գործառույթը	Պաշտամունքի գլխավոր կենտրոնը	Հունական աստված
Արամազդ	Հայր աստված, Արարիչը երկրի և երկնքի	Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Անի ամրոց	Զևս
Անահիտ	Մայրության, պտղաբերության , արգասավորության աստվածուհի	Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Երիզա ավան	Արտեմիս
Վահագն	Ռազմի, քաջության և ամպրոպի աստվածը	Տուրուբերան նահանգում՝ Աշտիշատ	Հերակլես
Աստղիկ	Երկնային լույսի, սիրո և գեղեցկության դիցուհի	Տուրուբերան նահանգում՝ Աշտիշատ	Ափրոդիտե
Արեգ - Միհր	Արևի, լույսի, կրակի և արդարության աստված	Բարձր Հայքի Դերջան գավառի Բագառիճ ավան	Հելիոս
Տիր	Դպրության աստված		Ապոլոն
Նանե	Ընտանիքի հովանավոր դիցուհի	Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Թիլ ավան	

§ 2.Գիրը, պատմագրությունը, գրականությունը և տոմարը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Գրի ի՞նչ տեսակներ են կիրառվել Հայաստանում։ Ինչու՞ արգելվեց մեհենագրությունը։
2. Ի՞նչ վկայություններ են պահպանվել Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» էջերում հայալեզու նշանագրության գոյության մասին։
3. Քրիստոնեության ընդունումից հետո ո՞ր լեզուներն էին կիրառվում Հայաստանում։
4. Ովքե՞ր են ի մի բերել մեհենական պատմությունները՝ ըստ Մովսես Խորենացու։
5. Տիգրան Մեծի կյանքի ու գործունեության մասին հայոց արքունիքում ովքեր են աշխատություններ գրել։
6. Ի՞նչ են վկայում հնագիտական հուշարձանների վրա հանդիպող աստղագիտական պատկերացումների վերլուծությունները։
7. Ի՞նչ գիտեք արեգակնային օրացույցի մասին ։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայաստանում գրավոր մշակույթի մասին պահպանված տեղեկությունները վկայում են, որ հայալեզու մեհենագրությանը զուգահեռ կիրառվել են նաև օտար ծագում ունեցող այբուբեններ՝ ասորական, արամեական, հունական, պահլավական, որոնք ներմուծվել էին մեր նախնիների կողմից։ Քրիստոնեության՝ պետական կրոն հռչակումով արգելվեց հայկական մեհենագրության գործածությունը։
2. Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն»ից տեղեկանում ենք, որ նախաքրիստոնեական Հայաստանում պաշտվել է դպրության աստված՝ Տիրը, ուստի սեփական գիր ու դպրություն չունեցող ժողովուրդը չէր կարող ունենալ դպրության աստված։
3. Քրիստոնեության պետականությունից հետո արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում Տրդատ III-ի հրամանով կիրառվել են հունարենն ու ասորերենը։ 387թ. Հայաստանի բաժանումից հետո Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ գործածվել է միջին պարսկերենը (պահլավերենը)։
4. Մովսես Խորենացու հաղորդմամբ՝ մեհենական պատմություններն ի մի է բերվել Օղյումպ քրմի, Մար Աբաս Կատինայի և այլոց երկերում ։
5. Տիգրան Մեծի կյանքի ու գործունեության մասին հայոց արքունիքում աշխատություններ են գրել Մեթրոդորոս Սկեփսացին,ինչպես նաև Ամֆիկրատես Աթենացին «Մեծ մարդկանց մասին» աշխատությունը, որոնք մեզ չեն հասել։
6. Հնագիտական հուշարձանների վրա հանդիպող աստղագիտական պատկերացումների վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհում դեռևս վաղնջական ժամանակներում կիրառվել են լուսնային, լուսնարեգակնային և արեգակնային օրացույցներ։
7. Հայկ Նահապետի անվան հետ կապված հայկական արեգակնային օրացույցը բաղկացած է եղել 365 օրից՝ 12 երեսունօրյա և մեկ հինգօրյա (Ավելյաց) ամիսներից։ Օրը բաժանված

է եղել 24 ժամերի, որոնցից՝ 12-ը ցերեկային, 12-ը գիշերային։ Հետագայում գործածվել են արեգակնային օրացույցի հիմքով տոմարական համակարգեր՝ Հայոց մեծ թվականը (552 թ) և Հայոց փոքր թվականը (1084 թ.)։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Արժևորել հայալեզու նշանագրերիի կիրառման փաստը։
2. Գնահատել նախամաշտոցյան շրջանում գրային մտածողության դերը մաշտոցյան դպրության կատարելության գործում։
3. Ցույց տալ արեգակնային օրացույցի դերը տոմարական համակարգի գործածության մեջ։

§ 3. Ժողովրդական բանահյուսությունը և թատրոնը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչն էր ընկած հելլենիստական ժամանակաշրջանի հայկական վիպասքերի հիմքում:
2. Ի՞նչ հայտնի ու սիրված վիպասքեր և այլ բանավոր ստեղծագործություններ կան, և ինչպե՞ս են դրանք մեզ հասել:
3. Հելլենիստական շրջանում թատրոնի ի՞նչ տեսակներ էին գործում: Որտե՞ղ կային հունալեզու թատրոններ:
4. Ի՞նչ փաստեր են վկայում հայկական թատրոնի, թատերական կյանքի տարածվածության մասին:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական վիպասքերում մեծարվում և փառաբանվում են սիրված արքաներն ու հերոսները, որոնց ընդհանուր բնութագրող գծերը բարեպաշտությունն ու հայրենապաշտությունն են: Դրանց հիմքում ընկած են պատմական իրողություններ:
2. Վիպասքերի մեծ մասը մեզ է հասել Խորենացու «Հայոց պատմություն» -ից : Սիրված և հայտնի էին «Երվանդ և Արտաշես», «Արտաշես և Սաթենիկ», «Արտաշես և Արտավազդ» վիպասքերը : Վիպասքերից բացի շարունակում էին երգվել աշխատանքային, սիրային երգեր և այլ բանավոր ստեղծագործություններ:
3. Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանի մշակութային կյանքը նշանավորվում է երկու տեսակի թատրոններով՝ հայալեզու ժողովրդական և հունալեզու (վերնախավի համար): Հայտնի է, որ հունալեզու թատրոններ կային Տիգրանակերտում և Արտաշատում:
4. Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ ժողովրդական թատրոնը բեմականացումների և պարերի միջոցով, որոնք ուղեկցվում էին փանդիռների նվագակցությամբ, ներկայացնում էր հնագույն ասքերը՝ «Գողթան երգերը»: Հունալեզու թատրոններում բեմականացվում էին հույն և հայ հեղինակների գործեր: Հայտնի է, որ Ք.ա 53 թ. Արտաշատում բեմադրվել է Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը: Պլուտարքոսի վկայությամբ Արտավազդ II-ի գրած ողբերգությունները նրա մահվանից մեկուկես դար անց հայտնի էին հռոմեացի ընթերցասերներին: Ուշ հելլենիստական շրջանի թատերական կյանքի բացառիկ վկայություն է Բակուր արքայի հունարեն արձանագրությամբ արծաթե թասը, որը հարուստ է թատերական տեսարաններով:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Արժևորել վիպասքերում փառաբանված հայ արքաների և հերոսների բնորոշ գծերը /բարեպաշտություն, հայրենապաշտություն/:
2. Վերլուծել և համեմատել հայկական բանահյուսական ստեղծագործությունները:
3. Գնահատել թատրոնի դերը Հայաստանի մշակութային կյանքում:

§ 4.Արվեստը: Ազգային արժեհամակարգը և հին Հայաստանի քաղաքակրթական նվաճումները

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչն է բնորոշ հայկական ճարտարապետությանը հելլենիզմի շրջանում:
2. Հելլենիստական ժամանակաշրջանից ի՞նչ քաղաքներ են հայտնի, ի՞նչ տեղեկություններ են պահպանվել դրանց մասին:
3. Ինչո՞վ է նշանավոր Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրը:
4. ի՞նչ ճարտարապետական կառույցներ են պահպանվել ուշ հելլենիստական շրջանից:
5. Քանդակագործության և կիրառական արվեստի ի՞նչ նմուշներ են հայտնաբերվել այդ շրջանից:
6. Ինչո՞ւ է հայկական ազգային արժեհամակարգի առանցքը եղել և մնում սրբազան հայրենիքի պաշտամունքը:
7. Ինչպի՞սի վեհ գաղափարներ են ընկած եղել հայոց ազգային արժեհամակարգի հիմքում:
8. Ի՞նչ գծեր են բնորոշ եղել հայկական մշակույթին հելլենիստական ժամանակաշրջանում :

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հելլենիստական ժամանակաշրջանում կառուցվեցին մեծ թվով քաղաքներ, ամրոցներ, պալատներ, տաճարներ, դամբարաններ, հասարակական և այլ շինություններ, վերակառուցվեցին հին քաղաքները:
2. Հելլենիստական շրջանի հայտնի քաղաքներ են Երվանդաշատը, որը կառուցել է Երվանդ IV-ը, Արտաշատը՝ Արտաշես I, Տիգրանակերտը՝ Տիգրան II , Վաղարշապատը՝ Վաղարշ I: Պատմահայրը մեծ հիացմունքով է խոսում Երվանդ IV-ի կառուցած «գեղեցիկ և շքեղ հորինվածքով» Երվանդակերտ դաստակերտի մասին: Արտաշատում վերջին տարիների պեղումների արդյունքում հայտնաբերվել են Արեգ-Միհրի տաճարը և խճանկարազարդ հասարակական բաղնիքը, մարմարե կավե արձաններ, զինատեսակներ, զարդեր, աշխատանքային գործիքներ: Տիգրանակերտի մեծության և շքեղության մասին վկայում են Ապպիանոսը , Պլուտարքոսը, Ստրաբոնը:
3. Հելլենիստական մշակույթի բացառիկ հուշարձան է Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրը, որը կառուցված է Կոմմագենեի թագավորության բարձրագույն կետում՝ 2100մ բարձրության վրա այլ վայրից բերված քարերով: Սրբավայրում կա հուշարձանախումբ, որի կենտրոնում Արամազդի 9 մետրանոց մարդակերպ արձանն է, աջ և ձախ կողմերում Անահիտ աստվածուհու Վահագն ու Միհր աստվածների և սրբավայրը կառուցող Անտիոքոս I Երվանդունու 8 մետրանոց արձանները:
4. Ուշ հելլենիստական շրջանի ճարտարապետության նմուշներ են Գառնիի ամրոցը, Արեգ-Միհրին նվիրված տաճարը և առասպելաղիցաբանական բովանդակությամբ խճանկարով և հունարեն գրություններով արքունի բաղնիքը: Տրդատ I արքան 76 թ-ին

կառուցապատում է Գառնին և ստեղծում հզոր մի ամրոց։ Գառնու հեթանոսական տաճարը միակն է, որ կանգուն է հելլենիստական տաճարներից։

5. Քանդակագործության և կիրառական արվեստի նմուշներից հայտնաբերվել են աստվածների և արքաների արձաններ Նեմրութ լեռան սրբավայրում, Արտաշատում կնոջ մարմարյա արձան, մոր և մանկան արձաններ Արմավիրից, Բրիտանական թանգարանում պահվող Անահիտ դիցուհու արձանի բրոնզաձույլ գլուխը, մեդալյոններ, արքայական դրամներ, Արտաշատ մայրաքաղաքի թողարկած հունարեն մակագրությամբ դրամներ ։
6. Ազգային արժեհամակարգի կարևոր տարրեր են համարվել հայկական պետականությունը, հայոց հին հավատքը, ազգի ազատության գաղափարը։ Ազգային գաղափարախոսական կարևոր հիմնադրույթ էր մեր նախնիների աստվածընտրյալ ժողովուրդ լինելու մասին պատկերացումը։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Հայաստանի հին մայրաքաղաքները՝ Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ։
2. Գնահատել և արժևորել, որ հելլենիստական ժամանակաշրջանում հայ ժողովուրդը պահպանել և հարստացրել է սեփական մշակույթը, ներմուծված տարրերը՝ հարմարեցնելով հայկական միջավայրին։
3. Բացատրել, որ Նեմրութ լեռան սրբավայրը, միահյուսելով հայկական և հունահռոմեական ճարտարապետական ավանդույթները, համարվում է Հին աշխարհի 8-րդ հրաշալիք։
4. Վերլուծել, որ Հայկական ազգային արժեհամակարգում առանցքային է եղել սրբազան հայրենիքի պաշտամունքը։ Մեզ հասած հինարևելյան աղբյուրների տեղեկությունների համաձայն Հայկական լեռնաշխարհը եղել է աստվածների բնակության վայր, ուր հիմնվել է դրախտը, և որտեղ արարավել են առաջին մարդիկ։ Այդ տարածքը Համաշխարհային ջրհեղեղից հետո դարձել է մարդկության վերածննդի երկիրը, ուր կնքվել է Աստծու և մարդկանց միջև հավիտենական ուխտը։
5. Վեր հանել հայկական ճարտարապետության առանձնահատկությունները և ձեռքբերումները։
6. Կարևորել հայկական դրամների դերը որպես սկզբնաղբյուր և արվեստի գործ։
7. Մեկնաբանել հայկական մշակույթին բնորոշ գծերը։ Հայկական մշակույթին բնորոշ է եղել 2 կարևոր գիծ՝ սեփական արժեքների պահպանումը և արտաքին աշխարհից դրականի ներմուծումը, որի ապացույց կարելի է համարել Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրը, որտեղ միահյուսվել են հայկական և հունահռոմեական ճարտարապետության ավանդույթները, որը համարվում է Հին աշխարհի 8-րդ հրաշալիքը։

Բ ՄԱՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ (34 ժամ)

Ներածություն

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ փուլերի է բաժանվում հայոց միջնադարի պատմությունը:
2. Հայ ժողովրդի համար ազգապահպան և հոգևոր մշակույթային ի՞նչ արժեքներ են ստեղծվել միջնադարում:
3. Ի՞նչ նոր ճանապարհներ բացեց Արշակունիների արքայատոհմի անկումը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում:
4. Հայկական ի՞նչ թագավորություններ են գոյություն ունեցել միջնադարում:
5. Ինչո՞վ է առանձնանում V դարը հայ մշակույթի մեջ:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայոց միջնադարյան պատմությունը հայ պատմագիտության մեջ ընդունված պարբերացման համաձայն բաժանվում է երեք փուլի՝
- վաղ միջնադար՝ IVդ. -IX դ. կեսեր,
- զարգացած միջնադար՝ IX դ. կեսերից-XIV դ. վերջը,
- ուշ միջնադար XV դ.- XVIIդ. կեսեր:
2. Դարեր շարունակ հայ ժողովուրդը դիմակայել է արտաքին վտանգներին ոչ միայն ռազմական ուժով, այլև հոգևոր-մշակութային արժեքներով՝ աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց Հայաստանում (301թ.), Մ. Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը(405թ.):
3. Արշակունիների անկումից հետո պետականության կրողը մնում էր հայոց նախարարական համակարգը: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ բարձրացան Մամիկոնյանների գլխավորած Տանուտիրական իշխանապետությունը, Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում, Ուտիքում՝ Վաչագան Բարեպաշտի թագավորությունը, VII դարի երկրորդ կեսին Հայոց անկախ իշխանապետությունը:
4. Միջնադարում են գոյություն ունեցել Արշակունյաց, Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությունները:
5. Հայոց պատմության V դարը անվանվում է Ոսկեդար: Այն բնութագրվում է թարգմանական և ինքնուրույն գրականության ստեղծմամբ, ոսկեդարյան հայ մտավորականները մեծարժեք ժառանգություն են թողել հարստացնելով հայ և համաշխարհային գիտական մտքի շտեմարանը, փրկելով նաև կորստից օտար հեղինակների մի շարք երկեր:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Արժևորել քրիստոնեության ընդունման և գրերի գյուտի դերը հայ ժողովրդի ազգապահպանության գործում:
2. Վերհանել Ոսկեդարի հայ մշակույթի դերը հայկական և համաշխարհային մշակույթի ժառանգության հարստացման գործում:

ԲԱԺԻՆ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒՄԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻՆ (10 ժամ)

ԳԼՈՒԽ 1. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ: ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ (2 ժամ)

§ 1.Քրիստոնեության հռչակումը պետական կրոն

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ե՞րբ է հիմնադրվել հայ առաքելական եկեղեցին: Ի՞նչ նախադրյալներ առաջացան քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու համար:
2. Ի՞նչ պայմաններում Հայաստանում քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն:
3. Պատմական ի՞նչ պայմաններում Գրիգոր Լուսավորիչը դարձավ կաթողիկոս: Ի՞նչ գործունեություն նա ծավալեց: IVդարում ի՞նչ եկեղեցիներ կառուցվեցին նրա հրամանով:
4. Ի՞նչ կառուցվածք ուներ հայոց նվիրապետությունը:
5. Հեթանոսական ո՞ր տոները հետագայում հարմարեցվեցին քրիստոնեությանը: Ինչպե՞ս կատարվեց ազգային և քրիստոնեական արժեքների համադրումը:
6. Ո՞րն է քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայոց Աբգար թագավորի օրոք և նրանից հետո էլ Քրիստոսի առաքյալներից Սբ.Թադևոսի և Սբ Բարդուղիմեոսի քարոզչությամբ Հայոց աշխարհում ավետվում է քրիստոնեական ուսմունքը:Այսպես առաջին դարում նրանց կողմից դրվում են Հայ առաքելական եկեղեցու հիմքերը: III դ երկրորդ կեսից Հայաստանի համար քաղաքական և կրոնական դեպքերը պայմանավորված էին Սասանյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականության դեմ հայ ժողովրդի դիմակայությամբ:Հոգևոր և քաղաքական ոլորտներում հայերի ինքնիշխանության և ազգային արժեքների պաշտպանությունը անհրաժեշտություն էր դարձնում քրիստոնեության պետականորեն ընդունումը:
2. Երբ Տրդատը վերադառնում է Հայաստան, նրա մոտ ծառայության է անցնում Գրիգորը, ով պարթև Անակի որդին էր,նաև `քրիստոնյա լինելու պատճառով Տրդատի հրամանով բանտարկվեց Խոր Վիրապում:Շուտով, Հայաստան եկած քրիստոնյաներին ու Տրդատին պատժելու հետևանքով Տրդատը ծանր հիվանդանում է:Գրիգորը բուժում է նրան ու սկսում քրիստոնեական քարոզչությունը: Այս դեպքերից հետո 301 թ. Հայաստանում, աշխարհում առաջինը քրիստոնեությունը Տրդատ III Մեծի հրամանով հռչակվում է պետական կրոն:
3. Տրդատ III Մեծի հրամանով Վաղարշապատ եկած հայոց զորքը, մեծամեծերը Գրիգոր Լուսավորչին կարգում են քահանայապետ /եպիսկոպոսապետ/: Թագավորի հրովարտակով նա մեկնում է Մաժակ /Կեսարիա/ քաղաքը/, որտեղ ձեռնադրվում է

եպիսկոպոս: Բագավանում Սուրբ Գրիգորին դիմավորում են մեծ պատիվներով: 303 թ. Վաղարշապատում կառուցվում է Մայր տաճար Ս.Էջմիածինը, իսկ Տարոնում Քարքե լեռան լանջին դնում է Իննակնյան Ս.Կարապետ, Աշտիշատում՝ Ս.Երրորդություն եկեղեցիների հիմքերը:

4. Հայաստանում քրիստոնեության հռչակումից հետո հաստատվում է Հայաստանյայց առաքելական եկեղեցու նվիրապետությունը՝Մայր Աթոռի առաջնորդությամբ: Գրիգոր Լուսավորիչը առաջին հերթին եկեղեցու պաշտոնյաներ է ձեռնադրում՝Հայաստանի նորակառույց եկեղեցիներում և թեմերում ծառայելու համար:Նրանց թվին էին պատկանում նաև նախկին հայ քրմերը,հատկապես Աղբիանոսի տոհմից: 4-5-րդ դարերի առաջին կեսին կաթողիկոսական աթոռին հիմնականում նստում էին Սբ Գրիգոր Լուսավորչի տան ներկայացուցիչները: Թագավորի հովանավորությամբ Գրիգոր Լուսավորիչը Հայաստանի քաղաքներում ու գյուղերում եկեղեցիներ է հիմնադրում:
5. Քրիստոնեության ընդունումից հետո հնուց եկող շատ տոներ ու ծեսեր Հայաստանում պահպանվեցին: Սբ Գրիգոր Լուսավորիչը դարձավ հայ առաքելական եկեղեցու տոների կարգավորության հիմնադիրը: Ժամանակի ընթացքում ժողովրդական և ազգային-եկեղեցական տոները՝Ամանորը, Տրնդեզը, Բարեկենդանը, Ծաղկազարդը հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում համադրվեցին,հարստացվեցին բովանդակությամբ, ինչը արտահայտվեց նաև ճարտարապետության մեջ: Եկեղեցաշինությունը, խաչքարերի ստեղծումը հայ մշակույթի՝ ազգային-քրիստոնեական հունով ընթանալու արտահայտություններից է:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Հիմնավորել Քրիստոնեության պետական կրոն հռչակելու անհրաժեշտությունը:
2. Բացատրել հայոց եկեղեցու ստանձնած առաքելությունը:
3. .Արժևորել քրիստոնեության դերը հայ ժողովրդի կյանքում:
4. Վերլուծել քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը: Հայաստանում քրիստոնեության ընդունումը պետական կրոն մեծ ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի ու պետության,հոգևոր կյանքի ու մշակույթի ,գիտության ու աշխարհընկալման հետագա ընթացքի վրա:Դարեր շարունակ հայ ժողովրդի հոգևոր ու գաղափարական առաջնորդն ու պաշտպանն է եղել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին: Եկեղեցին պատմության դաժան ժամանակներում ազգապահպան հզոր վեմ է եղել հայ ժողովրդի համար:Հայոց պետականության համար հետագա դժվարին ժամանակներում այն պահպանում էր երկրի էթնո-հոգևոր ամբողջականությունը իր նվիրապետական կառույցի շնորհիվ: Հայոց հոգևոր հայրերը եղել են հայ ժողովրդի ինչպես հոգևոր-մշակութային արժեքների ստեղծման ,այնպես էլ ազգային –ազատագրական պայքարի ջատագովներ:
5. Բացահայտել քրիստոնեական և ազգային տոների համադրման պատճառները և կարևորությունը :
6. Գնահատել հայոց եկեղեցու դերը ազգապահպանման գործում:

§ 2 .Ավատատիրության հաստատումը Հայաստանում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Հայաստանում ավատատիրական հարաբերությունների առաջացման ի՞նչ առանձնահատկություններ կային։
2. Հողատիրության ի՞նչ ձևեր կային Հայաստանում։
3. Ի՞նչ դասերից է կազմված ավատատիրական հասարակությունը, և ինչպիսի՞ ավատատիրական աստիճանակարգություն կար։
4. Ի՞նչ կառավարման ոլորտ էր տնօրինում գործակալություններից յուրաքանչյուրը։
5. Ի՞նչ կառուցվածք ուներ հայոց բանակը։
6. Ինչպե՞ս էր իրականացվում թագավորական Ոստանի և թագավորի անձի պաշտպանությունը։
7. Ի՞նչ տեղեկություններ կան Հայաստանի վաղ միջնադարյան առևտրական ճանապարհների մասին։
8. Ինչո՞ վ էին նշանավոր վաղմիջնադարյան Հայաստանի քաղաքները։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ավատատիրություն բառի հիմքում «ավատ», «ի հավատ», «հավատարմությամբ (ծառայել)» իմաստն է։ Հայաստանում տարածված հողատիրության ձևերն էին հայրենիք, պարգևականք, գանձագին հողերը։ Ավատատիրական հասարակությունը բաժանված էր բարձր՝ ազատների և ստորին՝ անազատների դասերի։ Հայաստանում ավատատիրական աստիճանակարգի գլուխ կանգնած էր թագավորը, հաջորդ աստիճանին բդեշխներն ու գործակալներն էին։ Իշխանական համակարգում գործում էր ենթակայության ավատատիրական հետևյալ սկզբունքը՝ «Իմ վասալի վասալը իմ վասալը չէ»։
2. Հազարապետություն գործակալությունը երկրի տնտեսական-հարկային վարչություն էր՝ միավորելով նաև հանրային աշխատանքների և պետական պարհակների տնօրինությունը։Սպարապետությունը գլխավորում էր հայոց սպարապետը, ում տրամադրության տակ էր ոստանիկ այրուձին, իսկ պատերազմի ժամանակ նրան էին ենթարկվում նախարարների զինված ուժերն ու աշխարհազորը։ Հայր մարդպետը իրականացնում էր արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը և Արշակունյաց շառավիղների դաստիարակությունը։ Մեծ դատավորը Հայ առաքելական եկեղեցու գլուխ կանգնած հայոց կաթողիկոսն էր։ Ասպետություն գործակալությունը ղեկավարում էր թագադիր ասպետը, որը պատասխանատու էր պալատական արարողությունների և օտար երկրների դեսպանների ընդունելության համար։
3. Բանակի թվակազմը 100-120 հազար էր՝ կազմված հետևակից և հեծելազորից։ Ըստ Զորանամակի՝ հեծելազորի ընդհանուր թիվը 55-85 հազար էր։ Հեծելազորային ուժերը կազմում էին հայոց այրուձին ։ Թագավորի հեծելազորը տեղակայվում էր Ոստան հայոցում և բանակ արքունի կոչված վայրում։

4. Թագավորական ոստանի պաշտպանությունը իրականացնում էր արքունիքին կից հատուկ հեծյալ ջոկատներից կազմված ոստանիկ այրուձին: Թագավորի անձի պաշտպանությունը ապահովում էր ընտրյալ նետաձիգներից բաղկացած և արքունիքում գտնվող մաղխազական այրուձին:
5. Հայաստանով էին անցնում միջազգային առևտրական ճանապարհները, որոնցից հատկապես նշանավոր էր Մետաքսի ճանապարհը: Հայաստանի վաղ միջնադարյան ճանապարհների մասին տեղեկություններ կան IV դարի հռոմեական աշխարհագետ Կաստորիոսի կազմած Պևտինգերյան քարտեզում, որտեղ նշված է Տիգրանակերտն Արտաշատի հետ կապող արքունի պողոտան: Անանիա Շիրակացու «Մղոնաչափքի» տվյալներով Դվինից էին սկիզբ առնում 6 մայրուղիներ, որոնք տանում էին դեպի առաջավորասիական երկրների առևտրական կարևոր կենտրոնները: Վաղարշապատը Արտաշատի հետ կապող ճանապարհը կոչվում էր Արտաշատի պողոտա:
6. Քաղաքների մեծ մասը կառուցված էին առևտրական ճանապարհների վրա, ունեին արհեստագործական և առևտրական կենտրոնի դեր:Քաղաքային կյանքում կարևոր դեր էր խաղում շուկան, որի տարածքում էին առևտրականների խանութները, արհեստավորների գործատները: Եկեղեցաշինությունը Հայաստանի քաղաքների և գյուղերի հատակագծին նոր բովանդակություն էր հաղորդում:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Վերլուծել Հայաստանում ավատատիրական հարաբերությունների առաջացման առանձնահատկությունները: Հայաստանում հասարակական հարաբերությունները հնուց զարգանում էին համապետական՝ թագավորական հողատիրության պայմաններում:Գյուղական համայնքները հիմնական արտադրող տնտեսություններն էին, որոնք պետության գլխավոր հարկատուն էին: Մասնատիրական տնտեսությունների ընդլայնումը գյուղական համայնքների հաշվին սկիզբ է դնում պետական հողատիրության մասնատմանը մասնավոր սեփականատիրական կալվածքների՝ ավատների:Հայաստանում ավատատիրությունը սերում էր նահապետական արմատներ ունեցող նախարարական համակարգից , որը հնուց եկող թագավորական իշխանության հետ ամբողջություն էր կազմում:
2. Գնահատել գործակալությունների դերը երկրի կառավարման համակարգում:
3. Արժևորել հայկական բանակի դերը հայոց միջնադարյան պետության անվտանգության գործում:
4. Գնահատել վաղ միջնադարյան Հայաստանի մասնակցությունը միջազգային առևտրին և դրա խաղացած դերը տնտեսական կյանքում:
5. Համապատասխանեցնել գործակալությունը նախարարական տոհմի հետ:

Գործակալություն	Նախարարական տոհմ
Հազարապետություն	Գնունի, Ամատունի
Սպարապետություն	Մամիկոնյան

Մարդպետություն	Մարդպետունի
Մաղխազություն	Խորխոռունի
Ասպետություն	Բագրատունի

5. Բացատրել՝ ավատ, բդեշխ, գործակալ, Ոստան հայոց, պարգևականք, զանձագին, հայրենիք, Գահնամակ, Զորանամակ բառերը։

ԳԼՈՒԽ 2.

ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ IV ԴԱՐՈՒՄ ԵՎ V ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ (3 ժամ)

§ 1. Պայքար կենտրոնական իշխանության ուժեղացման համար

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ քայլեր է ձեռնարկել Տրդատ III-ը կառավարման համակարգում և կրթության գործում:
2. Ինչո՞վ է կարևոր Նիկեայի տիեզերական ժողովը: Հայաստանից ո՞վ է մեկնել Նիկեա:
4. Ե՞րբ է թագավորել Խոսրով Կոտակը և ի՞նչ ձեռնարկումներով է հանդես եկել:
5. Ի՞նչ օրենք է սահմանում Խոսրով Կոտակը 336 թ. Սասանյանների զորքերի Հայաստան ներխուժումից հետո:
6. Ի՞նչ օրենք է սահմանել Վրթանես կաթողիկոսը:
7. Ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն էր վարում Տիրանը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Տրդատ III-ը հզորացրեց կենտրոնական իշխանությունը, բարձրացրեց գործակալությունների դերը երկրի կառավարման և պաշտպանության գործում, տնտեսապես ապահովեց եկեղեցուն: Հայոց կաթողիկոս Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ III-ը Հայաստանի զանազան գավառներից հավաքված մանուկների մի մասին տալիս են ասորի և մյուս մասին՝ հելլենական դպրության՝ հայերենի հմուտ թարգմանիչներ պատրաստելու համար:
2. 325 թ. Նիկեայում տեղի ունեցավ առաջին տիեզերական ժողովը, որը սահմանեց «Հավատո հանգանակը»: Գրիգոր Լուսավորչի որդիներից Արիստակեսը մասնակցել է Նիկեայի տիեզերական ժողովին և Հայաստան է բերել Նիկեական կանոնները:
4. Խոսրով Կոտակը կառավարել է 330-338 թթ.: Նա կառուցել է Դվին մայրաքաղաքը, աշխարհի առաջին արհեստական անտառներից՝ «Տաճար մայրի» և «Խոսրովակերտ» անտառները:
5. Խոսրով Կոտակը 336 թ. Սասանյանների զորքերի Հայաստան ներխուժումից հետո սահմանում է օրենք, ըստ որի՝ աշխարհատեր նախարարները պետք է մնային թագավորի մոտ և նրանցից ոչ ոք չպետք է մարտի գնար արքունի զորքի հետ՝ թշնամու կողմն անցնելուց խուսափելու համար:
6. Վրթանես կաթողիկոսը օրենք է սահմանել ամեն տարի Հայոց աշխարհում Վաչե Մամիկոնյանի ու նրա հետ զոհված զինակիցների հիշատակը նշելու և հայրենիքի փրկության համար մղված պայքարում իրենց կյանքը զոհաբերողներին սուրբ նահատակների շարքին դասելու մասին:
7. Խոսրով Կոտակի որդուն՝ Տիրանին (338-35 թթ.), Կոստանդիոս II-ը ճանաչել էր հայոց թագավոր, սակայն կայսրությունում պատանդ էին պահվել Տիրանի որդին՝ Տրդատը, և թոռները՝ Գնելը և Տիրիթը, ուստի Տիրանը ամեն կերպ աշխատում էր երկրի անկախությունը պահպանել՝ խուսափելով հռոմեա-պարսկական հակամարտության մեջ ներքաշվելուց:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել «Հավատո հանգանակ» հասկացությունը։
2. Գնահատել Տրդատ III-ի և Խոսրով III-ի ձեռնարկած քայլերը երկրի հզորացման գործում։
3. Համեմատել Տրդատ III- ի և Տիրանի վարած ներքին քաղաքականությունը։

§ 2. Արշակ և Պապ թագավորների քաղաքականությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ներքաղաքական ի՞նչ վիճակում է թագավորել Արշակ II-ը և ի՞նչ քաղաքականություն էր նա վարում:
2. Ե՞րբ և ու՞մ կողմից է հրավիրվել Աշտիշատի ժողովը :Որո՞նք էին Աշտիշատի ժողովի կարևոր որոշումներն ու կանոնները:
3. Ինչի՞ վերաճեցին պարսկա-հռոմեական լարված հարաբերությունները և ի՞նչ հետևանքներ ունեցան Հայաստանի համար: Ինչպիսի՞ն էին հայ-հռոմեական հարաբերությունները այդ ընթացքում:
4. Ե՞րբ սկսվեց հայ-պարսկական պատերազմը և ի՞նչ ընթացք ունեցավ : Ինչպե՞ս վարվեց Շապուհը Արշակի և Վասակ Մամիկոնյանի հետ: Ինչպե՞ս Շապուհ II-ը ձերբակալեց Արշակ II-ին և Վասակ Մամիկոնյանին:
5. Ինչպե՞ս ավարտվեց Արտագերսի պաշտպանությունը: Ինչպե՞ս Պապը դարձավ Հայաստանի թագավոր:
6. Ի՞նչ կարևոր ճակատամարտեր տեղի ունեցան պարսկական ուժերի դեմ և ինչպիսի՞ արդյունք ունեցան դրանք:
7. Ի՞նչ կարևոր քայլեր կատարեց Պապը երկրում և ինչպե՞ս մահացավ:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Տիրան թագավորի կուրացումից հետո գահն անցավ Արշակ II –ին, ով կառավարել է 350-368 թթ: Պարսկա-հռոմեական հակամարտության սրման պայմաններում, հաշվեհարդար տեսնելով գահի հավակնորդ ազգականների հետ, Արշակը ամուսնանում է Փառանձեմի հետ: Նա վարում էր ինքնուրույն քաղաքականություն:
2. Արքունիքի և նախարարական տների միջև աճող լարվածությունը թուլացնելու,երկրի ներքին կայունությունը պահելու նպատակով 354 թ.Ներսես Ա Պարթև կաթողիկոսը Աշտիշատում հրավիրում է հայ եկեղեցական առաջին ժողովը, որտեղ ընդունվում են հոգևոր և աշխարհիկ մի շարք կանոններ: Որոշվում է կառուցել վանքեր,դպրոցներ,հիվանդանոցներ: Կանոններից մեկի համաձայն թագավորը և մեծամեծները պիտի գթասիրտ լինեին իրենց ծառաների նկատմամբ: Ծառաներն էլ պիտի հնազանդ ու հավատարիմ մնային իրենց տերերին: Աշտիշատի կանոններով արգելվում էին հեթանոսական շատ սովորույթներ՝բազմակնությունը,մահացածի վրա չափից դուրս լացը, հարբեցողությունը և այլն:
3. 364 թ. Պարսկական զորքերը երեք ուղղություններով ներխուժում են Հայաստան :Չնայած հայերի որոշ հաջողություններին, երկարատև պատերազմները հյուծում էին և պարսիկների, և հայերի ուժերը: Շապուհ II-ին չհաջողվեց ռազմական ճանապարհով ընկճել հայերին, ուստի խաբեությամբ ձերբակալեց Արշակ II-ին և Վասակ Մամիկոնյանին:Տանելով Տիզբոն, Շապուհը հրամայում է Արշակին փակել Անհուշ

բերդում, որտեղ էլ հետագայում նահատակվում է հայոց արքան,իսկ Վասակին հրամայում է սպանել:

4. Արտագերս ամրոցում հերոսական դիմադրություն էր ցույց տալիս Փառանձեմ թագուհին իր 11000 ընտիր զորականներով,սակայն թշնամին ներխուժելով ամրոց պարտության է մատնում հայերին և սպանում թագուհուն: Պապը հռոմեական զորավար Տերենտիոսի զորաջոկատով գալով Հայաստան՝ հաստատվում է հայոց գահին 370թ.:
5. Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը սկսում է Հայոց աշխարհի ազատագրումը, 370 թ. Ատրպատականում պարտության է մատնում Շապուհին , իսկ հետագայում Ձիրավի 371թ. և Գանձակի 372 թ. ճակատամարտերի հաղթական արդյունքներից հետո Հայաստանում վերականգնվում է խաղաղությունը :
6. Պապը հզորացրեց երկրի ռազմական ուժերը՝ հասցնելով բանակի թիվը 100000-ի, սահմանափակեց եկեղեցական հողատիրությունը, վերացրեց տասանորդը, փակել տվեց կուսանոցներն ու այրիանոցները, որով կնպաստեր երկրի բնակչության և հայոց բանակի աճին: Հիմք դրեց հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնուրույնությանը, քանի որ նոր կաթողիկոս Հուսիկ-Շահակը չմեկնեց Կեսարիա ձեռնադրվելու: Պապը տարածքային պահանջներ ներկայացրեց Հռոմի Վաղես կայսրին՝ Կեսարիայի 10 քաղաքների և Եդեսիայի հետ կապված: Այսպիսով Պապի՝ Հռոմից անկախ քաղաքականություն վարելու փորձերը 374թ հանգեցրին Վաղես կայսեր կողմից կազմակերպված Պապի դեմ դավադիր սպանության:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ թագավորական իշխանության ամրապնդման և նախարարական կենտրոնախույս տրամադրությունները զսպելու նպատակով Արշակ II կառուցել է տալիս Արշակավան քաղաքը:
2. Մեկնաբանել Աշտիշատի ժողովում ընդունված կանոնների նշանակությունը:
3. Բացատրել, որ պարսկա-հռոմեական լարված հարաբերությունները 359 թ. հանգեցրին պատերազմի,որտեղ շատ կարևոր էր Հայաստանի դիրքորոշումը:Բայց դեպքերի ոչ ճիշտ դասավորումը բերեց հայ-պարսկական ռազմական դաշինքի խախտմանը Արդյունքում ՝ 363թ. կնքվում է պարսկա-հռոմեական «ամոթալի» պայմանագիրը, որով կայսրը պարտավորվում էր չօգնել հայերին՝ անտեսելով հայ-հռոմեական դաշինքը:
4. Բնութագրել Արշակ II-ին և Վասակ Մամիկոնյանին որպես քաջ և հայրենասեր գործիչներ:
5. Ներկայացնել Փ. Բուզանդի մեջբերումները Շապուհի կողմից Արշակին և Վասակին փորձելու դրվագները և վերլուծել նրանց պահվածքը
6. Արտահայտել դիրքորոշում Պապ թագավորի պատմական կերպարի վերաբերյալ:

§ 3. Հայոց Արշակունյաց թագավորության մայրամուտը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ իրավիճակ էր Հայաստանում Պապի սպանությունից հետո:
2. Ի՞նչ ճակատագիր ունեցավ Մուշեղ Մամիկոնյանը:
3. Ի՞նչ գործունեություն է ծավալել Մանվել Մամիկոնյանը:
4. Ե՞րբ է տեղի ունեցել Հայաստանի առաջին բաժանումը և որո՞նք են դրա հետևանքները: Ի՞նչ քաղաքականություն էր վարում Խոսրով IV-ը:
5. Ինչո՞վ էր պայմանավորված պարսից արքա Վռամի վարած քաղաքականությունը Վռամշապուհի հետ:
6. Ի՞նչ դեր են խաղացել Սահակ Պարթև կաթողիկոսը և Վռամշապուհ արքան հայոց գրերի ստեղծման գործում:
7. Ո՞վ էր Արշակունյաց վերջին արքան : Ովքե՞ր նպաստեցին նրա գահազրկման գործընթացին:
8. Արշակունյաց թագավորության անկումից հետո հայկական պետականությունը ինչպե՞ս էր պահպանվում:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Մեծ Հայքում Պապի սպանությունից հետո թագավորում է Վարազդատը, ով օլիմպիական խաղերի հաղթող էր: Լինելով անփորձ՝ նրան օգնում էր երկրի կառավարման գործում Մուշեղ սպարապետը, ով առաջնորդում էր հայոց բանակը, հսկում Մեծ Հայքի թագավորության սահմանները: Մուշեղը նախատեսում էր Սասանյանների հարձակումներից Հայաստանը պաշտպանելու նպատակով Հռոմեական կայսրության հետ ամուր ռազմական համագործակցություն:
2. Մուշեղ Մամիկոնյանը դառնում է Բատ Սահառունի նախարարի դավադրության զոհը , ով ցանկանում էր Մուշեղից խլել սպարապետությունը: Նա Վարազդատին տրամադրում է Մուշեղ սպարապետի դեմ՝ մեղադրելով վերջինիս Պապի սպանության մեջ:
3. Մանվելը տեր է կանգնում Մամիկոնյան տանուտերությանը և ստանձնում սպարապետության գործը՝ Վարազդատին հեռացնելով երկրից: Լուծում է Մուշեղի վրեժը՝ մահապատժի ենթարկելով Բատ Սահառունուն: Նրա խնամակալությամբ Հայոց գահին է հաստատվում Պապի որդի Արշակ III-ը(378-387 թթ.):
4. 387 թ. Հայաստանը բաժանվեց Հռոմի և Պարսկաստանի միջև: Մեծ Հայքի թագավորության Արևմտյան մասը անցավ Հռոմի տիրապետության տակ, որտեղ կառավարում էին կոմեսները: Արևելյան մասը անցավ Պարսկաստանի տիրապետության տակ, որտեղ իշխում էր Խոսրով IV-ը: Նա, Թեոդոսիոս I-ի համաձայնությամբ որոշ ժամանակ հարկ վճարելով, իշխում էր նաև Հայաստանի արևմտյան մասի վրա: Առանց Սասանյանների հետ համաձայնեցնելու նա հայոց կաթողիկոս է նշանակում Սահակ Պարթևին:

5. Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծվում են հայոց գրերը (405 թ.)։
6. Արշակունյաց վերջին արքան Վռամշապուհի որդի Արտաշեսն էր (422-428 թթ.)։ Ըստ որոշ նախարարների կարծիքի՝ Արտաշեսը իբրև թե հեղինակազրկվել էր և կորցրել երկրի կառավարման ղեկը։ Նրանք նպատակ ունեին գահընկեց անել Արտաշեսին և դրա համար դիմում են պարսից արքային՝ չարախոսելով, թե իբր թագավորը և Սահակ կաթողիկոսը հույների կողմն են անցել։
7. Երբ 428 թ.Արշակունյաց թագավորությունը անկում ապրեց, հայոց պետականությունը պահպանվում էր նախարարական համակարգի միջոցով։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Մեկնաբանել Հայաստանի առաջին բաժանումը՝ որպես պարսկա-հռոմեական հակամարտության հետևանք։
2. Բացատրել Վռամշապուհի հետ պարսից Վռամի արքայի վարած քաղաքականության պատճառները։ Պարսից Վռամ արքան շտապում էր կարգավորելու հարաբերությունները Վռամշապուհի հետ, քանի որ Կոստանդնուպոլսում խռովություններ էին ծագել, ինչը վտանգում էր պարսկա-բյուզանդական հարաբերությունները սահմանում։
3. Արժևորել հայոց գրերի ստեղծման դերը հայկական մշակույթի զարգացման գործում։
4. Առանձնացնել Արշակունյաց թագավորության անկման պատճառները։
5. Մեկնաբանել Արշակունյաց արքայատոհմի անկման հետևանքները։

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ (5 ժամ)

§ 1. Արևելյան Հայաստանի մարզպանական կարգավիճակը: Վարդանանց պատերազմը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչպիսի՞ն էր հայ նախարարական համակարգի էությունը:
2. Ի՞նչ քաղաքականություն էին վարում Սասանյանները Հայաստանում Արշակունիների անկումից հետո: Ինչպիսի՞ն էր պարսիկների վերաբերմունքը Հայ առաքելական եկեղեցու հանդեպ:
3. Ե՞րբ և ինչո՞ւ, հրավիրվեց Արտաշատի ժողովը: Ի՞նչ կարևոր որոշում ընդունվեց այս ժողովում:
4. Ո՞րն էր Տիզբոն կանչված հայ նախարարների որոշումը: Ի՞նչ դեպքեր հաջորդեցին դրանց Անգղում և Զարեհավանում:
5. Ի՞նչ ընթացք ունեցավ Խաղխաղի ճակատամարտը և ինչո՞վ այն ավարտվեց:
6. Ինչու՞ Վասակ Սյունին փոխեց իր վերաբերմունքը ապստամբության նկատմամբ:
7. Ե՞րբ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը և ի՞նչ ելք ունեցավ այն:
8. Ի՞նչ դեր ունեցավ հայերի համար ճակատամարտի բարոյական հաղթանակը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայաստանի երկու հատվածներում թագավորության անկումից հետո հայոց պետականությունը պահպանվեց առաջին հերթին նախարարական համակարգի շնորհիվ: Հայ նախարարները իրենց մեծ և փոքր տիրույթների տերեր մնացին ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում: Նախարարական տունը գլխավորում էր տերը կամ տանուտերը, որի ժառանգորդը՝ավագ սեպուհը,ավագ եղբայրն էր, իսկ մնացած ներկայացուցիչները կոչվում էին սեպուհներ:
2. Հայրենիք վերադառնալու և ապստամբության գործը կազմակերպելու համար նախարարները որոշում են առերես ընդունել զրադաշտականությունը: Հազկերտը իր մոտ պահելով Վասակ Սյունու երկու որդիներին ու Գուգարքի Աշուշա բդեշխին, հրամայում է մոգպետին ու մոգերին ուղեկցող ուժերի և հայոց գնդի հետ մեկնել Հայաստան: Հասնելով հայոց աշխարհ Վարդան Մամիկոնյանը խորհրդակցություն է հրավիրում, որի ժամանակ բոլորն իմանում են, որ հայ նախարարների ուրացումը կեղծ է եղել: Դրանից առաջ Անգղում, իսկ հետո Զարեհավանում հայերը սպանում են մոգերին, քանդում ատրուշանները և դուրս են շպրտում պարսից զորքերին: Ապաստամբությունը արագորեն ծավալվում է Հայոց աշխարհում:
3. Պարսկական զորագնդի հետ Վարդան Մամիկոնյանը հանդիպեց հայոց արքայական ձմեռանոցի՝Խաղխաղ քաղաքի մոտ 450թ., որտեղ պարսիկներին ջախջախելուց հետո ազատագրում է բուն Աղվանքի բերդերն ու քաղաքները:Հայերը հաղթանակը կրկնում են նաև Ճորա պահակում, որից հետո դաշինք են կնքում հոների հետ՝ ընդդեմ

Սասանյանների: Շուտով լուր է ստացվում, որ Բյուզանդիայից օգնություն չստանալով, Վասակ Սյունին մտադրվել է հաշտվել պարսից արքունիքի հետ: Դա անսպասելի հարված էր երկրի անվտանգությանը: Կարծիք կա, որ Վասակ Սյունու այդ քայլը պայմանավորված էր իր որդիների պատանդության մեջ գտնվելու հանգամանքով:

4. Ավարայրի ճակատամարտը տեղի է ունեցել 451 թ. մայիսի 26-ին: Սկզբում հաջողությունը հայերի կողմն էր, սակայն որոշ ժամանակ անց թշնամին կարողանում է վերադասավորել իր ուժերն ու մարտական փղերին մտցնելով ռազմի դաշտ վճռում ճակատամարտի ելքը: Վարդան Մամիկոնյանը և ութ նախարարներ զոհվում են: Վարդանանց նահատակությունը հայրենիքը կյանքի գնով պաշտպանելու օրինակ հանդիսացավ հետագա սերունդների համար: Ավարայրի ճակատամարտը հաղթանակ էր ընդդեմ բռնակալության, դավանափոխության: Հայոց եկեղեցին Ավարայրում հերոսաբար զոհվածներին դասեց սուրբ նահատակների շարքին, նրանց հիշատակի օրը մտցնելով եկեղեցական տոնացույցի մեջ՝ Սուրբ Վարդանանց տոն անունով:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել Հայաստանում Արշակունիների անկումից հետո Սասանյանների վարած քաղաքականությունը: Սասանյաններն Արևելյան Հայաստանն իրենց տիրապետության տակ առնելով՝ այն վերածեցին տերության սովորական վարչաքաղաքական միավորի՝ մարզպանության: Նրանք սահմանափակեցին նախարարների և հայոց եկեղեցու իրավունքները, իրենց կողմից կաթողիկոս նշանակեցին Սուրմակին: Չնայած դրան, որոշ ժամանակ անց ,վերադառնալով իր աթոռին Սահակ Պարթևը պաշտպանեց և վերականգնեց հայ նախարարների՝ Մամիկոնյանների, Ամատունիների, ժառանգական իրավունքները: Հայաստանի վիճակը վատացավ պարսից Հազկերտ II-ի գահակալությամբ, ում հրամանով 447 թ. Դենշապուհը Արևելյան Հայաստան եկավ աշխարհագիր անցկացնելու: Դրա նպատակներից էին հարկերի ծանրացումը և եկեղեցու ազատության սահմանափակումը: Հայ ժողովրդի բոլոր խավերի վիճակը վատացավ:
2. Մեկնաբանել Աշտիշատի ժողովի հրավիրման պատճառները: Պարսից արքան իր քայլերով չբավարարվելով, հրաման արձակեց քրիստոնեությունից հրաժարվելու և զրադաշտական կրոնն ընդունելու մասին: Դա քննարկելու նպատակով Արտաշատում 449 թ. Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ հրավիրվեց եկեղեցական ժողով, որտեղ մերժվեց Սասանյանների՝ կրոնափոխության առաջարկը: Այդ որոշումից զայրացած Հազկերտը հայ նախարարներին, մարզպան Վասակ Սյունու գլխավորությամբ կանչում է Տիզբոն:
3. Ժամանակագրական հաջորդականությամբ թվարկել ազատագրական պայքարի կարևոր իրադարձությունները:
4. Քարտեզի վրա ցույց տալ այն տարածքները, որտեղ տեղի ունեցան ազատագրական կռիվներ պարսիկների դեմ:
5. Բացահայտել Վարդանանց պատերազմի պատմական նշանակությունը:

§ 2. Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը 481-484 թթ.

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչպիսի՞ն էր մարզպանական Հայաստանի քաղաքական վիճակը և ի՞նչ քաղաքականություն էր վարում Պերոզը Հայաստանի նկատմամբ:
2. Ո՞րն էր հայերի կողմից նոր ապստամբություն սկսելու պատճառը, ե՞րբ և որտե՞ղ որոշում կայացվեց այն սկսելու մասին:
3. Ի՞նչ ճակատամարտեր են տեղի ունեցել Վահանանց ապստամբության ժամանակ: Ի՞նչ հետևանքներ են թողել դրանք:
4. Ինչո՞ւ հայերը գնացին վրացիներին օգնության, և ո՞րը եղավ այդ դաշնակցության արդյունքը:
5. Ե՞րբ և որտե՞ղ է կնքվել Նվարսակի պայմանագիրը: Ի՞նչ էր այն նախատեսում:
6. Որո՞նք են Վահանանց պատերազմի արդյունքները:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Վրաց Վախթանգ թագավորի կողմից Վազգեն բդեշխի սպանությունը Հայաստանում նոր ընդվզումների բռնկման առիթ դարձավ: 481 թ. հայ նախարարները Շիրակում որոշում կայացրին ապստամբություն սկսել: Ապստամբության ղեկավարությունը իր ձեռքն է վերցնում Վահան Մամիկոնյանը:Հետապնդելով պարսից մարզպանին հայերը ստիպեցին նրան իր խմբով փախչել Հայաստանից:Արդյունքում Արևելյան Հայաստանում կազմվում է կառավարութուն Սահակ Բագրատունու մարզպանությամբ:
2. Վահանանց ապստամբության ընթացքում տեղի ունեցած առաջին ճակատամարտը Ակոռի գյուղում էր 481 թ., որտեղ պարսից ուժերը ջախջախվում են,իսկ մարզպան Անտրվշնասպը մահանում: Սրան հաջորդում է պարսից նոր արշավանքը: Հայ-պարսկական բախումը այս անգամ տեղի ունեցավ Ներսահապատ գյուղի մոտ 482 թ.,որտեղ հատկապես աչքի է ընկնում հայոց կենտրոնական գունդը: Հաղթելով պարսիկներին հայոց զորքը շարժվում է Ծաղկոտն գավառ հանգստանալու: Շուտով վրաց թագավորը օգնություն է խնդրում հայերից: Նույն թվին Վահան Մամիկոնյանը փոքրաթիվ գնդով շտապ գնում է Գուգարաց աշխարհ և այնտեղից անցնում Ճարմանայի դաշտ Սակայն Ճարմանայի ճակատամարտը անհաջող ելք է ունենում: Զոհեր տալով Վահան Մամիկոնյանը հայոց բանակի մնացած ուժերով վերադառնում է հայրենիք:
3. Վրաց թագավորը օգնություն է խնդրում հայերից,հայտնելով,որ պարսկական մեծ գունդ է մտելՎիրք, իսկ ինքը նահանջել է Գուգարք: Ըստ նրա,սպասվում էր նաև հոների զորքերի մուտքը Վիրք, ինչը հնարավոր կդարձներ համատեղ ուժերով ջախջախել թշնամուն: 482 թ.Վահան Մամիկոնյանը փոքրաթիվ գնդով շտապ գնում է Գուգարաց աշխարհ և այնտեղից անցնում Ճարմանայի դաշտ: Սակայն Ճարմանայի ճակատամարտը անհաջող ելք է ունենում: Զոհեր տալով Վահան Մամիկոնյանը հայոց բանակի մնացած ուժերով վերադառնում է հայրենիք: Այստեղ նոր բախումներ են տեղի ունենում հայերի ու

պարսիկների միջև, ինչն էլ ավարտվում է պարսիկների պարտությամբ Արծաթի կոչվող գյուղի մոտ:

4. Պարսկաստանում 484 թ. գահ բարձրացած Վաղարշը փորձում էր հայերին սիրաշահելով ենթարկել պարսից տերությանը: Դա արքան անում էր պարսից պաշտոնյա Նիխորի միջոցով, ով գակով Հայաստան իր մոտ բանակցությունների է հրավիրում Վահանին: 484 թ. Նվարսակ գյուղում կնքվում է պայմանագիր Վահան Մամիկոնյանի և Նիխոր զորավարի միջև: Մի քանի օր անց Վահանը հավաքլով հայոց այրուձին և ուխտակից նախարարներին մեկնում է Տիզբոն կնքելու հայ-պարսկական հաշտություն: Վաղարշը համաձայնում է բավարարել Վահանի բոլոր պահանջները՝ դադարեցնել կրոնափոխության քաղաքականությունը,կրկին թույլատրել քրիստոնեական կրոնի դավանումը,չմիջամտել հայ նախարարների ներքին գործերին և պաշտոններ չտալ հավատուրացողներին,հարգել հայ հողատեր-նախարարների ժառանգական իրավունքը: Վահան Մամիկոնյանը պարսից արքայի կողմից ճանաչվում է Մամիկոնյանների տանուտերության գահերեց և հայոց սպարապետ:Վաղարշի հատուկ հրովարտակով Վահանը հաստատվում է մարզպանի պաշտոնում:
5. V դարի ազատագրական կռիվները հիմք հանդիսացան Հայաստանում տանուտիրական համակարգի պահպանման և հայոց պետականության փաստացի վերականգնման համար:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել Պերոզի՝ Հայաստանը թուլացնելու համար ձեռնարկած քայլերի պատճառները: Վարդանանց պատերազմից հետո շարունակելով հայերին սիրաշահելու քաղաքականությունը, պարսիկները չէին դադարում քաղաքական և կրոնական հալածանքներ իրականացնելուց: Պարսից Պերոզ արքան երկիրը թուլացնելու նպատակով ամեն կերպ փորձում էր միջամտել երկրի ներքին գործերին՝ խրախուսելով ուրացող նախարարներին: Մասնատելով նախարարական կալվածքները, նա հողեր ժառանգելու իրավունք է շնորհում կրտսեր իշխաններին՝սեպուհներին: Ազդելով հոգևոր կյանքի վրա, բանսարկություններ սկսվեցին Գյուտ կաթողիկոսի դեմ,ինչը սակայն պարսիկների համար ցանկալի արդյունքների չբերեց:
2. Գնահատել Նվարսակի պայմանագրի նշանակությունը Հայաստանի համար:
3. Արժևորել V դարի ապստամբությունների նշանակությունը:
4. Համեմատել Վարդանանց և Վահանանց պատերազմները:

§ 3. Հայաստանը VI դարում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ե՞րբ և ու՞մ կողմից հիմնվեց հայկական թագավորություն Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներում և հարակից տարածքներում: Ինչո՞վ է հայտնի Վաչագան Բարեպաշոը պատմության մեջ:
2. Ինչպե՞ս կանոնակարգվեցին միջազգային ասպարեզում քրիստոնեական եկեղեցիների հարաբերությունները:
3. Ե՞րբ և ինչպե՞ս առաջացան քաղկեդոնական և հակաքաղկեդոնական ուղղությունները:
4. Ի՞նչ վիճակ էր տիրում Արևմտյան Հայաստանում VI –րդ դ առաջին կեսին: Ո՞վ էր Հուստինիանոսը, և ո՞րն էր նրա սահմանած օրենքների նպատակը:
5. Ո՞ր իրադարձությունը առիթ հանդիսացավ 571 թ. ապստամբությունը սկսելու համար և ինչի այն հանգեցրեց:
6. Ինչպես ընթացավ պարսկա-բյուզանդական պատերազմը : Ի՞նչ հետևանքներ ունեցավ 591 թ. 20-ամյա պատերազմը Հայաստանի համար:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. V դ 80-ական թթ հայոց ապստամբական շարժման արդյունքներից էր այն, որ 484 թ. Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգներում (Հայոց Արևելից կողմանք) ու հարակից տարածքներում Հայկազուն-Սիսակյան Առանից տոհմից սերող Վաչագան Բարեպաշտը հիմնում է հայկական թագավորություն: Նրա շնորհիվ բարգավաճում են եկեղեցաշինությունը և դպրոցաշինությունը:Նա ստեղծում է «Սահմանադրութիւն կանոնական»-ը որը ընդունվում է Աղուենի կանոնադիր ժողովում:Այն համաշխարհային և հայ իրավագիտության պատմության մեջ վաղ կանոնագրություններից է:
2. Արևմտյան Հայաստանում այս շրջանում գործում էր Բյուզանդական կայսրության վարչակարգը: Հուստինիանոս I -ի սահմանած օրենքների նպատակը հայ նախարարական տների ներքին կառավարման համակարգը քանդելն էր, հայ նախարարական տիրույթները բաժան-բաժան անելը, ինչպես նաև Արևելյան Հայաստանի նախարարների հետ տոհմական կապը կտրելը 530-531 թթ. կատարում է ռազմավարչական բաժանում, կառավարումը հանձնելով բյուզանդական զինվորական պաշտոնյաներին: Իսկ 536 թ. հրապարակած օրենքով ստեղծում է Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք: Հատուկ օրենքով տոհմական կալվածքներ ժառանգելու իրավունք էր տրվում կանանց ու աղջիկներրին, որով նախարարական հողերը մասնատվում էին:
3. 564թ. Հայաստանում պարսիկ մարզպան Սուրենի նշանակումով ավելի ծանրացան հարկերն ու տուրքերը, վարչական և կրոնական ճնշումները: Չնայած Հովհաննես Բ Գաբեղենացի կաթողիկոսի և նախարարների բողոքներին՝ մարզպանը շարունակում է իր ապօրինի գործողությունները՝ հարստահարում հայ բնակչությանը: Շուտով Սուրենը

սպանում է Մամիկոնյանց տեր Վասակի որդուն, և հայերը 571 թ. ապստամբում են Վասակի մյուս որդու՝ Կրտսեր Վարդանի գլխավորությամբ: 572 թ. փետրվարին հայերը ազատագրում են Դվինը: Կռվի ժամանակ այստեղ սպանվում է Սուրենը: Ապստամբները օգնական զորքեր ստանալով Բյուզանդիայից ջախջախում են պարսիկներին, իսկ Հայաստան մտած պարսից նոր զորավար Միհրանի զորքը պարտվում է Խաղամախյայի ճակատամարտում: Վերսկսվում է պարսկա-բյուզանդական պատերազմը:

4. Պատերազմը սկսվեց պարսից Խոսրով Անուշիրվանի ներխուժումով Հայաստան, ով շուտով հասնում է Կարին, ապա՝ Մելիտենե: Նրա դեմ դուրս է գալիս Վարդանը և պարտության մատնում: 590թ պալատական դավադրությունը Պարսկաստանում փոխում է իրավիճակը պարսկա-բյուզանդական հարաբերություններում և վճռում պատերազմի ելքը: 20-ամյա պատերազմն ավարտվեց վարչաքաղաքական խոշոր փոփոխություններով: Պարսից Խոսրով արքան զիջումներ կատարեց Բյուզանդիային ի հաշիվ Հայաստանի: Հայաստանի 591թ բաժանումով, երկրիմեծ մասն անցավ Բյուզանդիային:Նոր միացրած և նախկին հայկական տարածքներից ու հարակից երկրամասերից բյուզանդացիները կազմավորում են մի շարք խոշոր նահանգներ՝ «Մեծ մասն Մեծ Հայոց», «Մասն Մեծ Հայոց», «Չորրորդ Հայք կամ Վերին Միջագետք», «Մեծ Հայք», «Խորագոյն Հայք», «Ներքսագոյն Հայք» և այլ նահանգներ: Կայսրությունը ամեն ինչ արեց թուլացնելու համար հայոց զորքերի հզորությունը, որով և կանխեց ազատագրական այն շարժումները,որոնք հաճախ կազմակերպում էին հայ զորավարները:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Հայ առաքելական եկեղեցին մշտապես պահպանել է Քրիստոսի մի բնության մասին դավանաբանությունը 451 թ. Քաղկեդոնում տեղի ունեցած IV ժողովում ընդունվել է Քրիստոսի «մի անձ, երկու բնություն» բացատրությունը, և այդ բանաձևի հետևորդները հետագայում կոչվել են քաղկեդոնականներ, իսկ մերժողները՝ հակաքաղկեդոնականներ կամ երկաբնակներ: Հետագայում Դվինի առաջին եկեղեցական ժողովում (506թ.) ուղենշվում է Հայ եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը:
2. Համեմատել քաղկեդոնական և հակաքաղկեդոնական ուղղությունները:
3. Քարտեզի վրա տեղորոշել 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումը:
4. Մեկնաբանել Մորրիկ կայսեր `պարսից արքային ուղարկած նամակի բովանդակությունը:

§ 4. Հայաստանը VII դարում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչպիսի՞ն էր Հայաստանի վիճակը VII դարի առաջին տասնամյակներում:
1. Ինչպե՞ս վերամիավորվեց Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը:
2. Ինչպե՞ս է ձևավորվել Արաբական խալիֆայությունը: Արաբական արշավանքները Ի՞նչ հետևանքներ ունեցան Հայաստանի համար:
3. Ի՞նչ պայմաններով կնքվեց հայ-արաբների պայմանագիրը:
4. Ինչո՞վ է նշանավորվել Հայաստանը VII դարի երկրորդ կեսին: VII դարի երկրորդ կեսին իրենց գործունեությամբ հայտնի ի՞նչ իշխաններ գիտեք:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Թեոդորոս Ռշտունին օգտվելով Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության՝ արաբներից կրած պարտությունից, 639 թ. վերամիավորեց Հայաստանի արևելյան և արևմտյան մասերը: Երկիրը դարձավ ինքնուրույն իշխանապետություն՝ հայոց իշխանի կառավարմամբ, որի նստավայրը Աղթամար կղզին էր:
2. 622 թ. մարգարե Մուհամմեդի օրոք Արաբական թերակղզում տեղի ունեցավ արաբական ցեղերի քաղաքական միավորումը: Դառնալով մուսուլմանական կրոնի և Արաբական խալիֆայության հիմնադիրը, Մուհամեդը սկսեց նվաճողական պատերազմներ վարել բյուզանդացիների, պարսիկների և ապա հայերի դեմ: Արաբները 640 թ. առաջին անգամ ներխուժեցին Հայաստան , գրավեցին ու թալանեցին Դվինը, կոտորեցին բնակչությանըՄի քանի տարի անց նրանք դարձյալ ներխուժում են Հայաստան, Վիրք ու Աղվանք: Արշավանքները մեծ ավերածություններ պատճառեցին երկրին, բայց հայ ժողովուրդը դիմակայեց խալիֆայությանը:
3. Հայ հոգևոր և աշխարհիկ իշխանները,արաբներին դիմակայելու համար շարունակում էին հույսեր կապել Բյուզանդիայի օգնության հետ: Սակայն Թեոդորոս Ռշտունին փորձում էր քաղաքական հարաբերություններ հաստատել Արաբական խալիֆայության հետ: Հայաստանի անվտանգության ապահովման համար Վերին Միջագետքի կառավարիչ Մուավիայի հետ 652 թ. նա կնքում է հայ-արաբական դաշնագիր: Ըստ պայմանագրի՝ խալիֆայությունն առնվազն երեք տարի հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերն այնքան էին վճարելու, որչափ կամենային: Ի հաշիվ գանձվող հարկի՝ հայերը 15 հազարանոց այրուձի էին պահելու, որը պետք է պատրաստ լիներ գործելու այլ տեղերում: Հայաստանում արաբական զորք չէր լինելու: Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան հայերը կամենային:
4. VII դարի երկրորդ կեսը նշանավորվում է Հայաստանի վերականգնված անկախության պահպանմամբ և երկրի բարգավաճմամբ: VII դարի երկրորդ կեսին Հայաստանի

վերականգնված անկախության պահպանման գործում աչքի են ընկել Համազասպ Մամիկոնյանը, ով հաջորդում է Թ. Ռշտունուն և ճանաչվում հայոց իշխան, Գրիգոր Մամիկոնյանը, ում կառավարման շրջանի խաղաղությունը կապված էր խալիֆ դարձած Մուավիայի, ինչպես նաև՝ հայ-արաբական պայմանագրի հետ, Աշոտ Բագրատունին,ում օրոք Հայաստանի վիճակը վատանում է խալիֆայության և կայսրության ներխուժումների հետևանքով: Ներսեհ Կամսարականը, ով կայսեր կողմից ճանաչվում է հայոց իշխան, կառուցում է Թալինի նշանավոր եկեղեցին: Իսկ Սմբատ Բագրատունու իշխանության տարիներին շարունակվում էր հայ ժողովրդի հերոսական դիմադրությունը խալիֆայության զորքերին:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Հայաստանը VII դարի առաջին տասնամյակներում կրկին հայտնվեց պարսկա-բյուզանդական պատերազմական գործողությունների ոլորտում: Պատերազմի առաջին տարիները անցնում էին փոփոխակի հաջողություններով: Հերակլ կայսեր մի քանի արշավանքներ լուրջ հաջողություններով են ավարտվում: Օգտվելով դրանից Արևելյան Հայաստանում այդ ժամանակ սկսվել էր անկախացման գործընթաց՝ մարզպան Վարազտիրոց Բագրատունու գլխավորությամբ: Դրանից էլ անհանգստացած կռվող կողմերը միավորում են իրենց ուժերը և հայերի դեմ գործում միասնաբար: Արևմտյան Հայաստանում ազատագրական ուժերին համախմբում է իշխան Դավիթ Սահառունին,որը ստանձնում է երկրի զորավարությունը: Դառնալով հայոց իշխան մինչև VII դարի 30 –ական թթ. վերջը գլխավորում է երկրի միավորման գործը: Նրան փոխարինում է Թեոդորոս Ռշտունին:
2. Գնահատել հայ-արաբական դաշնագիրը: Ո՞րն էր դրա նշանակությունը:
3. Հիմնավորել հայ իշխանների ունեցած դերը Հայաստանի անկախության վերականգնման գործում:
4. Արժևորել Թեոդորոս Ռշտունու կողմից Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի վերամիավորումը:

§ 5. Հայ նախարարական համակարգը արաբական խալիֆայության գերիշխանության շրջանում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչպե՞ս ձևավորվեց Արմինիա փոխարքայությունը: Ի՞նչ տարածքներ էր այն ընդգրկում իր մեջ:
2. Որո՞նք էին VIIIդ առաջին կեսի հակաարաբական ապստամբությունների պատճառները: Ի՞նչ հետևանքներ և արդյունքներ ունեցան դրանք Հայաստանի համար:
3. Ի՞նչ ընթացք ունեցավ և ինչո՞վ ավարտվեց 774-775 թթ. ապստամբությունը:
4. IX դարում խալիֆայության թուլացման պայմաններում ո՞ր իշխանական տները կրկին հզորացան: Ինչով էր դա պայմանավորված:
5. Ո՞րն էր 850-855 թթ. ապստամբության նպատակը: Ի՞նչ իրադարձություններ տեղի ունեցան այդ ընթացքում:Ո՞րն է ապստամբության ունեցած դերը:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Արաբական խալիֆայությունը 701 թ. կազմեց Արմինիա փոխարքայութունը՝ գրաված Հայաստանի, Վիրքի, Աղվանքի ու Մերձկասպյան շրջաններից: Դրա կենտրոնը նախ Դվինն էր, VIII դ. վերջից՝ Պարտավը: Չնայած խալիֆայության բռնություններին հայ նախարարական համակարգը պահպանվել էր: Հայոց իշխանի պաշտոնը հիմնականում զբաղեցնում էին Բագրատունյաց տան ներկայացուցիչները որոնց անցել էր նաև հայոց սպարապետի պաշտոնը: Իսկ հայոց եկեղեցին շարունակում էր իր ազգապահպան գործունեությունը:
2. Խալիֆայության դեմ առավել հզոր էր 774-775 թթ. ապստամբությունը,որը սկսել է Արտավազդ Մամիկոնյանը Կումայրիից: Գնալով Դվին նա խորամանկությամբ արաբ ոստիկանից զենք է ստանում,ապա հարձակվելով արաբ հարկահավաքի վրա դուրս շպրտում նրան:Այնուհետև Մուշեղ Մամիկոնյանը ջախջախում է Տարոն ներխուժած արաբական ջոկատներին: Շուտով հայերը պաշարում են Կարինը: Ապրիլի 15 –ին հասնելով Արձեշ մարտի են բռնվում արաբների հետ:Խլաթից եկած և դարանակալ արաբական զորքը հարձակվում է հայերի վրա ու պարտության մատնում: 775 թ. ապրիլի 24-ին Արձնի գյուղի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտը ավարտվեց անհաջողությամբ: Հայերը կռվում են հերոսաբար, սակայն ապստամբական ուժերը բավարար չէին և շատերը զոհվում են:
3. IX դարում խալիֆայության թուլացման պայմաններում կրկին հզորացան Բագրատունի, Արծրունի, Սյունիքի, Արցախի հայկական իշխանությունները: Առավել ազդեցիկ էին Բագրատունիները, որոնցից Սմբատ Բագրատունու որդի Աշոտ Մսակերը 804 թ. խալիֆայության կողմից պաշտոնապես ճանաչվեց հայոց իշխան: Նրա եղբայրը՝ Շապուհը, նշանակվեց սպարապետ: Աշոտ Բագրատունին իր նստավայրը տեղափոխեց Բագարան: Աշոտ Մսակերին հայոց իշխանաց իշխանի պաշտոնում հաջորդեց Բագարատ Բագրատունին, ում գլխավորությամբ 850 թ. հայ նախարարները արաբ

հարկահավաքին թույլ չտվեցին երկրի սահմանն անցնել: Այդ քայլով անհնազանդություն էր ցուցաբերվում թուլացող խալիֆայության նկատմամբ :

4. 5. 850-855 թթ. հայ ժողովուրդը շարունակում էր պայքարն անկախ պետականության վերականգնման համար: 850թ. Բագարատ Բագրատունին և Աշոտ Արծրունին արաբ նվաճողներին դուրս քշեցին Տարոնից: 851թ. Յուսուֆի գլխավորությամբ արաբական զորախումբ է մտնում Հայաստան,որը պարտություն կրելով մահապատժի է ենթարկվում: 852 թ. խալիֆը Հայաստան է ուղարկում Բուղային:Նա ասպատակում է Բաղեշը,Խութը,Սասունը,իսկ Վասպուրականում հայերը հերոսաբար դիմադրում են: 852 թ. «Արյան լիճ» կոչվող լճի ափին տեղի ունեցած ճակատամարտը ավարտվում է հայերի հաղթանակով: Պատմիչի վկայությամբ Բուղան այնքան էր հուսալքվել,որ Վասպուրականում պարտվելուց հետո այլևս չի մնում Հայաստանում և հետ է կանչվում: Հայոց հզոր ապստամբությունը սասանեց արաբական տիրապետությունը Հայաստանում:Երկրի քաղաքական զարգացումը ընթացավ հայոց անկախ պետականության և թագավորության վերականգնման հունով: Սմբատ սպարապետի որդին՝ Աշոտ Բագրատունին 855 թ. ճանաչվեց հայոց իշխան ու սպարապետ:

Առարկայի չափորոշիչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Արմինիայի առաջին արաբ ոստիկանի դաժան հարկահանությունը և կրոնական հալածանքները հանգեցրին Սմբատ Բագրատունու գլխավորությամբ առաջին հակաարաբական ապստամբությանը: 703թ. հունվարին Վարդանակերտ ավանում հայերը հարձակվելով առաջինը ջախջախում են արաբներին Սակայն արաբական մեծաքանակնոր զորքը 705թ. դավադրաբար հաշվեհարդար է տեսնում բազմաթիվ հայերի հետ: 725թ.Արմինիա եկած Հերթ ոստիկանի «աշխարհագրով» հարկահանությունը խիստ ծանրացավ: Սա պատճառ դարձավ նոր ապստամբության: 748թ. Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների գլխավորությամբ: Սակայն ապստամբների միջև առաջացած պառակտումը հնարավորություն տվեց արաբներին ճնշել ապստամբությունը՝ դեռ չսկսված: 748-750թթ .ապստամբության ճնշումից հետո էլ Հայաստանը շարունակում էր պահել որոշակի ներքին ինքնավարություն:
2. Գնահատել հայ նախարարական համակարգի դերը արաբական խալիֆայության գերիշխանության շրջանում:
3. Արժևորել 850-855 թթ. ապստամբության նշանակությունը:
4. Բացատրել հայ իշխանական տների հզորացման պատճառները:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (10 ժամ) 1 ._ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՆՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (4 ժամ)

§ 1.Հայաստանի անկախության վերականգնումը և ամրապնդումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որո՞նք էին Հայոց թագավորության վերականգնման արտաքին նախադրյալները:
2. Որո՞նք էին Հայոց թագավորության վերականգնման ներքին նախադրյալները:
3. Քաղաքական ի՞նչ իրադրության պայմաններում Աշոտ Բագրատունին ճանաչվեց Հայաստանի թագավոր:
4. Ինչու՞ Գագիկ Արծրունին պայքարի դուրս եկավ Սմբատ I Բագրատունու դեմ:
5. Ո՞րն էր Դողսի ճակատամարտի պատճառը:
6. Ո՞վ հաջորդեց Սմբատ I-ին : Ի՞նչ գիտեք թշնամու դեմ մղած նրա գործունեության մասին:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Համոզվելով, որ բռնի ուժով հաջողության չի կարող հասնել, խալիֆը 885 թ. արքայական թագ, թանկարժեք զգեստներ ուղարկեց և Աշոտ Բագրատունուն ճանաչեց Հայաստանի թագավոր: Վասիլ I կայսրն իր հերթին շտապեց ճանաչել Աշոտի գահակալությունը: Այսպիսով, 885 թ. օգոստոսի 26-ին Բագարան քաղաքում մեծ հանդիսավորությամբ Աշոտ Բագրատունին կաթողիկոս Գևորգ Գառնեցու կողմից օծվեց հայոց թագավոր:
2. Բյուզանդիայի հետ 893 թ. կնքված պայմանագիրը պատճառ դարձնելով՝ Սաջյան ամիրայի զորքերը ներխուժեցին Հայաստան: Արագածոտն գավառի Դողս գյուղի մոտ 894 թ. տեղի ունեցած ճակատամարտում արաբները պարտություն կրեցին:
3. Սյունյաց իշխանների և Արծրունիների միջև վեճ էր առաջացել Նախճավան քաղաքին տիրելու համար: Սմբատ I-ը այդ հարցը լուծեց Սյունիքի օգտին, և Գագիկ Արծրունին դժգոհ մնալով այդ որոշումից՝ բանակցություններ սկսեց Ատրպատականի ամիրա Յուսոֆի հետ:
4. Սմբատ I-ին հաջորդեց ավագ որդին՝ Աշոտ II-ը (914-922 թթ.), ով ժողովրդի կողմից ստացավ Երկաթ անունը իր խիզխության ու տոկունության համար: Նա հանկարծակի հարձակումներով լուրջ հարվածներ հասցրեց թշնամու ուժերին և ազատագրեց երկիրը: Հայ իշխանների միասնությամբ ազատագվեց ու ամրապնվեց Վասպուրականի թագավորությունը:
5. Աշոտ II Երկաթը 921 թ. Կոստանդնուպոլսում հակաարաբական դաշինք կնքեց: Արաբները, համոզվելո, որ Հայաստանը զենքի ուժով չեն կարող ենթարկել իրենց, 922 թ. Բաղդադի խալիֆը Աշոտ II-ին ճանաչեց Հայաստանի շահնշահ, այսինքն՝ թագավորների թագավոր: Դրանով նա գերապատվություն էր ստանում մյուս թագավորների նկատմամբ:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Արաբական խալիֆայությունը IX դարում սկսել էր թուլանալ, քանի որ տերության ենթակա երկրներում ուժեղանում էր արաբական լուծը թոթափելու համար մղվող պայքարը: Արաբ ամիրաները ձգտում էին անջատվել խալիֆայությունից, իսկ մյուս կողմից Բյուզանդիան էլ աջակցում էր կենտրոնախույս ուժերին:
2. Վեր հանել Հայոց թագավորության վերականգնման ներքին նախադրյալները: Հայաստանում առաջադիմում և խորանում էին ավատատիրական հարաբերությունները, զարգանում էր երկրի տնտեսական կյանքը, միասնական էին հայ ժողովրդի բոլոր խավերը անկախության հասնելու գործում, քանի որ նրանց մեջ կենսունակ էր սեփական պետությունը վերականգնելու գաղափարը:
3. Բացատրել թագավորության վերականգնման ներքին ու արտաքին նախադրյալները:
4. Գնահատել Աշոտ Բագրատունու գործունեությունը թագավորության վերականգնման համար:
5. Արժևորել պետականության վերականգնման նշանակությունը հայ ժողովրդի համար:
6. Բնութագրել Աշոտ Երկաթին:

§ 2. Բագրատունյաց Հայաստանի վերելքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջներ ըստուգելու համար՝

1. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Աբասը:
2. Ի՞նչ գիտեք Անի մայրաքաղաքի մասին
3. Ի՞նչ հաջողություններ ունեցավ Սմբատ II-ը արտաքին քաղաքականության մեջ:
4. Բագրատունյաց թագավորությունն ինչպե՞ս և ու՞մ օրոք հասավ իր հզորության և ծաղկման գագաթնակետին:
5. Ինչպե՞ս վարվեց Գագիկ I-ը Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթի հետ:
6. Ո՞ր իշխանական տոհմը Գագիկ I-ի օրոք հասավ նշանակալի դիրքերի:
7. Ի՞նչ շինարարական աշխատանքներ են կատարվել հայոց թագուհիներ Խոսրովանույշի և Կատրամիդեի օրոք:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Աբասը (928-953 թթ.) մայրաքաղաքը տեղափոխեց Կարս: Նրա օրոք երկրի բնակչությունը զբաղված էր տնտեսության վերականգնմամբ, մի շարք նահանգներում կառուցվում են ջրամբարներ, ջրանցքներ: Կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Շիրակ, հետագայում Անանիա Մոկացին այն տեղափոխեց Արգինայի վանք:
2. Անին 961 թ. հռչակվեց մայրաքաղաք՝ Աշոտ III կողմից: Վերջինս քաղաքը կառուցապատեց շքեղ պալատներով, եկեղեցիներով, բնակելի ու այլ շինություններով: Աշոտ Ողորմածը և նրա հաջորդ Սմբատ II-ը կառուցեցին քաղաքի Աշոտաշեն ու Սմբատաշեն պարիսպները: Ժողովուրդն ասում էր՝ Անին ունի հազար ու մի եկեղեցի:
3. Դվինի ամիրան անսպասելի հարձակվեց Շիրակի վրա, սկզբում հաջողության հասավ, բայց Սմբատ II-ը կարողացավ ջախջախել արաբական զորքը և արաբների վերջին հենակետ Դվինը 987 թ. միացրեց թագավորությանը:
4. Բագրատունյաց թագավորությունը իր հզորության և ծաղկման գագաթնակետին հասավ Գագիկ I-ի օրոք: Նա ընդարձակեց իր պետության սահմանները, հարևանների հետ պահպանեց խաղաղ, բարեկամական հարաբերություններ: Գագիկ I-ը կրում էր «Շահնշահ հայոց» տիտղոսը: Նա ամրացրեց ու մեծացրեց բանակը, հայկական տարածքների մեծ մասը միավորվեց Բագրատունիների կենտրոնական թագավորության գերիշխանության ներքո:
5. Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթը 1001 թ. անհնազանդություն հայտնեց և հրաժարվեց հայոց թագավորի գերիշխանությունը ճանաչելուց: Գագիկի բանակը մտավ Տաշիր-Զորագետ և հպատակեցրեց ամբողջ տարածքը: Դավիթ թագավորը երկրից փախավ և զրկվելով իր հողային տիրույթներից՝ ստացավ «Անհողին» մականունը: Հետագայում նա զղջաց և գնաց Գագիկ I-ի մոտ, ներում խնդրեց և հետ ստացավ իր տիրույթները:
6. Գագիկ I-ի օրոք հզորացավ Պահլավունիների իշխանական տոհմը, որի ներկայացուցիչները ժառանգաբար վարում էին սպարապետի պաշտոնը: Աչքի էր

ընկնում հատկապես Վահրամ Պահլավունին: Նրանք են կառուցել Բջնիի նշանավոր ամրոցը, Ամբերդը, Մարմաշենը և այլն:

7. Խոսրովանույշ թագուհին Զորագետի հովտում հիմնեց Սանահինի, Հաղպատի վանքերը, որոնք նշանավորվեցին որպես հայ մշակույթի նշանավոր կենտրոններ: Գագիկ Ի-ի կինը՝ Կատրամիդե թագուհին, 1001 թ. ավարտեց Անիի Կաթողիկե եկեղեցու շինարարությունը: Այն կառուցվեց հռչակավոր ճարտարապետ Տրդատի նախագծով:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Գնահատել հայոց թագավորների (Աբաս, Սմբատ II, Գագիկ I) գործունեությունը:
2. Պարզաբանել Սմբատ II-ի ներքին և արտաքին քաղաքականության արդյունքները:
3. Արժևորել Անիի դերը՝ որպես մայրաքաղաք:
4. Հիմնավորել Գագիկ Ի-ի օրոք Բագրատունյաց թագավորության հզորության փաստը:

§ 3. Պետական կառավարման համակարգը: Տնտեսության վերելքը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Պետական կառավարման համակարգում ո՞ր պաշտոններն էին կարևոր: Ի՞նչ լիազորություններ ունեին նրանք:
2. Ի՞նչ կառուցվածք ուներ բանակը
3. Ի՞նչ դեր ուներ եկեղեցին միջնադարում:
4. Տնտեսության ո՞ր ճյուղերը վերելք ապրեցին զարգացած միջնադարում:
5. Արհեստների ի՞նչ տեսակներ էին զարգացած Հայաստանում:
6. Ինչ գիտեք քաղաքների կառուցվածքի մասին:
7. Որո՞նք էին զարգացած միջնադարի հայկական նշանավոր քաղաքները:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Պետական կառավարման համակարգում կարևոր էին իշխանաց իշխանի և հայոց սպարապետի պաշտոնները: Իշխանաց իշխանը թագավորին հաշվետու էր ենթակա իշխանների գործունեության համար: Նրան էին ենթարկվում արքայական կալվածքները տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները: Հայոց սպարապետը պետության զինված ուժերի՝ բանակի հրամանատարն էր: Պատերազմի ժամանակ մանր թագավորությունների զորքերի հրամանատարները ենթարկվում էին նրան:
2. Բանակը կազմված էր արքունական և մարզպանական գնդերից: Արքունական գունդը անմիջականորեն ենթարկվում էր թագավորին, իսկ մարզպանական գնդերը՝ իշխաններին: Բանակը կազմված էր հեծելազորից և կրկնակի մեծ քանակով հետևակից: Հայոց զորքի հիմքը այրուձին էր՝ հեծելազորը:
3. Միջնադարում եկեղեցին մեծ մասնակցություն ուներ երկրի կառավարմանը: Եկեղեցին էր ապահովում երկրի միասնականությունը: Եպիսկոպոսական բոլոր թեմերը ենթակա էին հայոց կաթողիկոսին, որն իր հերթին ճանաչում էր թագավորի գերիշխանությունը: Հայոց թագավորի դիրքորոշումը վճռական էր կաթողիկոսի ընտրության ժամանակ: Խոշոր հողատեր էր նաև Հայ եկեղեցին: Մեծ դատավորի իրավունքը պատկանում էր կաթողիկոսին:
4. Զարգացած ավատատիրության շրջանում զարգացան երկրագործությունը, այգեգործությունն ու բանջարաբուծությունը, ինչպես նաև գյուղատնտեսության կարևոր ճյուղերից՝ անասնապահությունը: Հայաստանի տնտեսության ընդհանուր վերելքին խթանում էր նաև ներքին և արտաքին առևտուրը:
5. Արհեստներից Հայաստանում զարգացած էր մետաղագործությունը, հյուսնությունը, մանածագործությունը, գորգագործությունը և կավագործությունը: Արհեստների զարգացման հետ խորանում էր աշխատանքի բաժանումը: Մայր արհեստը ճյուղավորվում էր, և առաջ էին գալիս նոր մասնագիտություններ:

6. Քաղաքի կենտրոնում գտնվում էր միջնաբերդը, որի շուրջը տարածվում էր բուն քաղաքը, որը կոչվում էր շահաստան: Դրանից դուրս քաղաքի արվարձաններն էին, որտեղ բնակվում էին ընչազուրկ խավերը: Պարսպապատ միջնաբերդում էին արքունիքի կամ նշանավոր իշխանի դղյակները: Քաղաքը կառավարում էր քաղաքապետը՝ շահապը:
7. Անին ուներ քաղաքային ինքնավարություն, որի գլուխ կանգնած էր ավագների խորհուրդը: Դվինն ուներ ընդարձակ շուկա և մեծ թվով արհեստանոցներ: Քաղաքների միջնաբերդները հիմնականում կառուցվում էին բլուրների վրա և շրջապատված էին պարիսպներով:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Մեկնաբանել թագավորի իշխանությունը:
2. Նկարագրել բանակի կառուցվածքը:
3. Համեմատել ժամանակի քաղաքը եվրոպական քաղաքի հետ:
4. Քարտեզի վրա տեղորոշել հայկական միջնադարյան քաղաքները:
5. Թվարկել տվյալ ժամանակաշրջանի նշանավոր քաղաքները: Զարգացած միջնադարի հայկական նշանավոր քաղաքներից էին՝ Անին, Դվինը, Կարսը, Արծնը, Վանը:

§ 4. Բագրատունյաց թագավորության մասնատումն ու անկումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որո՞նք էին Բագրատունիների կենտրոնացված պետության թուլացման ներքին և արտաքին պատճառները:
2. Ինչու՞ Բագրատունի թագավորները կենտրոնախույս ուժերի դեմ պայքարում հաջողության չհասան:
3. Ի՞նչ գիտեք Բագրատունիների կենտրոնական իշխանությանը ենթակա թագավորությունների մասին:
4. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Բյուզանդիան Հայաստանի նկատմամբ:
5. Որ իրադարձությունից հետո Բագրատունյաց թագավորությունն ավելի թուլացավ:
6. Բյուզանդական կայսրը ի՞նչ քայլեր ձեռնարկեց Անին գրավելու համար:
7. Որո՞նք էին Անիի Բագրատունյաց թագավորության պատճառները:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում Հայաստանում տնտեսական զարգացման գործոններն առկա էին, որոնք պետք է խթանեին միավորման ու կենտրոնացված պետության ստեղծմանը, սակայն պատմական այդ բնական գործընթացի իրականացմանը խանգարեց Բյուզանդական կայսրությունը՝ տիրելով երկրի զգալի մասին վերջ տվեց Բագրատունյաց թագավորությանը:
2. Բյուզանդիան 10-րդ դարի երկրորդ կեսից Հայաստանի նկատմամբ որդեգրեց նվաճողական քաղաքականություն: Տարոնի իշխան Աշոտ Բագրատունու մահից հետո՝ 966 թ., իշխանությունը միացվեց Բյուզանդիական կայսրությանը: Դավիթ Կյուրապաղատի մահից հետո Վասիլ II-ը կայսրը Տայքը միացրեց կայսրությանը: 1021 թ. Վասպուրականի թագավորությունը հարկադրաբար հանձնվեց կայսրությանը: Անմիջական վտանգ էր կախվել Անիի թագավորության գլխին:
3. 1022 թ. Տրապիզոնում բանակցություններ սկսվեցին Տայքի պատկանելության շուրջ՝ Բյուզանդիայի և Վրաստանի միջև: Բանակցություններին Հայաստանից մասնակցում էր Պետրոս կաթողիկոսը: Այստեղ Վասիլ II-ը պահանջեց Անիի թագավորությունը հանձնել Բյուզանդիային: Հովհաննես-Սմբատը կաթողիկոսի և կայսեր ճնշմամբ սորագրեց իր մահից հետո Անիի թագավորությունը Բյուզանդիային անցնելու մասին կտակը, որն ավելի թուլացրեց Բագրատունյաց թագավորությունը:
4. Բյուզանդական կայսրը հայոց թագավորներ Հովհաննես-Սմբատի և Աշոտ IV-ի մահից հետո մեծ բանակ ուղարկեց Անին գրավելու համար: Քաղաքի պաշտպանությունը ժողովրդի պահանջով ղեկավարեց Վահրամ Պահլավունին, ում գլխավորությամբ հայերը հարձակվեցին բյուզանդական զորքի վրա ու փախուստի մատնեցին: Այս հաղթանակից հետո գահ բարձրացավ Աշոտի 18-ամյա որդին՝ Գագիկ II-ը:
5. Գագիկ II-ը 1044 թ. մեկնում է Կոստանդնուպոլիս, որտեղ Կոստանդին Մոնոմախ կայսրը բանակցելու փոխարեն հայոց թագավորից պահանջում է Անին հանձնել կայսրությանը: Հայոց թագավորը մերժում է այդ պահանջը, որից հետո կայսրը զորք է ուղարկում Անին

գրավելու համար: 1045 թ. Անին հանձնվեց բյուզանդացիներին, քանի որ արքունիքում մեծացել էր բյուզանդամետների թիվը, ջլատվել ու թուլացել էր բնակչության դիմադրական ուժը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել Բագրատունիների կենտրոնացված պետության թուլացման ներքին և արտաքին պատճառները :Երկրի ծայրագավառների նշանավոր իշխանությունները, տնտեսական և ռազմական բավարար հզորություն ունենալով, հաճախ ձգտում էին անկախության: Կենտրոնախույս ուժերը խրախուսվում էին Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության կողմից: Խալիֆայությունը չէր հաշտվում Հայաստանը կորցնելու իրողության հետ: Բյուզանդիան հայոց պետությունը թուլացնելու, երկրի արևմտյան տարածքները կայսրությանը միացնելու քաղաքականություն էր վարում:
2. Թվարկել ենթակա թագավորությունները՝ նշելով դրանց մասին որոշ փաստեր: Բագրատունիների կենտրոնական իշխանությանը ենթակա թագավորություններից էին՝ Վասպուրականի (908 թ.), Վանանդի կամ Կարսի (963 թ.), Տաշիր-Զորագետի կամ Լոռու(978 թ.), Սյունիքի (987 թ.) թագավորությունները: Վասպուրականի թագավորության հիմնադիրն էր Գագիկ Արծրունին: Այն ընդգրկում էր Վանա և Կապուտան լճերի միջև ընկած տարածքը: Վանանդի կամ Կարսի թագավորության հիմնադիրը Աշոտ III-ի եղբայր Մուշեղ Բագրատունին էր: Նրան հաջորդեց Աբասը, ով մեծ ուշադրություն դարձրեց բանակին: Տաշիր-Զորագետի կամ Լոռու թագավորության հիմնադիրը Աշոտ III-ի որդի Գուրգենն էր: Այն զբաղեցնում էր Գուգարք նահանգի մեծ մասը:Թագավորությունն իր հզորության գագաթնակետին հասավ Դավիթ Անհողինի օրոք: Սյունիքի իշխան Սմբատն էլ հիմնադրեց Սյունիքի թագավորությունը, որի կենտրոնը սկզբում Սյունի ավանն էր, իսկ հետո Կապանը: Այս թագավորություններն ընդունում էին Անիի Բագրատունիների գերիշխանությունը:
3. Լրացնել աղյուսակը:

Արքա	Գահակալման տարեթվեր	Գործունեություն
Աշոտ I	885-890 թթ	
Սմբատ I	890-914 թթ	
Աշոտ II Երկաթ	914-928 թթ	
Աբաս	928-953 թթ	
Աշոտ III	953-977 թթ	
Սմբատ II	977-990 թթ	
Գագիկ I	990-1020 թթ	
Գագիկ II	1042-1045 թթ	

4. Քարտեզի վրա տեղորոշել Անիի և ենթակա թագավությունների սահմանները:
5. Պարզաբանել Անիի թագավորության թուլացման և անկման պատճառները:
6. Մեկնաբանել թագավորության անկման հետևանքները:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XI-XIV ԴԱՐԵՐՈՒՄ (2 ժամ)

§ 1. Հայաստանը XI դարի երկրորդ կեսին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Բյուզանդիան ի՞նչ քայլերի դիմեց Անիի թագավորության անկումից հետո: Հայաստանում կենտրոնական թագավորության անկումը ի՞նչ հետևանքներ ունեցավ:
1. Ովքե՞ր էին թյուրք-սելջուկները: Ի՞նչ արշավանքներ են ձեռնարկել թյուրք-սելջուկները դեպի Հայաստան:
2. Ո՞րն էր բյուզանդացիների և սելջուկ-թյուրքերի միջև վճռական ճակատամարտը: Ի՞նչ հետևանք ունեցավ այն Բյուզանդիայի համար:
3. XI դարի երկրորդ կեսին ի՞նչ իրավիճակ էր տիրում Հայաստանում:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ սելջուկյան տիրապետության հաստատումը Հայաստանում:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Սելջուկ-թյուրքերի նախնիները քոչվոր անասնապահներ էին: Նրանք զբաղեցնում էին Ալթայից մինչև Միջին Ասիա ընկած տարածքը: Սելջուկ-թյուրքերը արշավանքներ իրականացրեցին 1047 թ., որի ժամանակ սելջուկների 20-հազարանոց բանակը ներխուժեց Հայաստան, անարգել հասավ մինչև Բասեն՝ ավերելով բազմաթիվ բնակավայրեր: 1048 թ. երկրորդ արշավանքի ընթացքում ավերելով ու թալանելով հայկական բնակավայրերը, սելջուկները հարուստ ավարով վերադարձան Ատրպատական: 1054 թ. և 1064 թ. արշավանքները նույնպես Բյուզանդիայի թողտվությամբ ավարտվեցին սելջուկների հաղթանակով:
2. 1071 թ. բյուզանդացիները փորձեցին կասեցնել սելջուկների առաջխաղացումը: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մանազկերտի մոտ: Ճակատամարտում բյուզանդացիները պարտություն կրեցին սելջուկ-թյուրքերից: Գերեվարվեց կայսր Դիոգենեսը: Կնքվեց հաշտություն, որով բյուզանդացիները ճանաչեցին սելջուկների տիրապետությունը Հայաստանի և Փոքր Ասիայի վրա: 1074 թ. հաստատվեց սելջուկյան պետության իշխանությունը Փոքր Ասիայում:
3. Բագրատունիները գահազրկվել էին Անի-Շիրակում, սակայն շարունակում էին իշխել Կարսում, Տաշիր-Զորագետում, Սյունիքում: Հայկական անկախ թագավորություններից բացի, իրենց կիսանկախ վիճակը պահպանում էին բազմաթիվ այլ իշխանություններ ու կազմակերպություններ Տայքում, Սասունում, Սպեր-Բաբերդում, Արցախում և այլուր:
4. Հայաստանի տարածքում ստեղծվեցին Մանազկերտի, Խլաթի և այլ սելջուկյան իշխանություններ: Օտար, քոչվոր անասնապահական կենցաղը ծանր հարված հասցրեց Հայաստանի տնտեսությանը, մեծ չափեր ընդունեց բնակչության արտագաղթը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել Բուզանդիայի անհեռատես քաղաքականության հետևանքները: Բյուզանդիան ձգտելով ավելի թուլացնել Հայաստանը՝ հայ իշխաններին տվեց կալվածքներ կայսրության արևմտյան մասերում, բարձր տիտղոսներ, ցիրուցան արեց հայկական զորքը, սկսվեց բնակչության զանգվածային արտագաղթ դեպի Փոքր Ասիա, Վրաստան և այլ շրջաններ: Բնակչությունը ենթարկվեց ծանր հարկման, հարկման ենթարկվեց նաև եկեղեցին: Բյուզանդիայի այս անհեռատես քաղաքականությունը ճակատագրական եղավ ինչպես Հայաստանի, այնպես էլ կայսրության համար:
2. Համեմատել դեպի Հայաստան արաբական և սելջուկյան արշավանքները, դրանց հետևանքները:
3. Բացահայտել Բյուզանդիայի վարած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ սելջուկ-թյուրքերի արշավանքների ժամանակ:

§ 2..Հայ ժողովրդի ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ (XII- XIVդարեր)

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. XI դարի երկրորդ կեսին Հայաստանում ո՞ր իշխանություններն էին պահպանվել,
2. Ինչու՞ Հայաստանում առաջացան մահմեդական իշխանություններ:
3. Ի՞նչ դեր ունեին Զաքարյանները վրացական արքունիքում և ի՞նչ արդյունք ունեցավ հայ-վրացական զինակցությունը
4. Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում մոնղոլական արշավանքները դեպի Հայաստան, և ի՞նչ արդյունք ունեցան դրանք:
5. Ի՞նչ հետևանքներ ունեցան մոնղոլների տիրապետությունը Հայաստանում: Ինչո՞վ էր պայմանավորված մոնղոլների սկզբնական մեղմ վերաբերմունքը Հայ եկեղեցու նկատմամբ:
6. Որո՞նք էին մոնղոլների դեմ ապստամբության պատճառները և հետևանքները:
7. Ո՞ր վարչամիավորի մեջ մտավ Հայաստանը մոնղոլների օրոք, հայկական որ տոհմերը պահպանեցին իրենց դիրքերը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1065 թ. Կարսի թագավոր Գագիկ Արբասյանը, վախենալով սելջուկներից, իր թագավորությունը հանձնեց Բյուզանդիային՝ հեռանալով Փոքր Ասիա: Սյունիքի, Տաշիր – Զորագետի թագավորությունները, օգտվելով սելջուկների թուլացումից, վերականգնեցին իրենց տիրույթները, իսկ հարավում՝ Սասունում, պահպանվում էր Թոռնիկյանների իշխանությունը:
2. Սելջուկյան պետության մասնատման հետևանքով Հայաստանում առաջացան մահմեդական իշխանություններ՝ Շաղադյանները, Շահ –Արմենների ամիրայությունը, Գանձակի աթաբեկությունը, որոնց դեմ XI դարի վերջերից համատեղ պայքարի դուրս եկան հայերն ու վրացիները:
3. Թամար թագուհու օրոք հայ-վրացական զինակցությունը հասավ իր գագաթնակետին: Հայ զորականներից Սարգիս Զաքարյանը 1185 թ. ստացավ ամիրսպասալարի՝ սպարապետի, պաշտոնը, որին հաջորդեց որդին՝ Զաքարե Զաքարյանը, իսկ վերջինիս կրտսեր եղբայր Իվանեն դարձավ աթաբեկ՝ թագաժառանգի խնամակալ:Հայ- վրացական զինակցության արդյունքում XII դարի վերջին և XIII դարի սկզբին ազատագրվեցին Հյուսիսային Հայաստանի բազմաթիվ շրջաններ, և Հայաստանում ստեղծվեց Զաքարյանների իշխանապետությունը: Նրանց ենթակա իշխանություններ կազմավորվեցին Վայոց Զորում, Արագածոտնում, Սյունիքում, Արցախում:
4. 1236թ. մոնղոլական 30 հազարանոց զորքը Չարմաղանի գլխավորությամբ ներխուժեց Հայաստան: Թշնամին լուրջ դիմադրության չհանդիպեց, քանի որ Զաքարյանների իշխանապետությունը մասնատված էր, կային ներքին երկպառակտություններ,

Վրաստանը կորցրել էր իր նախկին հզորությունը։Այս ամենի արդյունքում մոնղոլներին հաջողվեց հպատակեցնել Հայաստանը։

5. Մոնղոլները Հայաստանը մտցրին էլղանություն վարչամիավորի մեջ։ Իրենց դիրքերը պահպանեցին Օրբելյանները Սյունիքում, Դոփյանները՝ Վերին Խաչենում, Հասան Ջալալյանները՝ Ներքին Խաչենում, Ազիզբեկյանները՝ Արայի լեռան շրջանում։ 1266 թ. ստեղծվեց հայ-վրացական Սամցխե-Ջավախք իշխանությունը, որը անկախ էր մոնղոլական պետությունից և գոյատևեց մինչև XVI դարի վերջը։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Գնահատել Զաքարյան իշխանական տոհմի դերը և հայ-վրացական զինակցության նշանակությունը Հայաստանի հյուսիս -արևելյան շրջանների ազատագրման գործում ։
2. Բացատրել, որ Մոնղոլների տիրապետությունը աղետաբեր էր Հայաստանի համար։ Բերրի դաշտերը և քաղաքները վերածվեցին արոտավայրերի, վերսկսվեց զանգվածային արտագաղթ, բնակչությունից գանձվում էին զանազան հարկեր, կազմում էին զինված ջոկատներ, որոնց ուղարկում էին ամենավտանգավոր ճակատները։ Մոնղոլ նվաճողները սկզբնական շրջանում մեղմ քաղաքականություն էին վարում Հայ եկեղեցու նկատմամբ։ XIII դարի վերջին նրանք ընդունեցին իսլամը և սկսեցին կրոնական հալածանքները։
3. Բացատրել մոնղոլների դեմ ապստամբության պատճառները և հետևանքները։ Մոնղոլների տիրապետությունը և հարկերի բարձրացումը զայրույթի ալիք բարձրացրին հպատակ ժողովուրդների մոտ։ 1249 թ. նախապատրաստվում էր ապստամբություն հայ և վրաց իշխանների կողմից, որը բացահայտվեց և ճնշվեց։ 1259թ. բռնկվեց նոր ապստամբություն, որը դաժանորեն ճնշվեց, իսկ ղեկավարները ենթարկվեցին մահապատժի։
4. Համապատասխանեցնել իշխանական տոհմն ու բնակավայրը։

Իշխանական տոհմ	**Բնակավայր**
1, Զաքարյաններ	Շիրակ, Արարատյան դաշտ , Սևան
2. Վահրամյաններ	Տավուշ, Գարդման, Փառիսոս
3. Զաքարյանների մեկ այլ ճյուղ	Ջավախք, Թմուկ բերդ
4. Պռոշյաններ	Վայոց ձոր
5. Վաչուտյաններ	Արագածոտն
6. Օրբելյաններ	Սյունիք
7. Հասան- Ջալալյաններ	Արցախ, Խաչեն

ԳԼՈՒԽ 3. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (4 ժամ)

§ 1. Հայկական պետականության առաջացումը Կիլիկիայում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որտե՞ղ է գտնվում Կիլիկիան և աշխարհագրական ի՞նչ տարածքներ է ընդգրկում: Հայկական պետականության առաջացման ի՞նչ նախադրյալներ կային Կիլիկիայում:
2. Հայկական ի՞նչ իշխանություններ էին ստեղծվել Կիլիկիայում և ի՞նչ դեր են խաղացել:
3. Հայկական ո՞ր իշխանություն էր Կիլիկիայում կենսունակ և Հայոց պետականության կերտող:
4. Ի՞նչ արտաքին քաղաքական խնդիրներ կային Կիլիկիայի հայկական պետականության համար սկզբնական փուլում:
5. Ի՞նչ հետևանքներ ունեցան խաչակրաց արշավանքները Կիլիկիայի համար:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Կիլիկիան գտնվում է Փոքր Ասիա թերակղզու հարավ-արևելքում, ընդգրկում է Լեռնային Կիլիկիան, Դաշտային Կիլիկիան և Քարուտ Կիլիկիան: Կիլիկիան դեռևս հին ժամանակներից ծանոթ էր հայերին, որտեղ հայերը բնակություն էին հաստատել, իսկ X դարում արդեն զգալի թիվ էին կազմում: Հայ բնակչությունը ուներ կայուն կազմակերպված սոցիալական միջավայր և հայոց եկեղեցու թեմեր: XI դ. սկսվում է հայ բնակչության արտագաղթ դեպի Կիլիկիա, որտեղ հիմնականում տեղափոխվում էին արքայական և իշխանական ընտանիքներ (Արծրունիներ, Բագրատունիներ): XI դ. վերջերից Կիլկիկիայի ամբողջ բնակչության գերակշիռ մասը հայեր էին: Բացի հայերից՝ Կիլիկիայում ապրում էին հույներ, ասորիներ, արաբներ, հրեաներ:
2. 1042 թ. Ապլղարիպ Արծրունին Բյուզանդիայի կողմից նշանակվել է Կիլիկիայի կառավարիչ, ում հանձնվեցին Մսիս, Տարսոն, Ադանա քաղաքները, Լամբրոն և Պապեռոն բերդերը: Բագրատունյաց վերջին արքա Գագիկ II –ը հաստատվել էր Կիլիկիայի Պիզու քաղաքում: 1065 թ. Կարսի թագավոր Գագիկ Կարսեցին իր թագավորության դիմաց ստացավ Կիլիկյան Տավրոսի Ծամնդավ բերդաքաղաքը: Իշխան Փիլարտոս Վարաժնունին Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայի արևելյան շրջաններում 1072 թ. հիմնադրում է ընդարձակ հայկական իշխանություն՝ կենտրոնը Մարաշ քաղաքն էր: Հյուսիսային Ասորիքում և Արևելյան Կիլիկիայում 1082–1117 թթ. գոյություն է ունեցել Գող Վասիլի հայկական իշխանությունը՝ Քեսուն կենտրոնով:Այս իշխանությունները թեև կարճ կյանք ունեցան, սակայն որոշ ժամանակ խոչընդոտեցին սելջուկների ներթափանցումը Կիլիկիա:
3. Հայ իշխաններից Ռուբենը 1080 թ. Լեռնային Կիլիկիայում հիմնեց Ռուբինյան հայկական իշխանություն Կոռոմոզոլ կենտրոնով: Ռուբենին հաջորդեց նրա որդի Կոստանդին I-ը, ում օրոք իշխանությունն ավելի ընդարձակվեց և ամրապնդվեց: 1098

թ. նա բյուզանդացիներից խլեց նշանավոր Վահկա բերդը՝ դարձնելով իշխանության կենտրոն։Նորաստեղծ հայկական իշխանության շրջանակներում լուծվեց կարևոր մի խնդիր՝ գահաժառանգության հարցը։

4. Ռուբինյան իշխանության գոյությանը սպառնում էին ոչ միայն Բյուզանդիան, այլ նաև Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը։ Սակայն սկսված խաչակրաց առաջին արշավանքը թշնամիների ուշադրությունը որոշ ժամանակ շեղեց Կիլիկիայից։
5. 1097թ. խաչակիրները սկսում են Դաշտային Կիլիկիայի քաղաքների նվաճումը, որից հետո Ասորիքում և Պաղեստինում հիմնում են խաչակրաց պետություններ։ Սակայն խաչակրաց պետությունների թուլացմանը զուգահեռ հայ-խաչակրաց հարաբերություններում սկսում է գերակշռել դաշնակցային պարտավորությունները, քանզի մահմեդական վտանգը սպառնում էր նրանց գոյությանը։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Քարտեզի վրա ցույց տալ Կիլիկիան՝ որպես աշխարհագրական միավոր և Կիլիկիան՝ որպես պետություն
2. Գնահատել հայրենիքի բնիկ տարածքներից դուրս պետականություն կերտելու հայ ժողովրդի ձգտումը։
3. Բացատրել հայկական պետության ստեղծման նախադրյալները Կիլիկիայում։
4. Թվարկել Կիլիկյան Հայաստանի իշխանությունները և նրանց կենտրոնները։

§ 2. Կիլիկյան Հայաստանի ամրապնդումը: Հայոց թագավորության վերականգնումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչպիսի՞ արդյունք ունեցավ Թորոս I-ի և Լևոն I-ի գործնեությունը
2. Ի՞նչ կարևոր ձեռքբերումներ ունեցավ Կիլիկիան Թորոս II –ի օրոք:
3. Ի՞նչ հաջողություններ ունեցավ Կիլիկիան Մլեհի օրոք:
4. Ի՞նչ իրավիճակ էր Կիլիկյան Հայաստանում XII դարի վերջին: Թագավորության հռչակման համար միջազգային ինչպիսի՞ իրավիճակ էր ստեղծվել Լևոն II-ի կառավարման շրջանում:
5. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Լևոն II-ը թագավոր ընտրվելուց հետո:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Ռուբինյան պետության հետագա զոյատևման համար կարևոր էր Դաշտային Կիլիկիայի նվաճումը, ուստի անհրաժեշտ էր գրավել գյուղատնտեսության համար կարևոր կենսական տարածքներ և առևտրական ճանապարհների վրա գտնվող քաղաքներ, Միջերկրական ծովի ափերի նավահանգիստներ: Թորոս I-ը 1104 թ. գրավեց Սիս և Անարզաբա քաղաքները՝ վերջինս դարձնելով մայրաքաղաք:
   Թորոս I-ի ն հաջորդած Լևոն I-ը 1132 թ. գրավեց Մսիս, Ադանա և Տարսոն քաղաքները, և համառ պայքարի արդյունքում Կիլիկիայի հարավային սահմանները հասան մինչև Միջերկրական ծով:Բյուզանդիան, չհաշտվելով Կիլիկիայի կորստի հետ, պատրաստվեց նվաճել այն, և դրա արդյունքում մի քանի տարով Կիլիկիայի հայկական պետությունը դադարեց գոյություն ունենալ:
2. Թորոս II –ը 1145 թ. գալով իշխանության՝ բյուզանդացիներից հետ է գրավում Վահկան, Անավարզան, Մսիսը, Տարսոնը և վերականգնում հայկական պետությունը: Նա ստեղծեց 30 հազարանոց բանակ: 1151թ. հայոց կաթողիկոսի նստավայրը տեղափոխեց Հռոմկլա, ուր մնաց մինչև 1292թ/:
3. Թորոս II–ին հաջորդեց եղբայրը՝ Մլեհը: Նա դաշնակցելով Հալեպի ամիրայի հետ խաչակիրներից հետ վերցրեց Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջաններում գտնվող բերդերը: 1173 թ. Մլեհը բարեկարգեց Սիսը և դարձրեց Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք: Նրա քաղաքականությունը նպաստեց հայոց պետության ամրապնդմանն ու հզորացմանը:Սակայն նա դարձավ իշխանների և հոգևորականների դավադրության զոհ, քանի որ համագործակցում էր իսլամական երկրների հետ:
4. Մլեհին հաջորդած Ռուբեն III-ը գրավեց Կիլիկիայի արևմտյան շրջանները՝ վերացնելով բյուզանդական տիրապետության վերջին հենակետները: 1187 թ. Կիլիկիայում իշխանությունը անցնում է Լևոն II–ին, ում կառավարման շրջանում ստեղծված միջազգային իրավիճակը բարենպաստ էր Կիլիկիայի համար: Երուսաղեմը մահմեդականներից գրավելու համար 1189 թ. սկսվեց խաչակրաց III արշավանքը, որն անհաջողության մատնվեց: XII դարի վերջին Կիլիկյան Հայաստանը Մերձավոր Արևելքի ամենաուժեղ քրիստոնյա երկիրն էր: Եգիպտոսի հզորացումից և Երուսաղեմի անկումից

հետո խաչակիրների վիճակը ծանրացել էր: Նրանց օգնելու գործում Արևմտյան Եվրոպան հույսեր էր կապում նաև Կիլիկյան Հայաստանի հետ: Լևոն II-ը ձեռնարկում էր քայլեր արքայական թագ ձեռք բերելու ուղությամբ և սկսեց բանակցել Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Հենրիխ VI-ի հետ:

5. 1198 թ. հունվարի 6-ին՝ Սբ. Ծննդյան օրը, Տարսոն քաղաքի Մայր տաճարում Լևոն II-ը Գրիգոր Զ Ապիրատի կողմից մեծ հանդիսավորությամբ օծվեց հայոց թագավոր: Նրա օրոք Կիլիկիան վերելք ապրեց : Լևոնը միացրեց արքունիքին Լամբրոն բերդը, վերականգնեց և բարեկարգեց Այաս և Կոռիկոս նավահանգիստները: Կառուցեց ռազմական և առևտրական նավատորմ, կարգավորվեց դրամաշրջանառությունը, զարգացավ առևտուրը: Վերելք ապրեց մշակույթը և գիտությունը: 1216 թ. Լևոն II–ը թագաժառանգ նշանակեց իր մանկահասակ դուստր Զաբելին: Թագավորը, ով հայտնի է Լևոն Մեծագործ անունով, մահացավ 1219 թ., իր հաջորդներին թողնելով հզոր պետության:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Ներկայացնել Դաշտային Կիլիկիայի համար մղված պայքարի արդյունքները:
2. Կարծիք հայտնել Մլեհի քաղաքականության վերաբերյալ:
3. Արժևորել Լևոն II-ի վարած քաղաքականությունը՝ Կիլիկիան թագավորություն հռչակելու ուղղությամբ:
4. Գնահատել Կիլիկիայում հայկական թագավորության ստեղծման պատմական պայմանները և նշանակությունը:
5. Վերլուծել Կիլիկիայում Հայոց թագավորության հռչակման պատմական նշանակությունը:
6. Արժևորելել Լևոն Մեծագործի քաղաքականությունը:

§ 3. Կիլիկիայի հայկական թագավորությունը XIII- XIVդդ.

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչպե՞ս Կիլիկիայում հաստատվեց Հեթումյանների արքայատոհմը:
2. Քաղաքական ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Մերձավոր Արևելքում XIII դարում:
3. Ի՞նչ պայմաններով կնքվեց հայ-մոնղոլական դաշինքը:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Կիլիկիայի և մամլուքների միջև 1266 թ. սկսված պատերազմը:
5. Ինչպիսի՞ իրավիճակ էր Կիլիկիայում XIV դարի սկզբին: Ովքե՞ր են ունիթորները:
6. Ինչպիսի՞ արդյունք ունեցավ արտաքին թշնամու դեմ պայքարը XIV դարի սկզբին:
7. Ինչո՞ւ անկում ապրեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, և ի՞նչ ճակատագիր ունեցավ Կիլիկիայի վերջին արքան:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. 1226 թ. Լևոն II-ի դուստր Զաբելի և Կոստանդին Գունդստաբլի որդի Հեթումի ամուսնությամբ վերջնականապես լուծվեց գահակալության խնդիրը, և հաստավեց Հեթումյան արքայատոհմը:
2. Հայ-մոնղոլական դաշինքը կնքվեց 1254 թ. Հեթում I –ի և Մանգու մեծ խանի միջև: Երկու կողմերը պարտավորվում էին միմյանց օգնել պատերազմների ժամանակ: Հայոց եկեղեցիներն ու վանքերը ազատվում էին հարկերից: Հայոց թագավորը ձգտում էր ստեղծել քրիստոնեա-մոնղոլական դաշինք՝ ընդդեմ մահմեդականների:
3. 1250թ. եգիպտոսում իշխանության եկած մամլուքներին անհանգստացնում էր մոնղոլա-հայ-խաչակրաց ռազմա-քաղաքական դաշինքը: 1266 թ. օգոստոսի 23-ին Սև լեռների մոտ, Մառի կոչված վայրում հայերը պարտություն կրեցին, իսկ 1268 թ. մամլուքները գրավեցին Անտիոքը: Այս իրադարձությունները վերջ դրեցին քրիստոնեա-մոնղոլական դաշինք ստեղծելու Հեթումի ծրագրին: 1270 թ. գահը անցավ Հեթումի որդուն Լևոն III –ին: 1292 թ. մամլուքները գրավեցին հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլան, իսկ նոր արքա Հեթում II-ը կաթողիկոսությունը տեղափոխեց Սիս:
4. 1321 թ. Կիլիկիա ներխուժեցին մոնղոլները և թուրքմենները՝ հասնելով Ադանա և Սիս, 1322 թ. Կիլիկիա արշավեցին մամլուքները՝ գրավելով Այաս նավահանգիստը: 1323 թ. մայիսի 31-ին կնքվում է հայ-եգիպտական պայմանագիրը Կահիրեում, որով Կիլիկիան պարտավորվում էր Եգիպտոսին վճարել 1,2 մլն. արծաթ դիրհեմ՝ Այաս նավահանգստից, եգիպտոսը պարտավորվում էր զորքերը դուրս բերել Կիլիկիայից: Հետագա տարիներին շարունակվեցին մամլուքների ավերիչ արշավանքները: 1342թ. Կիլիկիայում գահ բարձրացավ ֆրանսիական ծագում ունեցող Գվիդոն Լուսինյանը, սակայն ակնկալվող Արևմուտքի ռազմա-քաղաքական օժանդակությունը չստացվեց:
5. 1373 թ. Կիլիկիայում գահ է բարձրանում վերջին արքա Գվիդոն Լուսինյանի որդի Լևոն VI-ը: Այդ ժամանակ հայկական թագավորությունը բացի մայրաքաղաք Սսից ընդգրկում էր Անավարզան և մի քանի բերդեր Լեռնային Կիլիկիայում: Մամլուքները և կարամանները պաշարում են մայրաքաղաքը: Ռազմամթերքի և սննդամթերքի պակասը

ստիպում է հայերին հանձնել միջնաբերդը։ 1375 թ. ապրիլի 16-ին Սսի անկումով վերջ դրվեց հայոց պետականությանը Կիլիկիայում։ Գերվեցին Լևոն Լուսինյանը և Պողոս Սսեցի կաթողիկոսը։ Սուլթանը հայոց կաթողիկոսին թույլատրեց վերադառնալ Կիլիկիա, իսկ Լևոն VI-ը տեղափոխվեց Արևմտյան Եվրոպա։Նա մահացավ 1393թ. Փարիզում։

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ XIII դարի կեսերին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան քաղաքական փոփոխություններ, որոնք կապված էին մոնղոլական արշավանքների և Եգիպտոսում մամլուքների իշխանության հաստատման հետ։ Մոնղոլական արշավանքները նոր խնդիրներ ստեղծեցին հայկական պետության համար, ուստի մոնղոլներին առաջարկվեց կնքել դաշինք։ Հայ-մոնղոլական դաշինքը երկու կողմերին էլ ձեռնտու էր։ Մոնղոլները ծրագրել էին գրավել Ասորիքն ու Պաղեստինը և վստահելի դաշնակցի կարիք ունեին, որը կարող էր լինել քրիստոնյա Կիլիկյան Հայաստանը։
2. Վերլուծել Կիլիկիայում XIV դարի սկզբին տիրող իրավիճակը։ Կիլիկիայի համար անբարենպաստ վիճակը շարունակվեց XIV դարի սկզբին։ Իրավիճակը ավելի բարդացավ, քանի որ մոնղոլները ընդունել էին մահմեդականություն և փոխել վերաբերմունքը քրիստոնյաների հանդեպ։ Մոնղոլա-մամլուքյան հակամարտությունը ավարտվեց մամլուքների հաղթանակով։ Ծանր վիճակից դուրս գալու համար Կիլիկյան Հայասսանը բանակցություններ սկսեց Բյուզանդիայի, Արևմտյան Եվրոպայի երկրների և Հռոմի պապի հետ 1307 թ. Սիս քաղաքում հրավիրված ժողովում հայերը խոստանում էին օգնության դիմաց որոշ զիջումներ կատարել հունական և կաթոլիկ եկեղեցիներին։Այստեղ որոշվեց ընդունել Քաղկեդոնի երկաբնակության դավանանքը։ Եկեղեցիների միավորմամբ հայոց արքունիքը աշխատում էր ստեղծել քրիստոնեական երկրների դաշինք մահմեդականների դեմ։ Եկեղեցիների միավորման կողմնակիցները կոչվեցին ունիթորներ, իսկ ովքեր դեմ էին միավորմանը՝ հակաունիթորներ։ Պայքարը նրանց միջև թուլացրեց երկիրը և խախտեց Կիլլիկիայի հասարակության միասնությունը։
3. Արժևորել Հեթում I-ի կողմից կնքված հայ-մոնղոլական պայմանագիրը։
4. Բացատրել մոնղոլների հետ դաշնակցելու Հեթում I-ի քաղաքականության պատճառները։
5. Մեկնաբանել Կիլիկիայում կրոնական-քաղաքական խմբավորումների դիրքորոշումները և փորձել գնահատել դրանց ազդեցությունը պետության հետագա ճակատագրի վրա։

§ 4. Կիլիկյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները և պետական կարգը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Տնտեսության ո՞ր ճուղերն էին զարգացած Կիլիկիայում: Հողատիրության ի՞նչ ձևեր կային Կիլիկյան Հայաստանում:
2. Ո՞րն էր գյուղական բնակչության կազմակերպման հիմնական ձևը:
3. Ի՞նչն էր նպաստում արհեստագործության և առևտրի զարգացմանը, դրամաշրջանառության աճին: Որո՞նք էին թագավորական քաղաքները:
4. Ի՞նչ գործակալություններ կային Կիլիկյան Հայստանում և ի՞նչ գործառույթներ էին իրականացնում:
5. Ի՞նչ գիտեք Կիլիկյան Հայաստանի բանակի մասին:
6. Ինչպիսի՞ դատական համակարգ էր գործում Կիլիկիայում, ի՞նչ նշանակություն ուներ Սմբատ սպարապետի «Դատաստանագիրք»-ը :

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Կիլիկիայում բարենպաստ կլիմայական պայմանները հնարավորություն էին տալիս զբաղվելու երկրագործությամբ և անասնապահությամբ: Զարգացած էին նաև արհեստները և առևտուրը: Հողատիրության մի քանի ձևեր կային Կիլիկյան Հայաստանում՝ արքունական, իշխանական, վանքապատկան, համայնական:
2. Գյուղական բնակչության կազմակերպման հիմնական ձևը համյնքն էր, որը կարող էր ընդգրկել մեկ կամ մի քանի գյուղ: Գյուղացին հասարակության մեջ ներկայանում էր համայնքի միջոցով: Այն սոցիալական, հարկային, ռազմավարական և թեմական միավոր էր:
3. Կիլիկյան Հայաստանում գործում էին 10-ից ավել գործակալություններ: Թագավորության հռչակումից հետո վերականգնվեց թագադիր գործակալությունը, որի գործառույթը հանդիսությունների ժամանակ թագավորի գլխին թագ դնելն էր, արքայական նշանները կապելը, կարգ ու կանոնին հետևելը: Պայլը թագավորի առաջին խորհրդականն էր, անչափահաս թագաժառանգի խնամակալը, արքայի բացակայության ժամանակ փոխարինում էր նրան: Սենեսկալն արքունի պալատի կառավարիչն էր, տնօրինում էր արքունի եկամուտները և ծախսերը:Արքունի քաարտուղարությունը գլխավորում էր կանցլերը , ով ղեկավարում էր բանակցությունները օտար երկրների ներկայացուցիչների հետ: Այս պաշտոնը սովորաբար տրվում էր Սսի արքեպիսկոպոսին: Պետության զինված ուժերը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվել էին հետևյալ գործակալությունները՝ սպարապետություն, սպասալարություն, մարաջախտություն: Սպարապետը՝ գունդստաբլը, բանակի գլխավոր հրամանատարն էր, պաշտոնը ժառանգական չէր :Սպասալարը արքունական հեծելազորի հրամանատարն էր, իսկ մարաջախտը բանակի սպառազինության և պարենի մատակարարն էր, սպարապետի անմիջական տեղակալը:

4. Կիլիկյան Հայաստանում գործում էր ճյուղավորված և լավ կազմակերպված դատական համակարգ: Կային հետևյալ դատարանները. արքունի, որի նախագահը թագավորն էր, Սսի արքեպիսկոպոսական, որի նախագահը Սսի արքեպիսկոպոսն էր, ստորին կամ փոքոր, եկեղեցական: Հեթում 1-ինի եղբայր Սմբատ սպարապետը իր կազմած «Դատաստանագրքում» միավորեց հայկական , հունական և խաչակիրների իրավանորմերը և հարմարեցրեց Կիլիկիայում ձևավորված պայմաններին:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Գնահատել գյուղատնտեսության, արհեստագործության և առևտրի դերը տնտեսության զարգացման գործում:
2. Բացատրել, որ արհեստագործության զարգացմանը խթանում էին բազմատեսակ հումքի և օգտակար հանածոների առկայությունը և ներքին ու արտաքին առևտրի աճը: Կիլիկիան Արևելք-Արևմուտք ցամաքային և ծովային տարանցիկ առևտրական ճանապարհների խաչմերուկում էր: Առևտրի զարգացմանը նպաստում էին հայոց թագավորների կողմից եվրոպացի վաճառականներին տրված առևտրական արտոնությունները:Արհեստների և առևտրի զարգացման համար կարևոր էր դրամաշրջանառության աճը : Հիմնական դրամական միավորը արծաթե դրամն էր,որը կոչվում էր թագավորական,այն օգտագործվել է նաև այլ երկրներում:
3. Թվարկել Կիլիկյան Հայաստանի նշանավոր քաղաքները. Սիսը, Տարսոնը, Այասը, Մսիսը, Կոռիկոսը, Ադանան, Անավարզան: Նշել, որ բոլոր քաղաքները ներառված էին արքունական տիրույթների մեջ և կոչվում էին թագավորական քաղաքներ, դրանք կառավարում էին թագավորի նշանակած հատուկ պաշտոնյաները՝ կապիտանները:
4. Արժևորել Կիլիկյան Հայաստանում ձևավորված գործակալությունների դերը պետական կառավարման համակարգում:
5. Բացատրել, որ Կիլիկյան Հայաստանում մշտական բանակի կազմակերպումը սկսվեց դեռևս Ռուբինյան առաջին իշխանների օրոք: Պատերազմի ժամանակ հավաքագրված զորքը կոչվում էր աշխարհազոր: Կանոնավոր բանակի հիմնական կորիզը հեծելազորն էր: Կիլիկիայում կար ասպետի՝ ձիավորի աստիճան: Կիլիկյան Հայաստանում ասպետի աստիճան ստանալու համար պահանջվում էր քննություն հանձնել ձիավարժությունից, նետաձգությունից, նիզակի ու սրի գործածությունից և այլ գիտելիքներ ու հմտություններ ունենալ: Պատերազմի ժամանակ Կիլիկյան Հայաստանը կարող էր ռազմադաշտ դուրս բերել 80-100 հազ. զինվոր: Հայոց բանակում մեծ տեղ ուներ նաև ռազմական նավատորմը:
6. Գնահատել Սմբատ Գունդստաբլի խաղացած դերը միասնական, համապետական օրենսդրություն ստեղծելու գործում:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (4 ժամ)

ԳԼՈՒԽ 1. ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (XV դ. առաջին կես) (3 ժամ)

§ 1 Հայաստանը XV դարում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ վիճակ էր տիրում Հայաստանում օտար տիրապետության շրջանում և որո՞նք են անկախ պետականության կորստի բացասական հետևանքները:
2. Օտար նվաճողներից ո՞ւմ և թուրքմենական ո՞ր ցեղերի կողմից է Հայաստանը ենթարկվել ասպատակությունների XIV դարի վերջին և XV դարում:
3. 1453 թվականից ո՞ր պետությունը դարձավ Հայաստանի ազատագրության հիմնական սպառնալիքը և խոչընդոտը:
4. Ինչո՞ւ Կիլիկիայի կաթողիկոսությունը այլևս ի վիճակի չէր իրականացնելու իր համահայկական դերակատարումը:
5. Ե՞րբ և ո՞ր ժողովում որոշվեց վերականգնել Էջմիածնի կաթողիկոսական Աթոռը, այդ նույն թվականին ո՞վ կաթողիկոս ընտրվեց և հայ ժողովրդի կյանքում ի՞նչ նշանակություն ունեցավ այդ իրադարձությունը:
6. Որո՞նք են ուշ միջնադարի Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. XIV դարի վերջին Հայաստանը ենթարկվել է Լենկ Թեմուրի, իսկ XV դարում թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի ասպատակություններին:
2. 1453 թվականից՝ Բյուզանդիայի կործանումից հետո, Օսմանյան կայսրությունը վերածվեց Հայաստանի ազատագրության հիմնական սպառնալիքի և խոչընդոտի:Կիլիկիայում թագավորական իշխանության վերացումից հետո այնտեղ գտնվող կաթողիկոսական Աթոռը մնաց անպաշտպան:Կտրված լինելով բուն Հայաստանի՝ այն չէր կարող լիարժեքորեն իրականացնել իր համհայկական դերակատարումը:
3. 1441 թվականին Թովմա Մեծոփեցու և Հովհաննես Հերմոնացու նախաձեռնությամբ էջմիածնում գումարվում է ժողով,որտեղ որոշվում է կաթողիկոսականն աթոռը տեղափոխել Էջմիածին և նույն 1441թ կաթողիկոս է ընտրվում Կիրակոս Վիրապեցին,այս իրադարձությունը ոգևորություն և ցնծություն է առաջ բերում հայ ժողովրդի կյանքում:
4. 12-րդ դարի սկզբից Հայոց եկեղեցու նվիրապետական հզոր կառույցներից մեկը Աղթամարի կաթողիկոսությունն էր:այն կարգավորում էր հիմնականում Վասպուրականի հայ բնակչության հոգևոր կյանքը:Հայոց եկեղոցու կորևոր թեմերից էր

Երուսաղեմի հայոց պատրիարքությունը:Այն մեծ դեր էր խաղում Մերձավոր Արևելքում հայ ժողովրդի կրոնական և աշխարհիկ կյանքը կարգավորելու գործում:Աղվանից եկեղեցին միավորում էր Այսրկովկասի արևելյան հատվածի ու հայկական Արցախ և Ուտիք նահանգների քրիստոնյա հայ բնակչությանը: 14-րդ դարի վերջից Աղվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն դարձավ Գանձասարի վանքը: 1461թ Կոստանդնուպոլսում հիմնադրվում է հայոց պատրիարքություն,որը պետք է տնօրիներ հայ համայնքի հոգևոր կյանքը: Էջմիածնում Մայր Աթոռի վերահաստատումից հետո Կիլիկիայի կաթողիկոսությունը շարունակեց իր գոյությունը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ Հայոց անկախ պետականության կորուստը և Հայաստանում օտար տիրապետության հաստատումը ծանր հետևանքներ ունեցան հայ բնակչության բոլոր խավերի համար:Այն հանգեցրեց հայ ավատատերերի՝հողի սեփականության իրավունքի կորստին,խոշոր հարված էր կրթամշակութային համակարգին,ինչպես նաև խոչընդոտ էր հայ հասարակության քաղաքակրթական լիարժեք զարգացմանը:
2. Վերլուծել հայոց անկախ պետականության կորստի և Հայաստանում օտար տիրապետության հաստատման ծանր հետևանքները հայ բնակչության բոլոր խավերի համար: Այն հանգեցրեց հայ ավատատերերի՝հողի սեփականության իրավունքի կորստին,խոշոր հարված էր կրթամշակութային համակարգին,ինչպես նաև խոչընդոտ էր հայ հասարակության քաղաքակրթական լիարժեք զարգացմանը: XIV դարի վերջին Հայաստանը ենթարկվել է Լենկ Թեմուրի, իսկ XV դարում թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի ասպատակություններին:
3. Բացատրել, որ 1441 թվականի Էջմիածնի եկեղեցական մեծ ժողովը գումարվեց Թովմա Մեծոփեցու և Հովհաննես Հերմոնացու նախաձեռնությամբ, քանի որ Ջհանշահի կարգադրությամբ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ժողովականների համար և կաթողիկոս ընտրվեց Կիրակոս Վիրապեցին:Էջմիածինը կրկին դառնում է Հայոց Կաթողիկսության նստավայր:
4. Արժևորել Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռների դերը՝ Աղթամարի կաթողիկոսություն, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, Գանձասարի կաթողիկոսություն, Կ.Պոլսի հայոց պատրիարքություն, Կիլիկիայի:
5. Գնահատել Էջմիածնում կաթողիկոսական աթոռի վերահաստատման դերն ու նշանակությունը:

§ 2. Հայաստանը XVI դարում և XVII դարի առաջին կեսին

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչպե՞ս առաջացան Օսմանյան և Սեֆյան պետությունները:
2. Ինչպիսի՞ն էր քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XVI դարի սկզբին:
3. Որո՞նք էին XVI դարում տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների հետևանքները:
4. Ե՞րբ կնքվեց Ամասիայի պայմանագիրը և ի՞նչ էր նախատեսում:
5. Ո՞ր թվականին կնքված պայմանագրով շահ Աբասն օսմանցիներին զիջեց գրաված տարածքները և ե՞րբ սկսեց զիջած տարածքների վերագրավումը:
6. Ինչո՞ւ շահ Աբասը կազմակերպեց հայ ժողովրդի բռնագաղթը և ո՞րտեղ բնակեցրեց Հայաստանից տեղահանված բնակչությանը:
7. Ինչպե՞ս ավարտվեց թուրք-պարսկական պատերազմը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Օսմանյան պետությունը հիմնադրվել է 1299 թվականին Փոքր Ասիայի արևմտյան մասում: Ակ- կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք Թավրիզը գրավելուց հետո Սեֆյանները 1502թ հիմնադրեցին իրենց պետությունը՝գրավելով Շիրվանը, ամբողջ Իրանը, Հայաստանը և հասան մինչև Բաղդադ:
2. XVI դարի սկզբին թուրքմենական ցեղախմբերի տիրապետությանը Հայաստանում փոխարինելու եկան օսմանյան և սեֆյան հակամարտող պետությունների ծանր ու ավերիչ նոր ժամանակները: Կասպից ծովից հարավ-արևմուտք՝Իրանի Արդեբիլ քաղաքում էր շեյխ Սեֆիի հիմնադրածկրոնական համայնքը: Հոգևոր-ռազմական այդ համայնքը ձեռնամուխ եղավ նվաճում- ների միջոցով հողային նոր տիրույթների ձեռք բերելուն: Ակ-կոյունլուներին պարտության մատնելուց հետո, նրանք գրավեցին Շիրվանը, ամբողջ Իրանը,Հայաստանը և հասան մինչև Բաղդադ: Օգտվելով Բյուզանդիայի թուլացումից՝ օսմաններն աստիճանաբար գրավեցին նորանոր տարածքներ: 1453 թ. նրանք գրավեցին Բյուզանդիայի մայրաքաղաքը և տիրացան կայսրության ողջ տարածքին: Օսմանները գրավեցին Տրապիզոնի կայսրությունը, Կիկլիկիան, ամբողջ Բալկանյան թերա- կղզին,Փոքր Ասիան՝ստեղծելով ընդարձակ կայսրություն: Դրանից հետո սկիզբ առան թուրք-պարսկական պատերազմները՝ Հայաստանում և Մերձավոր Արևելքում գերիշխանություն հաստատելու նպատակով:
3. Օսմանյան սուլթան Սելիմ Ահեղը 1512 թ. մեծ զորքով արշավեց դեպի արևելք՝ կասեցնելու Սեֆյանների հաղթարշավը:Չալդրանի ճակատամարտում պարտության մատնելով շահ Իսմայիլին նա գրավեց Թավրիզը և մեծ թվով գերիներ,արհեստավորներ տեղափոխեց Կ՝Պոլիս: Պատերազմական գործողությունները հիմնականում տեղի էին ունենում Հայաստանի տարածքում: 1550թ պարսիկները խոշոր բանակով արշավեցին Օսմանյան կայսրության դեմ: Այս անգամ ևս պատերազմի թատերաբեմը Հայաստանն էր: Պարսկական բանակն ավերակների վերածեց թուրքերի ճանապարհին ընկած

հայկական գրեթե բոլոր բնակավայրերը: 1555 թ.Ամասիայում Օսմանյան և Սեֆյան տերությունների միջև կնքվեց հաշտության պայմանագիր: Դադարեցվում էին պատերազմական գործողությունները, թուրք-պարսկական սահմանն անցնելու էր Հայաստանով, այն բաժանելով 2 մասի, արևելյան մասը անցնում էր պարսիկներին, իսկ արևմտյանը՝ թուրքերին:

4. 1590 թ. կնքված պայմանագրով շահ Աբասը օսմանցիներին զիջեց գրաված բոլոր տարածքները, այդ թվում՝ Այսրկովկասն ու Ատրպատականը: 1603 թ. շահ Աբասը ձեռնամուխ եղավ օսմանցիներին զիջած տարածքների վերագրավմանը:
5. Հայ բնակչության տեղահանումը սկսվեց 1604 թ. օգոստոսին: Գաղթեցվում էր մոտ 300.000 բնակչություն: Պարսկական զորքը հաշվեհարդար տեսավ Գառնի գյուղի նկատմամբ, որի բնակիչները փորձել էին ընդդիմանալ գաղթի հրամանին: Լուր ստանալով, որ օսմանյան բանակը մտել է Արարատյան դաշտ, շահ Աբասը հրամայում է գաղթեցվող բնակչությանը փոխադրել Արաքսի աջ ափ: Գետանցման ժամանկ մեծ թվով բնակչություն խեղդվում է գետում: Հայերը բնակեցվում են Իրանի տարբեր նահանգներում: Սպահանի մոտ Ջուղայի բնակիչները շուտով հիմնում են Նոր Ջուղա բնակավայրը
6. Թուրք-պարսկական պատերազմներն ավարտվում են 1638 թ., երբ օսմանյան բանակը գրավում է Բաղդադը, որից հետո հաշտություն են առաջարկում պարսիկներին Հայաստանը 1639 թ. Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև կնքված Կասրե-Շիրինի պայմանագրով Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Մեկնաբանել շահ Աբասի հրամանով հայերի վերաբնակեցման հետևանքները:
2. Ցույց տալ քարտեզի վրա պետությունները, որոնց միջև բաժանվեց Հայաստանը 1555 և 1639 թթ՝ մասնավորեցնելով կողմերին անցած հատվածները:
3. Վերլուծել 16-րդ դարում տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների հետևանքները:

§ 3. Հայաստանի ազատագրության համար պայքարի աշխուժացումը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչպիսի՞ բովանդակություն ուներ հայ ազատագրական լեգենդը և ո՞րն էր դրա նշանակությունը:
2. Ինչպե՞ս էին ներկայանում կարա-կոյունլու առաջնորդները հայերի հետ համագործակցելու նպատակով:
3. Ի՞նչ կոչվեցին հայ իշխանական տների ներկայացուցիչները Ջահանշահի կառավարման ժամանակաշրջանում: Ի՞նչ քաղաքականություն էր վարում Ջահանշահը հայերի նկատմամբ
4. Հայոց պետականությունը վերականգնելու ի՞նչ փորձ կատարվեց:
5. Ինչպիսի՞ նոր փուլ ձևավորվեց Հայաստանի ազատագրության պայքարի համար 16-րդ դարում
6. Ովքե՞ր էին կոչվում պարոնտեր: Կառավարման ի՞նչ ձև էր գործում հայկական մելիքություններում:
7. Որո՞նք էին Հայաստանում պահպանված հայկական կիսանկախ իշխանությունները XVII դարում

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայաստան մուտք գործած ցեղախմբերն անզիջում պայքար էին ծավալել միմյանց դեմ՝ փորձելով ամրապնդել իրենց տիրապետությունը երկրում: Նրանք միաժամանակ ստիպված էին լինում համագործակցելու հայ իշխանական տների հետ, ճանաչելու նրանց հողային սեփականատիրական իրավունքները և իրենց ներկայացնելու որպես Հայաստանի թագավոր: Այսպիսի քաղաքականություն էին վարում կարա-կոյունլուների առաջնորդ Կարա-Յուսուֆը, Իսքանդար Կարա-կոյունլուն և այլք:
2. Ջհանշահի կառավարման ժամանակաշրջանում Գեղամա երկրի,Վայոց ձորի, Արցախի, Սյունիքի, Գուգարքի և մի շարք այլ գավառների հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունները և վարչական կառավարումը և կոչվեցին մելիքներ: Ջհանշահը զգալի չափով ապավինում է հայ բնակչության օժանդակությանը, ուստի և նպաստում է հայոց կաթողիկոսարանի վերահաստատմանը Էջմիածնում: Երևանը՝ որպես կուսակալության կենտրոն , սկսեց արագորեն վերելք ապրել:
3. 1465 թվականին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում Սմբատ Արծրունին օծվեց թագավոր, որով փորձ կատարվեց վերականգնել հայոց թագավորությունը Վասպուրականում:
4. Հայաստանը թեև երկար ժամանակ զրկվել էր ազգային պետականությունից, սակայն ազատության հասնելու նրա ձգտումը հայ ժողովրդի մեջ չէր մարել: Հայ ժողովրդի ծանր վիճակը XVI դարում հարկադրում էր ժամանակի հայ գործիչներին ելք որոնելու Հայաստանի ազատագրության համար: Սեփական ուժերի անբավարարության և հակառակորդների հզորության պայմաններում անհանր էր եղած ուժերով ձեռնարկել

այդ ծրագրի իրագործումը: Այս է պատճառը, որ սկսվում է դաշնակիցների որոնումը: 1547 թվականին Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը Էջմիածնում հրավիրում է գաղտնի ժողով, որտեղ որոշվում էր իր գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Եվրոպա: 1549 թ. պատվիրակությունը մեկնում է Եվրոպա, այցելում Վենետիկ, Հռոմ, Գերմանիա, լինում է Լեհաստանում և առանց որևէ հաջողության 1551 թ. վերադառնում է Էջմիածին: 1562 թ. Միքայել Սեբաստացի կաթողիկոսը Սեբաստիա քաղաքում գումարած եկեղեցական գաղտնի ժողովի անունից Աբգար դպիր Թոխատեցու ղեկավարությամբ պատվիրակություն է ուղարկում Վենետիկ: Չնայած երկարամյա դիվանագիտական ջանքերին՝ պատվիրակությունը չի հասնում իր նպատակին:

5. XVII դարում Հայաստանում շարունակում էին պահպանվել հայկական կիսանկախ մի քանի իշխանություններ՝ Արևելյան Հայաստանում այդպիսիք էին Սյունիքի և Արցախի մելիքությունները, իսկ Արևմտյան Հայաստանում Շատախի, Սասունի, Զեյթունի, Մոկսի իշխանությունները (նշել առնվազն երեքը):

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ հայ ժողովրդին կաթոլիկության ընդունման անհրաժեշտությունը ներշնչելու նպատակով ստեղծվեցին ավանդազրույցներ, թե հայոց պետականության վերականգնումն արևմտյան երկրների և մասնավորապես Հռոմի օժանդակությամբ արդեն իսկ վաղմիջնադարյան իրենց «Տեսիլներում» կանխատեսել-գուշակել էին Հայոց եկեղեցու խոշորագույն դեմքեր Գր. Լուսավորիչը, Սբ Ներսես Մեծը, Սբ Սահակ Պարթևը և ուրիշներ: Այս քարոզչությունը հաջողություններ արձանագրեց Կիլիկիայում և Մեծ Հայքում:
2. Մեկնաբանել կարա-կոյունլու առաջնորդների հայերի հետ համագործակցելու և իրենց իշխանությունը երկրում ամրապնդելու նպատակով որպես Հայաստանի թագավորներ՝ Շահ-ի Արման ներկայանալը:
3. Հիմնավորել, որ 1547 թվականին Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի Էջմիածնում, իսկ 1562 թվականին Միքայել Սեբաստացի կաթողիկոսի Սեբաստիա քաղաքում հրավիրած գաղտնի ժողովներով և Աբգար դպիր Թոխատեցու գլխավորությամբ պատվիրակության Վենետիկ ուղևորվելով սկզբնավորվել է Հայաստանի ազատագրության նոր փուլը:
4. Բացատրել, որ հայ կալվածատերերի զգալի մասը սեփական կալվածքներն ու տիրույթների մնացորդները փրկելու նպատակով կամովին հանձնել են եկեղեցուն, և իրենք, ընդունելով հոգևոր կոչումներ, շարունակել են տիրել իրենց կալվածքներին: Այդպիսիններին անվանել են պարոնտեր: Մելիքությունները եղել են ժառանգական: Մահացած մելիքին փոխարինել է ավագ որդին, որին հաստատում էր շահը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ XV-XVII ԴԱՐԵՐՈՒՄ (1 ժամ)

§1.Հայկական գաղթավայրերի առաջացումը : Եվրոպայի և Ասիայի համայնքները

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որո՞նք են գաղութը բնորոշող հատկանիշները
1. Ի՞նչ փուլերի է բաժանվում հայկական գաղութների պատմությունը:
2. Ո՞ր հայկական գաղթավայրերն էին առավել հայտնի Եվրոպայի և Ասիայի երկրներում:
3. Ի՞նչ դեր ուեր Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը, և ինչո՞վ էր զբաղվում Կ.Պոլսի հայ բնակչությունը:
4. Ինչո՞վ է նշանավորվել Վենետիկը հայ իրականության համար:
5. Որո՞նք էին XV-XVII դարերի մշակութային առումով առավել նշանավոր գաղթավայրերը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Հայկական գաղթավայրերի ընդհանուր պատմությունը բաժանվում է երեք փուլի՝ միջին դարեր, երբ գաղութները որպես կանոն օգտվում են ինքնավարությունից և ապրում ինքնամփոփ կյանքով, նոր շրջան, երբ ազատ շուկայական հարաբերությունների զարգացման հետևանքով վերանում են գաղութների ինքնաբավ կյանքն ու առանձնաշնորհումները, երրորդ փուլ, երբ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Մեծ Եղեռնի հետևանքով աշխարհով մեկ ցրված հայությունը ստեղծում է հայկական Սփյուռքը:
2. Հայկական գաղթավայրեր կային Ղրիմում, այս թերակղզում հայերը մշտական բնակություն են հաստատել դեռ IX դարից: Հայերը բնակվում էին Կաֆայում և կազմում մեծամասնություն: Կոստանդնուպոլսում հայ համայնքի կազմում ծանրակշիռ դեր էին կատարում առևտրական և արհեստավորական շերտերը: XVI դարում ձևավորվում է մեծահարուստ չելեբիների դասը, նրանք այն երևելի հարուստներն էին, որոնք զբաղվում էին վաշխառությամբ, ինչպես նաև առևտրով: Լեհաստանում հայկական համայնքներ են ձևավորվել XIII-XIV դդ: Կիլիկիայի հայկական պետության անկումից և Օսմանյան կայսրության կողմից Ղրիմի գրավումից հետո գաղթի նոր ալիք ուղղվեց Լեհաստան: Կամենց-Պոդոլսկում, Լուցկում, Զամոտիեյում, Ստանիսլավում և այլուր ձևավորվեցին հայկական գաղութներ: Իտալիայում հայկական համայնքներ են ձևավորվել XIII- XV դդ Հռոմում, Վենետիկում: Հայերը Նիդերլանդներին ծանոթ են եղել XIV դարից: Հայկական համայնք է ձևավորվում Ամստերդամում, որը գործել է մինչև XVIII դարի վերջը:
3. 1461թ ստեղծվեց Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը, որին ենթարկվում էին Փոքր Ասիայի, Տրապիզոնի և Ղրիմի թեմերը: Կոստանդնուպոլսի հայ համայնքի կազմում ծանրակշիռ դեր էին կատարում առևտրական և արհեստավորական շերտերը: XVI դարում ձևավորվում է մեծահարուստ հայ չելեբիների դասը: Արհեստավորները ընդգրկվեցին էսնաֆությունների մեջ:

4. Իտալիայի ամենախոշոր ու նշանավոր համայնքը Վենետիկ քաղաքն էր:Հայ վաճառականներն ունեին իրենց կենտրոնատեղին «Հայոց տունը»: Այնտեղ է եղել Հայոց փողոցը, իսկ մոտակա կամուրջը կոչվել է Հայոց կամուրջ:
5. XV-XVII դարերի մշակութային առումով առավել նշանավոր գաղթավայրերից էին Կոստանդնուպոլիսը, Վենետիկը, Ամստերդամը, Լվովը, որտեղ կային հայկական տպարաններ:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ գաղութ, գաղթավայր կամ գաղթօջախ հասկացության տակ պատմագիտությունն ընդունում է օտար երկրներում բնակություն հաստատած այն զանգվածներին, որոնք նոր միջավայրում ստեղծում են իրենց համայնքը: Գաղութի առաջացման կարևոր հատկանիշներից է ազգային դպրոցի ու եկեղեցու առկայությունը:
2. Ժամանակագրորեն առանձնացնել հայկական գաղթավայրերի պատմության փուլերը:
3. Հիմնավորել Կոստանդնուպոլսի, Վենետիկի, Ամստերդամի մշակութային առումով առավել նշանավոր գաղթավայրեր լինելը նշելով, որ օրինակ Վենետիկում է սկզբնավորվել հայկական տպագրությունը, Ամստերդամում է հիմնվել առաջին հայկական տպարանը, Կոստանդնուպոլսում հայոց պատրիարքներն էին ծավալում մշակութային լայն գործունեություն (եկեղեցիների և վանքերի կառուցում, տպարանների հիմնում, դպրոցների բացում, գրքերի հրատարակում):
4. Արժևորել հայկական գաղթավայրերի դերն ու նշանակությունը 15-17-րդ դարերում

ԲԱԺԻՆ 4. ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (8 ժամ)
ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ-ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (3 ժամ)

§1. Հայ գրերի գյուտը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ինչու՞ IV դարի վերջում հրատապ խնդիր դարձավ մայրենի գիր ու գրականություն ունենալու հարցը:
2. Ի՞նչ գիտեք Մեսրոպ Մաշտոցի մասին և ինչպե՞ս ստեղծվեցին հայոց գրերը:
3. Ինչպե՞ս հիմք դրվեց հայերեն տառերի գործածությանը:
4. Ո՞րն էր հայոց այբուբենի ստեղծման պատմական նշանակությունը:
5. Որտե՞ղ է բացվել առաջին վարդապետարանը և դրանից հետո որտե՞ղ հիմնվեցին հայոց դպրոցներ:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Մաշտոցը ծնվել է 361 թվականին Տարոն գավառի Հացեկաց գյուղում՝ Վարդանի ընտանիքում: Կրթություն ստանալով նա Տարոնից մեկնում է Մեծ Հայքի թագավորության մայրաքաղաք Վաղարշապատ և Խոսրով IV-ի արքունիքում զինվորական ծառայության անցնում: Փայլուն տիրապետելով մայրենի լեզվին՝ Մաշտոցն արքունիքի միջազգային գրագրություններում կիրառում է նաև հունարենի, ասորերենի, պարսկերենի իմացությունը: Թողնելով ծառայությունը հայոց արքունիքում՝ Մաշտոցը քարոզչական գործունեության նպատակով գնում է Գողթան գավառ և բանավոր թարգմանում Սուրբ Գիրքը:
2. Մեսրոպ Մաշտոցը Գողթան գավառում քարոզչության ժամանակ միտք հղացավ հայոց լեզվի նշանագրերը գտնելու և ամենայն ջանասիրությամբ իր անձը նվիրեց այդ գործին: Վերադառնալով Այրարատ՝ Մաշտոցը իր մտադրության մասին հայտնում է կաթողիկոս Սահակ Պարթևին և ստանում նրա հավանությունը: Վռամշապուհ արքայի հովանավորությամբ խնդրի լուծմանն անմիջապես ձեռնամուխ են լինում Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը: Մաշտոցը մի խումբ աշակերտների հետ մեկնում է Ամիդ, Եդեսիա և Սամոսատ քաղաքները: Վերջապես 405 թ. Ուռհայում (Եդեսիայում) Մաշտոցը ստեղծում է հայոց այբուբենը:
3. Մեսրոպ Մաշտոցը Սամոսատ քաղաքում գտնում է հունարեն գրչության արվեստի գիտակ Հռոփանոսին, ով գեղագրում է 36 նշանագրերը, որոնցից յուրաքանչյուրին Մաշտոցը անուն է տալիս. «Այբ, Բեն, Գիմ, Դա….»: Գրերի ստեղծումից հետո Մաշտոցը և իր աշակերտները ձեռնամուխ եղան Սուրբ Գրքի հայերեն թարգմանությանը, որը կոչվեց Աստվածաշունչ, և հայերեն թարգմանված ու գրված առաջին նախադասությունն էր. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

4. Հայապահպանության գործում մեծ նշանակություն ունեցավ հայկական գրերը: Հայոց գրերը հայ ժողովրդի համար դառնում են գոյատևման, ազգային ինքնության, արժեհամակարգի պահպանման հզոր միջոց բոլոր ժամանակներում:
5. Առաջին վարդապետարանը հիմնադրվեց Վաղարշապատում: Դպրոցներ բացվեցին Արցախում , Սյունիքում, Գողթան գավառում: Ինչպես նաև Արևմտյան Հայաստանում:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ IV դարի վերջում մայրենի լեզվով գիր ու գրականություն ունենալն ազգապահպան խնդիր էր դարձել, քանի որ հայերեն գրավոր լեզուն կենսական անհարաժեշտություն էր թե՛ պետության, թե՛ եկեղեցու և դրանով իսկ ներկա ու ապագա սերունդներին դաստիարակելու և կրթելու համար: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո հայոց լեզվով եկեղեցական գրականության բացակայությունը,առավել ևս Աստվածաշնչի՝ասորերենով և հունարենով ընթերցումները անհանրին էին դարձնում ժողովրդի լայն խավերին ծանոթանալու քրիստոնեական վարդապետությանը:
2. Գնահատել Հայոց այբուբենի ստեղծման պատմական նշանակությունը հայապահպանության և հայ ժողովրդի միասնության գործում:
3. Արժևորել հայոց առաջին վարդապետարանների դերն ու նշանակությունը:

§ 2. Հայ մշակույթի ոսկեդարը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ե՞րբ սկզբնավորվեց հայ թարգմանչական գրականությունը և ի՞նչ նշանաբանով:
2. Անտիկ շրջանի ի՞նչ ստեղծագործություններ թարգմանվեցի:
3. Ինչու՞ է V դարը համարվել Ոսկեդար:
4. Քանի՞ գիքից է կազմված Խորենացու «Հայոց պատմությունը» և ի՞նչ ժամանկագրական սահմաններ է ընդգրկում:
5. Ի՞նչ գիտեք Անանիա Շիրակացու և Դավիթ Անհաղթի մասին:
6. Գիտության ո՞ր ճյուղերն էին զարգացած:
7. Ի՞նչ հարցեր էին արծարծում հայ փիլիսոփաները իրենց ստեղծագործություններում

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. V դարում ձևավորվեց թարգմանչական արվեստը և օտար սեղծագործողների շատ գործեր թարգմանվեցին հայերեն: Ըստ Եղիշեի՝ Հայաստանում լուսավորչական շարժումն ընթանում էր՝ «Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք նշանաբանով»:
2. Թարգմանիչների ջանքերի շնորհիվ հայ ընթերցողը մայրենի լեզվով հաղորդակից դարձավ Արիստոտելի փիլիսոփայական երկերին, Դիոնիսիոս Թրակացու «Քերականությանը» Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությանը» և այլ երկերի:
1. V դարում թարգմանությունների և ինքնուրույն գրականության լեզուն այնքան կատարյալ էր, որ մեսրոպյան հայ գրական ժառանգությունն անվանվեց ոսկեդարյան:
2. V դարի հայ հայտնի պատմիչներն էին՝ Կորյուն վարդապետը, Ագաթանգեղոսը, Ղազար Փրպեցին, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Եզնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը և այլոք:
3. Հայ պատմագրության թագն ու պսակը Խորենացու «Պատմություն Հայոց»-ն է,որը հայ դասական պատմագիտության հիմնասյունն է,որն ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 5-րդ դարի 40-ական թթ: Պատմահոր երկը բաղկված է երեք գրքից. առաջին՝ «Հայ մեծերի ծննդաբանություն», երկրորդը՝ «Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց», երրորդ գիրքը վերնագրված է «Ավարտաբանութիւն մերոց Հայրենեաց»:
4. Անանիա Շիրակացին VII դարի ականավոր բնափիլիսոփա, մաթեմատիկոս,տիեզերագետ, աշ- խարհագետ է: V դարի նշանավոր փիլիսոփա է Դավիթ Անհաղթը, որը իր «Սահմանք Իմաստասիրության» աշխատության մեջ ներկայացնում է, որ նյութական աշխարհը բաղկացած է չորս տարրերից՝ կրակ, օդ, ջուր, հող:
5. Գիտության զարգացած ճյուղերն էին՝ բնափիլիսոփայություն, տիեզերագիտություն, մաթեմատիկան և աշխարհագրությունը: Հայ մեծանուն փիլիսոփա Դավիթ Անհաղթը մեծ տեղ է հատկացրել բնության ճանաչմանը, նա կատարել է նաև գիտությունների դասակարգում՝ ըստ բնագիտության, թվագիտության և աստվածաբանության: Հին

մտածողները կարծում էին, որ նյութական աշխարհի հիմքում ընկած է ին 4 տարրը՝ կրակ, օդ, ջուր, հող:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Գնահատել Մովսես Խորենացու դերը հայ պատմագիտության մեջ:
2. Արժևորել թարգմանչական գրականության դերն ու նշանակությունը:
3. Գնահատել բնական գիտությունների դերը:

§ 3. Մշակութային ձեռքբերումները VI – VIII դարերում

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Որո՞նք են VI-VIII դարերի հայ պատմիչների աշխատությունները:
2. Բնական գիտություններից որո՞նք էին առավել զարգացած:
3. Ո՞վ էր Անանիա Շիրակացին, ի՞նչ դեր է խաղացել նրա «Աշխարհացույց» աշխատությունը:
4. Դվինի 554 թ. եկեղեցական ժողովում ի՞նչ որոշում կայացվեց՝ տոմարական հաշվումների նպատակով:
5. Ի՞նչ աշխատություններ են հայտնի իրավունքի և եկեղեցու կանոնական գրականության մասին:
6. Ի՞նչ հայտնի վաղմիջնադարյան հայկական եկեղեցական շինություններ կան:
7. Ի՞նչ նոր արվեստի ճյուղեր ի հայտ եկան վաղմիջնադարյան Հայաստանում:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. VI-VIII դարերի հայտնի պատմիչներ են՝ Սեբեոսը «Պատմություն», Մովսես Կաղանկատվացին՝ «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Հովհան Մամիկոնյանը՝ «Պատմութիւն Տարոնոյ» Ղևոնդը Վարդապետ՝ «Պատմութիւն» աշխատություններով:
2. Բնական գիտություններից զարգացած էին տիեզերագիտությունը, աշխարհագրությունը, իրավունքը և այլ գիտություններ:
3. Ա. Շիրակացին ժամանակի հայտնի բնափիլիսոփա, մաթեմատիկոս, աշխարհագրագետ, տիեզերագետ, մանկավարժ էր, ով հայտնի է իր «Աշխարհացույց» աշխատությամբ: «Աշխարհացույց»-ում մեծ տեղ է հատկացված Հայաստանի և հարևան երկրների աշխարհագրությանը: Այն նաև հանգամանորեն նկարագրում է Մեծ Հայքի 15 աշխարհները և Փոքր Հայքը:
4. Դվինի 554 թ. եկեղեցական ժողովում տոմարական հաշվումների նպատակով որոշում կայացվեց Բուն հայոց թվականի (Ք.ա 2492թ) կողքին սահմանել Հայոց մեծ թվականը, որի սկիզբ համարվեց 552 թ. հուլիսի 11-ը:
5. Իրավունքի և եկեղեցու կանոնական գրականության մեջ հայտնի են «Գիրք թղթոց»-ը V-IX դդ, «Կանոնագիրք Հայոց»-ը, որը կազմվել է կաթողիկոս Հովհան Օձնեցու ջանքերով 717-728 թթ., դա կանոնական իրավունքի վերաբերյալ առաջին ժողովածուն էր: «Կնիք հավատոյ» ժողովածուն կազմվել է Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ, եկեղեցու հայրերի գրվածքների հատվածներից:
6. Վաղմիջնադարյան հայկական եկեղեցական շինություններ են Ծիծեռնավանքի, Քասաղի, Արցախի Տիգրանակերտի, Վաղարշապատի Մայր տաճարը, որը հիմնադրվել է IV դարի սկզբին, Հռիփսիմեի՝ 618 թ., Գայանեի՝ 631թ., Զվարթնոցի՝ 641-661 թթ., Ավանի 590-ական թթ., Մրենի 613թ., եկեղեցիները:
7. Հայկական ճարտարապետության ու քանդակագործության մեջ նոր երևույթ էր խաչքարը, որի ակունքներում էր կոթողներ կանգնեցնելու վաղեմի ավանդույթը:

Ճարտարապետական մանր կոթողային ձև ներկայացնելով՝ խաչքարը հայ կերպարվեստի յուրահատուկ տեսակ է, այն պատվանդանի վրա կանգնեցված սալաձև կոթող-խաչարձան է: Այն՝ որպես ճարտարապետական զարդ, կարող է նաև ագուցվել եկեղեցու որմի մեջ: Վաղմիջնադարյան Հայաստանում զարգացել են նաև եկեղեցական երգն ու երաժշտությունը: Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Կոմիտաս կաթողիկոսը հորինել են շարականներ՝ եկեղեցական արարողություններին և տոներին երգելու համար:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Արժևորել մշակութային ձեռքբերումները VI – VIII դարերում:
2. Նկարագրել վաղմիջնադարյան արվեստի նշանավոր կոթողները:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X-XIV ԴԱՐԵՐՈՒՄ (3 ժամ)

§ 1. Մշակույթի վերելքը: Կրթությունը:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար

1. Ո՞ր կառույցն էր իրականացնում համահայկական մշակութային կենտրոնի գործառույթը X-XIV դդ.:
2. Ո՞րն էր հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունը X-XIV դդ:
3. Ինչպիսի՞ դպրոցներ էին գործում Հայաստանում X-XIV դդ.: Ինչու՞էին անհրաժեշտ մատենադարանները:
4. Ի՞նչ նշանավոր վարդապետարաններ գիտեք:
5. Միջնադարյան Հայկական համալսարաններից ո՞րն ուներ համահայկական ճանաչում, ե՞րբ է այն հիմնադրվել:
6. Որո՞նք էին նշանավոր ուսումնագիտական կենտրոնները Կիլիկիայում: Ինչո՞վ էր առանձնահատուկ Սկևռայի դպրոցը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. X-XIV դդ. համահայկական մշակութային կենտրոնի գործառույթն իրականացնում էր Հայոց կաթողիկոսությունը:
2. X-XIV դդ. Հայաստանում գործում էին ծխական, վանական և տաճարային դպրոցներ, ինչպես նաև վարդապետարաններ: Ուսումնագիտական գործի արդյունավետ կազմակերպման համար մեծ նշանակություն ուներ անհրաժեշտ գրականության առկայությունը, ուստի դպրոցներին կից գոյություն ունեին մատենադարաններ:
3. Միջնադարյան Հայկական համալսարաններից համահայկական ճանաչում ուներ Գլաձորի համալսարանը, որը հիմնադրվել է 1280-ական թթ նշանավոր մատենագիր Ներսես Մշեցու կողմից, որը Եսայի Նշեցու ռաբունապետության տարիներին հայտնի է դառնում Գլաձորի համալսարան անունով: Համալսարանը ուներ 3 բաժանմունք, դրանք էին՝ գրչության արվեստի, հասարակական ու բնական գիտությունների և երաժշտության:
4. Կիլիկիայում գործող բարձրագույն դպրոցների շարքում մեծ հռչակ էր վայելում Սսի համալսարանը, Հռոմկլայի կաթողիկոսարանին կից դպրոցը, Սկևռայի դպրոցը, որը մեծ դեր է խաղացել: Սկևռան իր գոյությունը պահպանեց շուրջ 200 տարի:Այն հիմնադրել է Ներսես Լամբրոնացին: Սկևռայի համալսարանը մանրանկարչության, երաժշտության և գրչության արվեստի նշանավոր կենտրոն էր:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ X-XIV դդ հայ մշակույթի զարգացման առանձնահատկությունը այն էր, որ վերելքը ոչ միայն հայրենի հողի վրա էր, այլև Հայաստանից դուրս: Առաջավոր

Ասիայի տարբեր շրջաններում հայտնված հայությունը իր ինքնության խնդիրը լուծում էր հայկական մշակույթի պահպանման և զարգացման միջոցով:

2. Թվարկել ժամանակի նշանավոր վարդապետարանները: Նշանավոր վարդապետարաններից էին Սանահինի, Հաղպատի, Անիի, Նոր Գետիկի, Գլաձորի՝ XIII դար, Տաթևի XIV-XV դդ, Ծործորի, Քռնայի, Հռոմկլայի, Սսի, Սկևռայի բարձրագույն դպրոցները:
3. Արժևորել հայոց կաթողիկոսության դերը՝ որպես համահայկական մշակութային կենտրոն:
4. Կարևորել Սկևռայի համալսարանը՝ որպես մանրանկարչության, երաժշտության և գրչության արվեստի կենտրոն:
5. Գնահատել և կարևորել X-XIV դդ համալսարանների դերն ու նշանակությունը:

§ 2-3. Պատմագրություն: Իրավունքը և բնափիլիսոփայությունը:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ գործոններ նպաստեցին հայ պատմագրության վերելքին:
2. Ի՞նչ ուղղություններ են հանդես գալիս հայ պատմագրության մեջ X-XIV դդ.:
3. Ո՞րն էր հայկական առաջին դատաստանագրքի կարևորությունը:
4. Հայ իրավագիտական միտքը ինչպիսի՞ զարգացում է ապրել XII-XIII դարերում:
5. Ի՞նչ բնույթի կանոններ ընդունվեցին 1243 թ. Սսի եկեղեցական ժողովում:
6. Բնագիտական ի՞նչ գիտություններ էին շարունակում զարգանալ փիլիսոփայության շրջանակներում.ընդհանրական ի՞նչ անունով է հայտնի գիտության այդ ճյուղը:
7. Ի՞նչ հայ նշանավոր գործիչներ գիտեք բնափիլիսոփայության բնագավառում, և ի՞նչ աշխատություններով են նրանք հայտնի:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. X-XIV դարերում հայ պատմագրության մեջ հանդես են գալիս հայոց պատմություն, առանձին տարածաշրջաններին նվիրված պատմություն, տիեզերական պատմություն, տարեգրություն (ժամանակագրություն) ուղղությունները և տվյալ ժամանակաշրջանի նշանավոր պատմագիրներն էին. Ստեփանոս Տարոնեցին, Վարդան Արևելցին, Թովմա Արծրունին, Ստեփանոս Օրբելյանը, Մատթեոս Ուռհայեցին, Սմբատ Գունդստաբլը:
2. Հայկական առաջին դատաստանագիրքը ստեղծել է Դավիթ Ալավկաորդին մոտավորապես 1130 թ: Նա հայ իրականության մեջ առաջին անգամ փորձ արեց իրավական մեկ համակարգի մեջ ներառելու եկեղեցական և աշխարհիկ իրավունքը և ստեղծելու միասնական օրենսդրություն:
3. Միջնադարի հայ իրավական մտքի գլուխգործոցը Մխիթար Գոշի Դատաստանագիրքն էր, որը կազմվել էր 1184 թ: Այն շուրջ 700 տարի ծառայեց որպես հասարակության բոլոր բնագավառները կարգավորող աշխատություն: 1265 թ-ին Կիլիկյան Հայաստանում նոր դատաստանագիրք է կազմում Սմբատ Գունդստաբլը, որը բավարար էր Կիլիկյան Հայաստանի հասարակության իրավական հարաբերությունները կարգավորելու համար: Դատաստանագրքի հիմքում դրվում են հայկական սովորութային իրավունքը, «Հայոց կանոնագիրքը», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», ինչպես նաև տեղ են գտել օտարերկրյա ծագում ունեցող մի շարք իրավական նորմեր:
4. 1243 թ. Սսի եկեղեցական ժողովում ընդունվել են հասարակության ամուսնա-ընտանեկան և բարոյական կյանքը կարգավորող 2 տասնյակից ավելի կանոններ:
5. Բնության, շրջակա միջավայրի և մարդու վերաբերյալ գիտելիքները ներառող, սակայն դեռևս լիովին չձևավորված գիտությունները (ֆիզիկա, քիմիա, բժշկություն) շարունակում էին զարգանալ փիլիսոփայության շրջանակներում:Գիտության այդ ճյուղը ստացել է բնափիլիսոփայություն անվանումը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել, որ IX դարի վերջերից սկսած՝ հայ պատմագրության վերելքը պայմանավորված էր ոչ միայն երկրի ներսում, այլև միջազգային հարաբերություններում տեղի ունեցող իրադարձություններով, որոնք առնչվում էին հայ ժողովրդի հետ: X-XIV դդ. հայ պատմագրությունը չէր կարող բավարարվել պատմության շարադրման այն ժանրերով, որոնք ժառանգություն էին մնացել նախորդ շրջանից,ուստի առաջանում էին նաև նոր ժանրեր, որոնց թվում էին տիեզերական պատմությունը և տարեգրությունը:
2. Թվարկել բնափիլիսոփայության բնագավառում հայ նշանավոր գործիչներին և նրանց աշխատությունները:
   - Գրիգոր Մագիստրոս Պահլավունի- «Տարերք Երկրաչափության» աշխատություն,
   - Մխիթար Հերացի - «Ջերմանց մխիթարութեան» աշխատություն
   - Գրիգոր Տաթևացի- «Գիրք հարցմանց», «Ամռան հատոր», «Ձմռան հատոր» աշխատություններ:
   -Վահրամ Ռաբունի, Հովհաննես Երզնկացի, Հովհան Որոտնեցի և այլոք:
3. Գնահատել դատաստանագրքերի ստեղծման կարևորությունը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման առումով:
4. Արժևորել մշակութային նոր ձեռքբերումները X-XIV դարերում:
5. Լրացնել աղյուսակը.

Պատմիչ	Աշխատություն
Հովհաննես Դրասխանակերտցի	«Պատմութիւն Հայոց»
Արիստակես Լաստիվերցի	«Պատմութիւն»
Կիրակոս Գանձակեցի	«Հայոց պատմություն»
Ստեփանոս Տարոնեցի՝Ասողիկ	«Տիեզերական պատմություն»
Վարդան Արևելցի	«Տիեզերական պատմություն»
Թովմա Արծրունի	«Արծրունիների տան պատմություն»
Ստեփանոս Օրբելյան Մատթեոս Ուռհայեցի Սմբատ Գունդստաբլ	«Պատմութիւն նահանգին Սիսական» «Ժամանակագրություն» «Տարեգիրք»

§ 4. Գրականությունը և արվեստը:

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար

1. Մինչև X դարը ինչպե՞ս էր հանդես գալիս գեղարվեստական գրականությունը: Ինչ գիտեք գրականության ժանրերի և դրանց նշանավոր ներկայացուցիչների ու ստեղծագործությունների մասին:
2. Ո՞վ է հայ առակագրության հիմնադիրը, ի՞նչով է հայտնի նա և ուրիշ ի՞նչ առակագիրներ գիտեք X-XIV դդ:
3. IX-X դարերի ո՞ր գրական ստեղծագործության մեջ է ամփոփված հայ ժողովրդի հոգևոր կյանքի կարևոր կողմերն ու բարոյական արժեքները:
4. Ի՞նչ գիտեք X-XIV դդ հայ գեղարվեստական գրականության նշանավոր գրողների և ստեղծագործությունների մասին:
5. Ի՞նչ գործոններ նպաստեցին ճարտարապետության վերելքին:
6. X-XIV դարերի ի՞նչ նշանավոր ճարտարապետներ նշանավոր քաղաքներ, ամրոցներ,վանական համալիրներ գիտեք:
7. Ի՞նչ գիտեք խաչքարերի մասին:
8. X-XIV դարերում նկարչության ո՞ր ուղղություններն էին զարգանում: Այդ ոլորտում ի՞նչ նշանավոր ներկայացուցիչներ գիտեք:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Մինչև 10-րդ դարը գեղարվեստական գրականությունը ինքնուրույն բնագավառ չէր և հանդես էր գալիս եկեղեցական և պատմագիտական գրականության հետ միասնաբար: X դարում գրականությունը ոչ միայն անջատվեց դրանցից և դարձավ մշակույթի ինքնուրույն բնագավառ,այլև առաջացան գրականության տարբեր ժանրեր: Հայ գեղարվեստական գրականության առաջին նշանավոր դեմքը բանաստեղծ Գրիգոր Նարեկացին է 961-1003 թթ: Նրա գլխավոր ստեղծագործությունն է «Մատյան Ողբերգություն» պոեմը, որը հանդես է եկել որպես աղոթագիրք: Հայ գրականության հետագա վերելքը կապված է եղել նշանավոր հասարակական–քաղաքական գործիչ, կաթողիկոս Ներսես Շնորհալու ստեղծագործությունների հետ: Բնաստեղծի ամենանշանավոր ստեղծագործությունը «Ողբ Եդեսիոյ» պոեմն է : Չնայած պոեմի ստեղծման համար առիթ դարձավ Եդեսիա քաղաքի գրավումը մուսուլմանների կողմից, այնուամենայնիվ այնտեղ առաջ են քաշված ցրված հայությանը հայրենիքում համախմբելու, ներքին միասնություն ստեղծելու և օտար նվաճողների դեմ պայքարելու գաղափարները: Հայ միջնադարյան գրականության մեջ աշխարհիկ թեման առավել մեծ տեղ է զբաղեցնում Ֆրիկի ստեղծագործություններում: Նա քննադատում է հասարակության մեջ գոյություն ունեցող անարդարությունը, անհավասարությունը, աշխատավոր ժողովրդի շահագործումը և հարստահարումը:

2. Հայ առակագրության հիմնադիրը Մխիթար Գոշն է,որը հավաքել և գրի է առել շուրջ 190 առակ: Առակների միջոցով աշխատում են դաստիարակել , համախմբել և լուսավորել ժողովրդին: Այնտեղ սովորաբար քննադատվում են հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները՝ անարդարությունը, շահամոլությունը, խարդախությունը, քծնանքը: Հայ առակագրության մյուս ներկայացուցիչը Վարդան Այգեկցին է՝ XII-XIII դդ, նրա առակների հիմնական թեման հասարակական կյանքն է՝ իր դրական և բացասական կողմերով:
3. IX-X դդ ստեղծվեց «Սասնա Ծռեր»ը, այն իր մեջ խտացրել և ամփոփել է հայ ժողովրդի հոգևոր կյանքի կարևորագույն կողմերը ու բարոյական արժեքները: Միջնադարյան հայ մշակույթի ոչ մի ստեղծագործության մեջ այնքան ցայտուն ու խորիմաստ չի դրսևորվել հայ ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, որքան «Սասնա Ծռեր» վիպերգում:
4. Գրիգոր Նարեկացի (961-1003թթ) «Մատյան ողբերգության» պոեմ, Ներսես Շնորհալի (1100-1173թթ) «Ողբ Եդեսիոյ» պոեմ,Ֆրիկ (XIII-XIV դդ):
5. X-XIV դարերում մեծ վերելք էր ապրում ճարտարապետությունը: Այս բնագավառում հատկապես զարգանում են քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը և եկեղեցաշինությունը:
6. Խաչքարային արվեստը հատուկ է հայկական մշակույթին: Խաչքարը քարե սալ է՝ պատվանդանի վրա կանգնեցված, որի վրա պատկերված է քրիստոնեության խորհրդանիշ խաչը: Խաչքարերի վրա թողնվում էին արձանագրություններ, նշում վարպետի անունը, կանգնեցնելու առիթը, ժամանակը և այլ նշումներ: Ժամանակի նշանավոր խաչքարագործ վարպետներ էին Պողոսը և Մոմիկը:
7. X-XIV դարերում զարգանում էին նկարչության ուղղություններից հատկապես մանրանկարչությունը և որմնանկարչությունը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Բացատրել և օրինակներով հիմնավորել, որ հայ ժողովրդի հոգևոր կյանքի կարևոր կողմերն ու բարոյական արժեքները ամփոփված են 9-10-րդ դդ-ում ստեղծված «Սասնա ծռեր» էպոսում:
2. Թվարկել այդ ժամանակաշրջանի նշանավոր մանրանկարիչներին. Գրիգոր Մլիճեցի (Սկևռա), Թորոս Ռոսլին (Հռոմկլա), Սարգիս Պիծակ (Սիս), Մոմիկ (Գլաձոր), Թորոս Տարոնացի (Գլաձոր) և ուրիշներ:
3. Թվարկել ժամանակի նշանավոր վանական համալիրներն ու եկեղեցիները:Վանական համալիրներից հատկապես նշանավոր էին Տաթևը, Սանահինը, Հաղպատը, Սևանը, Սկևռան, Այրիվանքը և Գոշավանքը: X-XIV դարերի նշանավոր ճարտարապետներ էին Տրդատը և Մանուելը: Մանուել ճարտարապետը նախագծել և կառուցել է Աղթամարի Ս.Խաչ եկեղեցին, իակ Ուստան քաղաքում՝ Արծրունիների թագավորական պալատը: Տրդատի նախագծով կառուցվել է Անիի Մայր տաճարը, որի շինարարությունը ավարտվել է 1001թ, և Ս. Գրիգոր Լուսավորիչ զվարթնոցատիպ եկեղեցին:

4. Արժևորել X-XIV դարերում ճարտարապետության և քանդակագործության դերն ու նշանակությունը։
5. Գնահատել X-XIV դարերում հայկական մշակութային ձեռքբերումների դերը հայոց և համաշխարհային պատմության մեջ։

ԳԼՈՒԽ 3. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԴԺՎԱՐԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ (XV-XVII դ. առաջին կես) (2 ժամ)

§ 1. Հայկական տպագրությունը: Կրթությունը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Մշակույթի ո՞ր բնագավառները սկսեցին գերակայել XV-XVII դարերում:
2. Ո՞վ է հայ տպագրության հիմանդիրը, որն էր հայերեն առաջին տպագիր գիրքը ,ե՞րբ և որտե՞ղ է լույս տեսել:
3. Ո՞ր համալսարանները դարձան կրթության կարևոր կենտրոններ XV դարում:
4. Ի՞նչ նշանավոր կրթարաններ էին գործում XVII դարում:
5. XVII դարում ի՞նչ դեր է խաղացել Նոր Ջուղայի դպրոցը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. XV-XVII դարերում սկսեց գերակայել նվազ ծախսատար բնագավառները, ինչպիսիք էին մանրանկարչությունը, գորգագործությունը, փայտագործությունը, որմնանկարչությունը, հայկական տպագրության և կրթության բնագավառները: Հայկական մշակույթի զարգացման համար կարևոր առանձնահատկություն էր հայկական գաղթօջախներում հայ մշակութային արժեքների ստեղծումը բուն Հայաստանի տարածք:
2. Հայ տպագրության հիմնադիրը Հակոբ Մեղապարտն էր: Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը» լույս տեսավ Վենետիկում 1512թ:
3. XVII դարում գործում էին Հարանց անապատի դպրոցը, Երևանի Անանիա առաքյալի անապատը, Հովհաննավանքի, Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցը, Նոր Ջուղայի, և այլ դպրոցներ:
4. XVII դարում դպրոցական կյանքի կարևոր կենտրոն էր նաև Նոր Ջուղան: Խաչատուր Կեսարացու ջանքերով հիմնվում է դպրոց, որն ավելի քան 50 տարի կարևոր դեր է խաղում ջուղահայոց կրթական կյանքում: Դպրոցը տվել է ավելի քան 250 շրջանավարտ՝ Ոսկան Երևանցի, Հակոբ, Ստեփանոս և Ալեքսանդր Ջուղայեցի, Աստվածատուր Համադանցի և ուրիշներ:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Գնահատել Հակոբ Մեղապարտին և արժևորել առաջին տպագիր գիրքը:
2. Թվարկել XV դ. կրթամշակութային նշանավոր կենտրոնները: XV դարում կարևոր կենտրոններ դարձան Տաթևի համալսարանը, որտեղ դասավանդում էր Գրիգոր Տաթևացին, Մեծոփա դպրոցը, որտեղ 1408թ Տաթևից շուրջ 100 ուսանողների հետ միասին Մեծոփա վանք է փոխադրվում Գրիգոր Տաթևացին և նոր շունչ հաղորդում այնտեղ Հովհաննես Մեծոփեցու առաջնորդությամբ գործող նշանավոր դպրոցին: Գրիգոր Տաթևացուց հետո Մեծոփա դպրոցի առաջնորդությունը ստանձնել է Հովհաննես

Մեծոփեցին, Հերմոնի դպրոցը՝ XV դարի առաջին կեսին Սյունիքում՝ Հովհաննես Հերմոնեցու առաջանորդությամբ։ Ղրիմի Անտոնի անապատի հայոց դպրոցը՝ 15-րդ դար, որի ուսուցչապետն էր Սարգիս փիլիսոփան։

3. Գնահատել Տաթևի համալսարանի դերը հայոց կրթամշակութային կյանքում։
4. Արժևորել XV-XVII դդ դպրոցների դերն ու նշանակությունը։

2. Գիտությունը և արվեստը

Թեմատիկ պլան

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային միջին պահանջները ստուգելու համար՝

1. Ի՞նչ աշխատություն է գրել Թովմա Մեծոփեցին և ո՞ր իրադարձություններն են նկարագրված աշխատության մեջ:
2. XVII դ գրված ի՞նչ աշխատություններեն հայտնի, ովքե՞ր են հեղինակները:
3. Գիտության ո՞ր բնագավառներն էին զարգացած XV-XVII դդ և ի՞նչ նշանավոր ներկայացուցիչներ և ստեղծագործություններ կան:
4. Ինչո՞վ է հայտնի Ամիրդովլաթ Ամիասեցին:
5. Արվեստի ո՞ր բնագավառներն էին զարգացում ապրում XV-XVII դարերում:
6. Ի՞նչ ճակատագիր ունեցան Հին Ջուղայի ավելի քան 10 հազար խաչքարերը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է իմանա՝

1. Թովմա Մեծոփեցին հեղինակել է «Պատմութիւն Թամուր Լանկին և յաջորդաց իւրոց» աշխատությունը: Այդտեղ շարադրվել են XIV դարի վերջին քառորդի և XV դարի առաջին կեսին Հայաստանում և հարակից երկրներում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները, Լենկ Թեմուրի և նրա հաջորդների ու թուրքմենական ցեղախմբերի միջև պատերազմական գործողությունները:
2. XVII դ հայտնի աշխատություններն են.
   - Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրություն»-ը,
   - Սիմեոն Լեհացու ուղեգրական տպավորությունների տեսքով հեղինակած աշխատությունը:
3. XV-XVII դդ զարգացած էին պատմագրության, բնագիտության և բժշկության բնագավառները: XV դարի գիտության խոշորագույն ներկայացուցիչ էր Գրիգոր Տաթևացին «Գիրք Հարցմանց» աշխատությամբ, Հակոբ Ղրիմեցին՝ «Մեկնութիւն տոմարի» և «Յաղագս բնութեան», Ամիրդովլաթ Ամասիացին՝ « Անգիտաց անպէտ»:
4. XV դարի նշանավոր գիտնականներից է կենսաբան ու բժիշկ, աստղագետ Ամիրդովլաթ Ամասիացին: Նա դարձել է օսմանյան սուլթանի անձնական բժիշկը: Նրա «Անգիտաց անպէտ» աշխատությունը բնագիտական ու դեղագիտական գիտելիքների շտեմարան է:
5. XV-XVII դդ շարունակել են զարգացում ապրել մանրանկարչությունը, ոսկերչությունը, որմնանկարչությունը, գորգագործական և խաչքարային արվեստը:
6. Հայ բնակչության հետքերը ջնջելու նպատակով ադրբեջանցի ջարդարարների կողմից լիովին ոչնչացվել է համաշխարհային արժեք ունեցող հայ մշակույթի հսկա գանձարանը՝ Հին Ջուղայի ավելի քան 10 հազար խաչքարերը:

Առարկայի չափորոշչային միջին պահանջները կատարելու համար սովորողը պետք է կարողանա՝

1. Արժևորել XV-XVII դդ գիտության և արվեստի գործիչների ստեղծած ժառանգությունը:

2. Կարևորել բնագիտության և բժշկության դերը 15-17 րդ դարերում։
3. Գնահատել գիտության արվեստի դերն ու նշանակությունը հայոց և համաշխարհային մշակութային կյանքում։